«Ավելի լավ զոհերի»
ԽՈՐԱՆԻ ՍՏՎԵՐՆԵՐԸ

Օգնություն
ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՅՍ ԳՈՐԾԸ ՆՎԻՐՎՈՒՄ Է
ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԻՆ ԵՎ ՏԵՐԵՐԻ ՏԻՐՈՋԸ՝
Ի ՇԱՀ
ՆՐԱ ՆՎԻՐՅԱԼ ՍՐԲԵՐԻ, ՈՐՈՆՔ
ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ՈՐԴԵԳՐՈՒԹՅԱՆԸ,
ԵՎ ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ «ՈՐՈՆՔ ԱՄԵՆՈՒՐԵՔ ԿԱՆՉՈՒՄ ԵՆ ՏԻՐՈՋ ԱՆՈՒՆԸ»,
«ՀԱՎԱՏՔԻ ՏԱՆԸ», ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՌԱՉՈՂ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆԸ,
ՈՐ ԵՐԿՆՈՒՄ ԵՎ ՍՊԱՍՈՒՄ Է
ԱՍՏԾՈՒ ՈՐԴԻՆԵՐԻ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆԸ

«Բոլորին լուսավորեմ, թե ի՞նչ է այն խորհրդի տնտեսությունը, որ դարեր շարունակ ծածկված էր Աստծու՝ տիեզերքի արարչի մեջ»։ «Համաձայն իր շնորհի առատության, որ ավելացավ մեր մեջ ամեն իմաստությամբ ու գիտությամբ։ Իր բարեհաճության համաձայն մեզ ճանաչեցրwեց իր կամքի խորհուրդը, որ նախապես նրանով սահմանել էր. որպեսզի ժամանակներն իրենց լրումին հասնեն, որ ամեն բան Քրիստոսի մեջ բովանդակվի»։

Եփ. 3:4,5,9;1:8-10

(առաջին հրատարակությունը՝ 1881 թ-ին)

3126, 11 ԱՆԻ, ԳՅՈՒՄՐԻ
study.b24@gmail.com

ՆԱԽԱԲԱՆ

Այս գրքույկի առաջին հրատարակությունը լույս է տեսել 1881 թվականին, և Տիրոջ օրհնությամբ այն կարծես թե շատ օգտակար է եղել այն դասի համար, որի համար այն հատուկ նախատեսված էր՝ «Թագավորական քահանայության»: Այս դասի անդամներից շատերը խոստովանել են, որ Տիրոջ մատի նման այն իրենց ցույց է տվել Հին Կտակարանի նախատիպերի իմաստը, որը նրանք նախկինում երբեք չէին գնահատել, և որ այդպիսով այն նրանց ուղղորդել է անձնազոհության ճանապարհով՝ ցույց տալով նրանց Սուրբ Գրքի խոսքերի իրական իմաստը. «ձեր մարմինները մատուցեք կենդանի զոհ», «լրացնում եմ Քրիստոսի նեղությունների պակասը», «Եթե համբերենք, նրա հետ էլ կթագավորենք», «Ուրեմն եկեք բանակատեղիից գնանք նրա մոտ ու նրա կրած նախատինքը մեզ վրա վերցնենք», ինչպես նաև Սուրբ Գրքի շատ այլ խոսքեր, որոնք Տիրոջ ժողովրդին կապում են Իր հետ թե՛ այս ժամանակի չարչարանքներով և թե՛ գալիք փառքով:

Հեղինակն ուրախանում է, որ դա իսկապես այդպես է, և աղոթում է՝ խնդրելով Աստվածային օրհնությունն այս նոր հրատարակության համար, որն անհրաժեշտ էր նախկին հրատարակության տպագրական կաղապարների մաշվածության պատճառով, ինչպես նաև դրա ընդհանուր ոճը Սուրբ Գրքի ուսումնասիրությունների շարքին համապատասխանեցնելու ցանկությամբ, քանի որ այն կարելի է համարել այդ աշխատության հինգերորդ հատորի լրացում և շարունակություն՝ առանձնացված հարմարության նպատակով: Բացի այս տպագրական փոփոխություններից, մեկ գլխի ավելացումից և դարձվածաբանական մի քանի փոփոխություններից՝ որոշ կետեր ավելի պարզ դարձնելու նպատակով, այլ փոփոխություններ չկան: Իրոք, ոչ մի կոնկրետ փոփոխություն հնարավոր կամ ցանկալի չէր թվում:

Այստեղ ներկայացված թեմաների ըմբռնումը, կարծես, ուղղորդված էր երկնքից, «ուսուցանված էր Աստծու կողմից» մի ժամանակաշրջանում, երբ լույսը միանգամայն անհրաժեշտ էր Դարերի ծրագրի լիարժեք և հստակ ներկայացման համար: Եվ մենք հավատում ենք, որ նրանք, ովքեր օրհնվել են այս գրքույկի օգնությամբ, ինչպես նաև նրանք, ովքեր դեռ պետք է նույնկերպ օրհնվեն, կարող են իրենց

նույնպես համարել «Աստծու կողմից ուսուցանված», որովհետև պետք է նշել, որ հեղինակը ջանացել է Տիրոջ Խոսքով ապացուցել ամեն մի կետ և կիրառություն, և ինքն իրենից ոչինչ չի սովորեցրել. ինչպես որ նա ստացել է Տիրոջից Իր Խոսքի և Հոգու միջոցով, այնպես էլ նույնը՝ ապացույցներով, ներկայացրել է բոլոր նրանց, ովքեր լսելու ականջ ունեն:

Ուշադիր ուսումնասիրողը կհասկանա, որ այստեղ ներկայացված նախատիպերի ճիշտ կիրառմամբ հաստատվում է Դարերի ամբողջ ծրագիրը՝ նախ Եկեղեցու արդարացումը, սրբացումը և փառավորումը, իսկ հետո՝ երկրի բոլոր ազգերի վերականգնումը, ովքեր կկամենան: Ուրեմն սա ինչպիսի՞ փառահեղ Ավետարանի բանալին է:

Հարգելի՛ ընթերցող, եթե այստեղ ներկայացված հարցերը քեզ որպես ճշմարտություն գրավեն, դրանք անշուշտ քո մեջ եռանդ և նախանձախնդրություն կարթնացնեն՝ զոհաբերելու երկրային շահերը՝ բարձր կոչման մրցանակը ստանալու համար, դառնալու թագավորական քահանաներից մեկը, ով շուտով ընկերակցելու է «մեր դավանանքի մեծ Քահանայապետին»՝ հառաչող ստեղծագործությանն օրհնելու մեծ գործում: Եվ եթե դու օրհնություն ես ստանում այս ճշմարտություններից և տոգորված ես դրանց ոգով, դու կցանկանաս զովացուցիչ ըմպելիքի բաժակը փոխանցել ուրիշներին, ովքեր նույն խթանի կարիքն ունեն՝ վերակենդանացնելու իրենց նվաղած սրտերը: Յուրաքանչյուր ոք, ով ուտում է Տիրոջ սեղանից, արտոնություն ունի մասնակցելու ծառայությանը՝ որպես «Աստծու գործակիցներ»:

Քրիստոնեական սիրով,
Քո եղբայրը և ծառան ի Քրիստոս
Չարլզ Թեյզ Ռասել

Բովանդակություն

ԳԼՈՒԽ I
ՏԻՊԻԿ ԽՈՐԱՆԸ

Բանակ, բանակատեղի/ճամբար - Սրահ (Գավիթ) - Խորան (Վրան) - Պղնձե զոհասեղան (Ողջակեզի Զոհասեղան) - Ավազան - Սեղան - Աշտանակ - Ոսկե զոհասեղան - Քավություն կոչվող տապանակի կափարիչ և տապանակ - Դուռ - Առաջին վարագույր – Երկրորդ վարագույր - Սրանց և իրենց հակատիպերի նշանակությունը:

ԳԼՈՒԽ II
ԻՍՐԱՅԵԼԱՑԻՆԵՐԸ, ՂԵՒՏԱՑԻՆԵՐԸ ԵՒ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Իսրայելացիների, ղևտացիների և քահանաների կողմից դասակարգված մարդկային դասերը, քահանաների օծումը. սովորաբար դիտարկվում է Քահանայապետի «Փառքի և գեղեցկության զգեստների» նշանակությունը՝ նախանշելով Աբրահամի Ուխտը, Օրենքի Ուխտը և Նոր Ուխտը:

ԳԼՈՒԽ III
ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՆՎԻՐԱԳՈՐԾՈՒՄ

Նվիրում Աստծու ծառայությանը - «Հավատարի՛մ եղիր մինչև մահ» - «Սրբագործե՛ք ձեր անձերը» և «Ես կսրբագործեմ ձեզ» - Նվիրագործության զվարակներ ու խոյեր - Նվիրագործության օծման յուղ:

ԳԼՈՒԽ IV
ՔԱՎՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՕՐԸ

Նախատիպի կարգը և դրանց նախատիպային նշանակությունները - Զվարակ - Քահանա - Մուտք Սուրբ տեղ/Սրբարան արյունով - Խունկ, անուշահոտություն և գարշահոտություն - Մուտք Սրբությունների սրբություն - Տիրոջ նոխազը - Քավության նոխազը - Ժողովրդի օրհնությունը:

ԳԼՈՒԽ V

ՔԱՎՈՒԹՅԱՆ ՄԵԿ ԱՅԼ ՏԵՍԱԿ

Քավության զոհաբերությունները՝ վերահաստատված տարբեր մանրամասներով – «Մովսեսն ու Ահարոնը մտան ժողովի վրանը և դուրս գալով՝ օրհնեցին ժողովրդին» - «կհայտնվի առանց մեղքի՝ իրեն սպասողների փրկության համար», «մեկ անգամ մեռնել, և դրանից հետո՝ դատաստան» - Քավության զոհաբերության աստվածային ընդունելիության դրսևորումը:

ԳԼՈՒԽ VI

«ՔԱՎՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ» ՀԱՋՈՐԴՈՂ ՁՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դրանք խորհրդանշում են Հազարամյակի ընթացքի ապաշխարությունները, երդումները, ուխտերը և այլն - ժողովրդի ողջակեզները - խաղաղության զոհերը, հացի ընծաները - հանցանքի զոհերը - տղամարդկանց և կանանց միջև տարբերությունների դադարը՝ ներկայացված նախատիպերում:

ԳԼՈՒԽ VII

«Երինջների մոխիրը շաղ տալով՝ մաքրում են պղծվածների մարմինը»

Քավության օրվա զոհաբերություններից ոչ մեկը - ժողովրդի համար մատուցված հաջորդող զոհաբերություններից ոչ մեկը - այս զոհաբերությամբ ներկայացվող դասը - Պողոս առաքյալը՝ կրտսեր քահանան, որը վկայում է նախատիպի մասին - ժողովրդի մաքրության համար երինջների մոխիրը շաղ տալը տեղի կունենա Հազարամյա դարաշրջանում - ինչպես է իրականանալու մաքրագործումը:

ԳԼՈՒԽ VIII

ԱՅԼ ԿԱՐԵՎՈՐ ՆԱԽԱՏԻՊԵՐ

Գավթի սյուները - Սպիտակ վարագույրները - Արծաթե կեռիկները - Սուրբ տեղի և Սրբություն սրբոցի դռան սյուները - Ոսկե սեղանը - Ոսկե աշտանակը - Խորհրդանշված քահանաները, որոնք խորը բաներ են տեսնում և դրանք չտեսնող ղևտացիները - Ոսկե զոհասեղանը - Ուխտի տապանակը Սրբություն սրբոցում - Դրա պարունակությունը և նշանակությունը - Քավությունը - Երկու քերովբեները – Անարատ քահանան - Այն խորհուրդը, որ ծածկված էր դարեր և սերունդներ շարունակ:

ԱՎԵԼԻ ԼԱՎ ԶՈՀԵՐԻ ԽՈՐԱՆԻ ՍՏՎԵՐՆԵՐԸ

ԳԼՈՒԽ I

ՏԻՊԻԿ ԽՈՐԱՆԸ

Բանակ, բանակատեղի/ճամբար - Սրահ (Գավիթ) - Խորան (Վրան) - Պղնձե զոհասեղան (Ողջակեզի Զոհասեղան) - Ավազան - Սեղան - Աշտանակ - Ոսկե զոհասեղան - Քավություն կոչվող տապանակի կափարիչ և տապանակ - Դուռ - Առաջին վարագույր – Երկրորդ վարագույր - Սրանց և իրենց հակատիպերի նշանակությունը

Պողոս Առաքյալը վստահեցնում է մեզ, որ այն խորանը, որն Աստված պատվիրեց Իսրայելի ժողովրդին կառուցել Սին անապատում, և որի հետ կապված հաստատվեցին նրանց բոլոր կրոնական ծեսերն ու արարողությունները, գալիք բարիքների ստվերն էր (Եբր. 8:5. 10:1, Կող. 2:17)։ Ըստ էության, Իսրայելի ողջ ազգը, ինչպես նաև նրա օրենքները, կրոնական ծեսերն ու արարողությունները խորհրդանշական էին։ Հետևաբար այժմ իրագործվող փրկության ծրագրի և փրկագործության մեր ըմբռնումը, ինչպես նաև դրանց ապագա զարգացումը չեն կարող մեծապես չլուսաբանվել այն «ստվերների» մանրակրկիտ ուսումնասիրությամբ, որոնք իսրայելացիները, մեր շինության համար, ստիպված էին շարունակաբար կրկնել տարեցտարի, մինչև որ Ավետարանական դարաշրջանում հայտնվեցին դրանց հակատիպերը՝

իրականությունները (Ա Պետ. 1:11, Եբր. 10:1–3)։

Մենք սկսեցինք ուսումնասիրել այս թեման ոչ միայն հրեական ձևերի, արարողությունների և պաշտամունքի մասին պատմական գիտելիքներ ձեռք բերելու համար, այլև որպեսզի խրատվենք՝ ստվերի ուսումնասիրության միջոցով էությունը հասկանալով, ինչպես որ Աստված նախատեսել էր դա անել։

Մենք չենք կարող ստվերին բավարար կշիռ ու նշանակություն տալ, մինչև չհասկանանք, թե որքան ուշադրությամբ է Աստված ուղղորդել և տնօրինել դրա բոլոր մասերը։ Նախ, Նա Մովսեսին բարձրացրեց լեռը և ցույց տվեց նրան, թե ինչը ինչպես պետք է անել։ Երկրորդ, Նա հրահանգեց նրան ուշադիր լինել ամեն մանրուքի նկատմամբ. «Նայի՛ր, որ լեռան վրա քեզ ցույց տրված օրինակի պես շինես» (Եբր. 8:5, Ելք 25:40)։ Դա վերաբերում էր նաև ծառայության բոլոր նրբություններին. յուրաքանչյուր մանրուք պետք է կատարվեր ճշգրիտ կերպով, քանի որ այն պատկերում էր առավել մեծ ու կարևոր բան, որը պետք է տեղի ունենար հետո։ Եվ որպեսզի այս բոլոր ստվերները ճշգրիտ կերպով կատարվեին, և ժողովուրդն էլ անհոգ չդառնար, ցանկացած խախտման համար սահմանված պատիժը մահն էր։ Օրինակների համար տե՛ս Ելք 28:43, Թվ. 4:15.20, 17:13; Դ Թագ. 6:6,7, Ղևտ. 10:1.2։

«Ստվերի» ստեղծման հանդեպ Աստծու հոգածության գիտակցումը պետք է ոչ միայն վստահություն ներշնչի մեզ դրա ճշմարտացիության հարցում, որ դրա ոչ մի կետ կամ մի փոքր նշանագիր անգամ չի անցնի, մինչև որ ամեն ինչ չիրականանա (Մատթ. 5:18), այլև մեր մեջ պետք է արթնացնի այնքան մեծ հետաքրքրություն Աստծու ծրագրի հանդեպ, որ մղի մեզ մանրակրկիտ ուսումնասիրելու և ուշադիր փնտրելու այդ ստվերների իմաստը։ Եվ սա, Աստծու խոստացած օրհնությամբ, մենք այժմ մտադիր ենք անել՝ վստահ լինելով, որ նրանցից, ովքեր իսկապես նվիրված են Աստծուն՝ Նրա զավակներից, որ ծնվել են Նրա Հոգուց, «ով փնտրում է, գտնում է, ով բախում է, նրան բացվում է»։

Խորանի կառուցումը

Խորանի կառուցման վերաբերյալ Մովսեսին տրված հրահանգները կարելի է գտնել Ելք 25-27-ում, իսկ գործի կատարման պատմությունը՝ Ելք 35-40-ում։ Համառոտ կարող ենք ասել, որ խորանը մի տուն էր՝ կառուցված սատիմի (ակացիա) փայտյա տախտակներից՝ «պատված»

կամ զարդարված ոսկով, որոնց ծայրերն արծաթյա խարիսխների մեջ էին դրված և նույն փայտյա գերաններով ամուր ամրացված, որոնք նույնպես պատված էին ոսկով։

Այս կառույցն ուներ 15 ոտնաչափ լայնություն, 15 ոտնաչափ բարձրություն և 45 կանգուն երկարություն, և բաց էր առջևի կամ արևելյան կողմից։ Այն ծածկված էր մեծ սպիտակ կտավով, որի վրա հյուսված էին քերովբեների՝ կապույտ, մանուշակագույն և վառ կարմիր գույնի պատկերներ։ Կառույցի առջևի կամ բաց մասը ծածկված էր ծածկոցի գործվածքին նման կտորով, որը կոչվում էր «դուռ» կամ առաջին վարագույր։ Նույն գործվածքից մեկ այլ կտոր քերովբեների պատկերներով, որը կոչվում էր «Վարագույր» (կամ երկրորդ վարագույր), կախված էր խորանը երկու սենյակի բաժանելու համար։ Առաջին կամ ավելի մեծ սենյակը՝ 15 ոտնաչափ լայնությամբ և 30 ոտնաչափ երկարությամբ, կոչվում էր «Սուրբ»*։ Երկրորդ կամ հետևի սենյակը՝ 15 ոտնաչափ լայնությամբ և 15 ոտնաչափ երկարությամբ, կոչվում էր «Սրբարան»։ Այս երկու սենյակները կազմում էին բուն խորանը. և դրանց վրա վրան էր կանգնեցված՝ ապաստանի համար։ Այն պատրաստված էր քաշմիրի կտորից կամ այծի մազից ծածկոցից, կարմիր ներկված խոյի կաշվից և այծի կաշվից (սխալ թարգմանվում է որպես փորսուղի կաշի)։

---

* Անգլերեն թարգմանությունը հաճախ, թեև սխալ, այդ վայրն անվանում է «սուրբ վայր», և նման դեպքերում «վայր» բառը շեղագիր է լինում, ինչը ցույց է տալիս, որ այն ավելացվել է թարգմանիչների կողմից, ինչպես օրինակ Ելք 26:33։ Այս սխալը բավականին շփոթեցնող է, քանի որ «սրահն» էր կոչվում «սուրբ վայր»։(հայերեն Աստվածաշնչում այն թարգմանվել է որպես սրբություն)։Երբ վայրը շեղագիր չէ, ապա միշտ նկատի է առնվում «սրահը»։ Տես Ղևտ. 14:13 և 6:27։ Որոշ դեպքերում «Սուրբ» է կոչվում «ժողովի վրանը»։

«Սրբությունների սրբությունը» կամ «Սրբարանը» երբեմն անվանում են նաև «Սուրբ վայր»՝ վայրը շեղագիր։ Օրինակ՝ Ղևտ. 16:17, 20, 23։ Այս սենյակների մասին խոսելիս՝ դրանք առանձին-առանձին կնշենք որպես «սրահ», «սուրբ վայր» և «սրբությունների սրբություն»։

Այս տիպիկ պատկերների նկատմամբ քրիստոնյաների հետաքրքրության և Ղևտական գրքի թարգմանիչների կողմից միատեսակ ճշգրտության անհրաժեշտության բացակայությունը թերևս բազմազան թարգմանությունների պատճառ են դարձել, որոնք մեծապես նպաստում են ուսումնասիրողների շփոթությանը։

Սուրբ սրահ կամ սուրբ վայր

Խորանը շրջապատված էր բակով կամ «սրահով», որի հետնամասում էր գտնում այն: 75 ոտնաչափ լայնությամբ և 150 ոտնաչափ երկարությամբ այս սրահը կազմված էր կտավից վարագույրների ցանկապատից՝ կախված արծաթե կեռիկներից՝ ամրացված 7 1/2 ոտնաչափ բարձրությամբ փայտե սյուների գագաթներին, որոնք դրված էին ծանր պղնձե (սխալ թարգմանված որպես արույր) խարիսխների մեջ և ամրացված պարաններով ու ամրակներով, ինչպես խորանը ծածկող վրանը: Այս ողջ շրջափակը սուրբ հողի վրա էր, ուստի այն կոչվում էր «Սուրբ վայր» և նաև «խորանի սրահ»: Նրա բացվածքը, ինչպես խորանի դուռը, ուղղված էր դեպի արևելք և կոչվում էր «Դուռ»: Այս «Դուռը» պատրաստված էր կապույտ, ծիրանագույն և կրկնակի կարմիր մանած նուրբ կտավից:

Հարկ է նշել, որ երեք մուտքերը՝ «դուռը» դեպի «Սրահ», «դուռը» դեպի «Սուրբ վայր» և «վարագույրը» դեպի «Սրբարան», նույն նյութից և նույն գույնի էին: Խորանից և նրա «սրահից» դուրս Իսրայելի «բանակատեղին» էր, որ բոլոր կողմերից շրջապատում էր այն հարգալից հեռավորության վրա:



ՊՂՆՁԵ ԶՈՀԱՍԵՂԱՆ

Կահկարասի

«Սրահի» կահկարասին բաղկացած էր միայն երկու հիմնական մասից՝ «պղնձե զոհասեղանից» և «ավազանից»՝ համապատասխան պարագաներով:

Դռնից ներս, հենց դրա դիմաց, կանգնած էր «Պղնձե զոհասեղանը»: 7 1/2 ոտնաչափ մակերեսով և 4 1/2 ոտնաչափ բարձրությամբ այս զոհասեղանը պատրաստված էր փայտից և պատված էր պղնձով:

Դրա վրա դրված էին տարբեր սպասքներ՝ բուրվառ կոչվող կրակաման՝ կրակը «Խնկարկության սեղան» տեղափոխելու համար, արյունը լցնելու համար կոնքեր, մսահաններ, թիակներ և այլն։

ԱՎԱԶԱՆ

Հաջորդն «ավազանն» էր՝ «պղնձե զոհասեղանի» և խորանի դռան միջև։ Այն պատրաստված էր հղկված պղնձից և ծառայում էր որպես ջրի տարա; Քահանաները խորան մտնելուց առաջ լվացվում էին դրա մեջ։

Խորանի կահկարասին բաղկացած էր «սեղանից», «աշտանակից» և «խնկարկության սեղանից»՝ «Սուրբ վայրում», և «վկայության տապանակից»՝ «Սրբարանում»։

ԱՌԱՋԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՑԻ ՍԵՂԱՆ

Խորանի ներսում՝ առաջին սենյակում՝ «Սուրբ վայրում», աջ (հյուսիսային) կողմում դրված էր «Առաջավորության հացի» սեղանը. փայտե սեղան՝ պատված ոսկով; Նրա վրա երկու շարքով բաղարջ հացի տասներկու շոթ էր դրված, և յուրաքանչյուր շարքի վրա՝ կնդրուկ (Ղևտ. 24:6, 7):

Այս հացը վայել էր ուտել միայն քահանաներին. այն սուրբ էր և թարմացվում էր ամեն յոթերորդ օրը կամ շաբաթ օրը:

ՈՍԿԵ ԱՇՏԱՆԱԿ

«Առաջավորաց հացի սեղանի» դիմաց կանգնած էր մաքուր ոսկուց պատրաստված «աշտանակ»՝ դրվագված, որ ուներ յոթ ճյուղ և յուրաքանչյուր ճյուղում մեկ կանթեղ: Սա «Սուրբ վայրի» միակ լուսավորությունն էր, քանի որ, ինչպես արդեն տեսանք, բնական լույսը փակված էր պատերով և վարագույրներով, և լուսամուտներ չկային: Յոթ կանթեղների մասին հոգ էր տանում, մաքրում, յուղով լցնում և այլն, հենց քահանայապետը, [T17], որն այդ ժամանակ պետք է խունկ մատուցեր ոսկե զոհասեղանի վրա:

ՈՍԿԵ ԶՈՀԱՍԵՂԱՆ

ԽՆԿԱՐԿՈՒԹՅԱՆ ՍԵՂԱՆ

Հաջորդիվ՝ «Վարագույրին» մոտ կանգնած էր փայտից պատրաստված մի փոքրիկ զոհասեղան՝ պատված ոսկով, որը կոչվում էր «Ոսկե զոհասեղան» կամ «Խնկարկության սեղան»: Դրա վրա ոչ մի կրակ չկար, բացի այն կրակից, որը քահանաները բուրվառներով բերում էին և դնում այդ «Ոսկե զոհասեղանի» վերին մասում, հետո խունկը փշրում դրա վրա, որպեսզի այն բուրավետ ծուխ կամ բուրմունք արձակի, որը լցվելով «Սուրբ վայրը»՝ անցնում էր նաև «երկրորդ վարագույրից» և ներթափանցում Սրբարան կամ Սրբություն սրբոց:

ՎԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՊԱՆԱԿ

«Վարագույրից» այն կողմ՝ «Սրբարանում», միայն մեկ կահավորանք կար՝ «Տապանակը»։ Դա ոսկով պատված մի ուղղանկյուն փայտե տուփ էր և ուներ մաքուր ոսկուց պատրաստված կափարիչ, որը կոչվում էր «Քավությունչ»։ Դրա վրա (նույն կափարիչից) երկու ոսկյա քերովբեներ էին դրվագված։ Այս «Տապանակի» ներսում (կափարիչի տակ) դրված էին ոսկե սափորը՝ մանանայով, Ահարոնի ծաղկած գավազանը և Օրենքի երկու տախտակները (Եբր. 9:4)։ Կափարիչի վրա գերբնական լույս էր հայտնվում քերովբեների միջև ընկած հատվածում՝ խորհրդանշելով Աստվածային ներկայությունը։ Դա միակ լույսն էր Սրբարանում։

Նկատելի է, որ խորանի ներսի ողջ կահկարասին ոսկուց էր կամ պատված էր ոսկով, մինչդեռ «սրահում» ամեն ինչ պղնձից էր։ Կարծում ենք, որ այս մետաղներով պատված իրերի հիմքը հանդիսացող փայտն օգտագործվում էր, որ իրերն ավելի թեթև և ավելի հեշտ տեղափոխելի լինեին, քան եթե դրանք ամուր մետաղից պատրաստված լինեին։ Սա կարևոր նկատառում էր ճամփորդության ժամանակ։ Տաճարի անոթները, որոնք ներկայացնում էին նույն իրերը, պատրաստված էին ամուր մետաղից (Գ Թագ. 7:47-50)։ Կարծում ենք, որ այս երկու մետաղները՝ ոսկին և պղինձը, օգտագործվում էին երկու տարբեր բնություններ ներկայացնելու համար. պղինձը ներկայացնում էր մարդկային բնությունն իր կատարելության մեջ, որը մի փոքր ավելի ցածր էր, քան հրեշտակայինը, իսկ ոսկին՝ աստվածային բնությունը, որը շատ ավելի բարձր է հրեշտակներից, իշխանություններից և զորություններից։ Ինչպես ոսկին և պղինձը արտաքինով նման են միմյանց, բայց որակով տարբեր են, այնպես էլ մարդկային բնությունն աստվածայինի պատկերն ու նմանությունն է՝ հարմարեցված երկրային պայմաններին։ Նկատենք, որ այս դասավորությունը՝ տարբերակված և հստակորեն բաժանված երեք ընդհանուր բաժինների, ներկայացնում է քավությամբ օրհնված երեք տարբեր դասեր, իսկ Տապանակի երկու մասերը ներկայացնում են այս դասերից որևէ մեկի երկու վիճակները։

Բանակատեղի, Սրահ և Խորան

«Բանակատեղին» ներկայացնում էր մարդկության աշխարհի վիճակը, որ թաղված էր մեղքի մեջ, քավության կարիք ուներ և

դրան ու իր օրհնություններին էր ձգտում՝ որքան էլ անորոշ կերպով վերլուծեր իր ցանկություններն ու հեծությունները։ Իբրև նախատիպ՝ «բանակատեղին» Իսրայելի ողջ ժողովուրդն էր, որը բոլոր սուրբ բաներից բաժանված էր սպիտակ կտավից պատրաստված վարագույրով, որը ներսում գտնվողներին ներկայացնում էր հավատքի պատը, իսկ դրսում գտնվողներին՝ անհավատության պատը, և որը փակում էր նրանց տեսադաշտը և մուտքը դեպի ներսում գտնվող սուրբ բաները։ «Սուրբ վայր» կամ «Սրահ» կարելի էր մտնել միայն մեկ դռնով՝ այսպիսով վկայելով, որ դեպի Աստված միայն մեկ ճանապարհ կա՝ մեկ «դուռ»՝ Հիսուսը։ «Ես եմ ճանապարհը… ոչ ոք Հոր մոտ չի գա, եթե ոչ իմ միջոցով»։ «Ես եմ դուռը» (Հովհ. 14։6; 10։9)։

«Սրահը» արդարացման վիճակն էր, ուր կարելի էր մտնել Քրիստոսի՝ «դռան» հանդեպ հավատքի միջոցով։ Քավության օրը միայն ղևտացիներին (որ ներկայացնում էին տիպիկ արդարացված հավատացյալներին) էր թույլատրված մտնել այս «սրահը»։ Նրանք իրավունք ունեին մոտենալ «պղնձե զոհասեղանին» ու «ավազանին» և արարողություններ կատարել «սրահում», բայց իրավունք չունեին, ինչպես սովորական ղևտացիները (հավատացյալները), մտնել Խորան և նույնիսկ նայել դրան (Թվ. 4։19, 20)։ «Սրահում» ամեն ինչ պղնձից էր՝ ցույց տալու համար, որ այնտեղ գտնվող դասը արդարացված մարդիկ էին։ «Սրահը» չէր արտացոլում Ավետարանի դարաշրջանի հոգևոր դասի վիճակը, թեև քահանաները, զոհաբերություններ անելով և լվացվելով, նույնպես օգտագործում էին այն։

«Խորանը» որը բաղկացած էր երկու մասից, ներկայացնում էր մարդկային բնությունից հոգևոր բնության անցնող բոլոր մարդկանց երկու վիճակները։ Առաջին սենյակը՝ «Սուրբ վայրը», ներկայացնում էր բոլոր նրանց վիճակը, ովքեր (ինչպես ղևտացիները՝ արդարացված հավատացյալները) մահվան հանձնեցին իրենց մարդկային բնությունը՝ աստվածային բնությանը հաղորդակից դառնալու համար (Բ Պետ. 1։4)՝ լինելով Հոգուց ծնված։ Դրա երկրորդ սենյակը՝ «Սրբություն սրբոցը», որ գտնվում էր «Վարագույրից» (մահվանից) այն կողմ, ներկայացնում էր հավատարիմ «հաղթողների» վիճակը, որոնք հասնելու էին Աստվածային բնությանը։ Նրանք, ավարտելով մահվանն իրենց նվիրաբերումը, ամբողջովին փոխվելու էին, մեռելներից ծնվելու էին Առաջին Հարության ժամանակ և ձեռք էին բերելու աստվածային բնություն և կազմություն։ Ոչ մի մարդ արարած, որքան էլ հավատքով

լի լինի, որքան էլ մաքրված լինի բոլոր մեղքերից, և Աստծու աչքում ազատորեն արդարացված և կատարյալների շարքում դասված լինի, չի կարող որևէ տեղ կամ արտոնություն ունենալ Խորանի և Տաճարի ներսում ներկայացված հոգևոր բաներում: Նա նույնիսկ չի կարող նայել հոգևոր բաներին՝ դրանք գնահատելու իմաստով: Բայց Ավետարանական դարաշրջանում նման մարդիկ «կանչված են» իրենց մարդկային բնությունը նվիրաբերելու և զոհաբերելու Աստծու ծառայությանը և դրա փոխարեն ժառանգելու հոգևոր բնություն՝ որպես Քրիստոսի Մարմնի անդամներ: «Բայց ոչ հոգևոր մարդը չի ընդունում այն, ինչ Աստծու Հոգուց է, որովհետև... չի էլ կարող ճանաչել, որովհետև դրանք հոգևոր կերպով են քննվում» (Ա Կորնթ. 2:14):

Այն փաստը, որ Խորանի բոլոր իրերը պատրաստված էին ոսկուց՝ ներկայացնելով Աստվածային բնությունը, ենթադրում է, որ այն ներկայացնում էր միայն նրանց վիճակը, ովքեր կանչված էին Աստվածային բնությանը: Ղևտացիներից միայն նրանք, ովքեր նվիրաբերված էին զոհաբերության գործին (քահանաները), մուտք ունեին Խորան, այնպես որ Խորանում ներկայացված աստվածային վիճակների մեջ մտնում են միայն հավատքի տան այն անդամները, որոնք նվիրաբերված են զոհաբերության, նույնիսկ մահվան:

Միայն հավատքով կարելի է մտնել «Սրահի»՝ մարդու արդարացված վիճակի մեջ, բայց թեև պետք է պահպանենք արդարացնող հավատքը, սակայն պետք է ավելին անենք, եթե ցանկանում ենք զգալ բնության փոփոխությունը և դառնալ «նոր արարածներ», «երկնային կոչման մասնակիցներ», «աստվածային բնության հաղորդակիցներ»: «Սուրբ վայր» մտնելն այսպիսով ենթադրում է ամբողջական նվիրում Տիրոջ ծառայությանը, հոգու ծնունդ և մեկնարկ աստվածային բնության վարձատրության համար մրցավազքում, որի պայմաններն են հավատարմությունը մեր ուխտին, արդարացված մարմնի խաչելությունը, մեր մարդկային կամքի և մարմնի նվիրաբերումն Աստծուն իբրև կենդանի զոհ՝ այլևս ոչ թե փնտրելով մարդկային հաճույքներ, պատիվ, գովասանք և այլն, այլ մեռած լինելով դրանց համար և կենդանի լինելով երկնային մղումներով: Սակայն այս վիճակին նույնպես մենք գալիս ենք մեր Տիրոջ՝ Քրիստոս Հիսուսի միջոցով, ով ոչ միայն մեզ համար բացեց արդարացման «դուռը» Իր Արյան հանդեպ հավատքի միջոցով, այլ նաև բացեց «դուռը» (առաջին վարագույրը) դեպի Խորան՝ «նոր կենսակերպ»՝ որպես հոգևոր էակներ

զոհաբերելով մեր արդարացված մարմինը՝ երկրորդ վարագույրով և դրանից այն կողմ։

Այսպիսով, Խորանի երկու սենյակները՝ «Սուրբ վայրը» և «Սրբարանը», ներկայացնում էին նոր կյանքի երկու փուլերը, որոնցում մենք ծնվել ենք Սուրբ Հոգուց։

«Սուրբ վայրը» ներկայացնում էր Ճշմարտության Խոսքով Աստծուց ծնվածների ներկա վիճակը (Հակ. 1:18)։ Նրանք, որպես երկնային «նոր արարածներ», թեև դեռևս «մարմնի մեջ են», սակայն ունեն իրենց իրական (ներքին) կյանքը և Աստծու հետ քայլում են նվիրաբերման առաջին վարագույրից ներս և աշխարհի և չնվիրաբերված հավատացյալների մտավոր տեսադաշտից դուրս։ Նրանք վայելում են «ոսկե աշտանակի» ներքին լույսը, մինչդեռ մյուսները «արտաքին խավարի» մեջ են։ Նրանք ուտում են հատուկ հոգևոր կերակուր, որը ներկայացված է «ներկայության [բաղարջ] հացով», և խունկ մատուցում ոսկե զոհասեղանի վրա՝ ընդունելի Քրիստոս Հիսուսի միջոցով։

«Սրբարանը» ներկայացնում է այն նոր արարածների կատարյալ վիճակը, ովքեր հավատարիմ լինելով մինչև մահ՝ կստանան մեր բարձր կոչման մեծ վարձատրությունը՝ բաժին ունենալով առաջին հարության մեջ (Հայտ. 20.6)։ Այնուհետև երկու վարագույրներից՝ մարմնավոր մտքից և մարմնավոր մարմնից դուրս նրանք կունենան փառահեղ հոգևոր մարմին և հոգևոր միտք։ Վարագույրից այն կողմ նրանք նման կլինեն իրենց Առաջնորդին և Նախակարապետին, որը մեզ համար նոր ու կենդանի ճանապարհ բացեց կամ նոր կենսակերպ տվեց (Եբր. 10.20; Ա Հովհ.3.2)։

Հոգևոր մտածողությամբ էակը «Սուրբ վայրում» վարագույրի միջով հավատքով նայում է դեպի «Սրբարանը»՝ նշմարելով փառքը, պատիվը և անմահությունը մարմնից դուրս, որի հույսը հոգու համար հաստատուն և անշարժ խարիսխ է, որ թափանցում է վարագույրից ներս (Եբր. 6.19; 10.20)։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ հավատքով արդարացումը՝ մեր առաջին քայլը դեպի սրբություն, բերում է մեզ «Աստծու հետ խաղաղություն մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով» (Հռոմ. 5:1)։ Երբ մեր մեղքերը ներվում են կամ ծածկվում Քրիստոսի արդարությամբ, մենք մեկ քայլ ավելի մոտ ենք լինում Աստծուն, բայց դեռ մարդ

ենք «Սրահում»: Եթե ցանկանում ենք հասնել այն բարձր կոչման վարձատրությանը, որն Աստծունն է՝ Քրիստոս Հիսուսով, և «Սուրբ վայրով» մտնել «Սրբարան», մենք պետք է գնանք

Հիսուսի հետքերով,

Որ մեր առաջնորդն ու Գլուխն է, «մեր հավատքի Քահանայապետը» [այսինքն՝ մեր քահանայական կարգի Քահանայապետը], թագավորական քահանայություն (Եբր. 3.1, Ա Պետ. 2.9)։

(1) Քրիստոսի քավիչ զոհաբերության հանդեպ հավատքով՝ ներկայացված պղնձե զոհասեղանին, մենք «Դռնով» մտնում ենք «Սրահ»՝ հետևում թողնելով անհավատության և մեղքի վարագույրը։ Մեր Տեր Հիսուսը երբեք չգնաց այս քայլին, քանի որ լինելով ոչ թե Ադամի ցեղից, այլ լինելով սուրբ, անվնաս, մեղավորներից զատված՝ Նա երբեք էլ դուրս չէր Սրահի վիճակից։

(2) Հրաժարվելով մեր արդարացված մարդկային կամքից, ինչպես նաև մեր բոլոր մարդկային ձգտումներից ու հույսերից՝ մենք անցնում ենք առաջին կամ մարդկային մտածողության վարագույրից՝ համարելով մարդկային կամքը մեռած՝ հետայդու խորհելով ոչ թե դրա, այլ միայն Աստծու կամքի մասին: Մենք այժմ դառնում ենք «նոր արարածներ» «Սուրբ վայրում»՝ առաջինը «երկնայինների» կամ սուրբերի մեջ (Եփես. 2:6-Դիագլոտ), և սկսում ենք լուսավորվել «ոսկե աշտանակով» (Աստծու Խոսքով), ինչ վերաբերում է հոգևոր բաներին՝ «Աստծու խորք»-ին, և ամեն օր թարմանալ ու զորանալ ճշմարտությամբ՝ ներկայացված «առաջավորության հացի» տեսքով, որ միայն քահանաներին էր թույլատրված ուտել (Մատթ. 12:4): Եվ այսպես լուսավորված ու զորացած՝ մենք պետք է ամենօրյա զոհեր մատուցենք «ոսկե զոհասեղանի վրա»՝ ընդունելի Աստծուն Հիսուս Քրիստոսի միջոցով, որն անուշ բուրմունք է մեր Հոր համար (Ա Պետ. 2:5)*։

---

*Այս տեքստում «հոգևոր» բառը բաց է թողնված ամենահին հունարեն՝ Սինայական ձեռագրից Greek MS՝ ակնհայտ համապատասխանությամբ: Զոհաբերվում են ոչ թե հոգևոր, այլ մարդու իրավունքները, արտոնությունները, կյանքը և այլն։

Այսպիսով, բոլոր սրբերը, բոլոր նվիրագործվածները գտնվում են «երկնային» կամ «սուրբ» վիճակում այժմ՝ «նստած [հանգիստ և հաղորդության մեջ] Քրիստոսի հետ այս երկնային վայրերից [առաջինում]», սակայն դեռ չեն մտել «Սրբություն սրբոցը»: Նախ պետք է անցնել մեկ այլ վարագույրով: Ինչպես նախորդ վարագույրից անցնելը նշանակում էր ՄԱՐԴՈՒ կամքի մահ, այնպես էլ երկրորդ վարագույրից անցնելը նշանակում էր ՄԱՐԴՈՒ մարմնի մահ, և այս երկու գործընթացներն էլ անհրաժեշտ են մեր «զոհաբերությունը» ավարտին հասցնելու համար: Պետք է հետևում թողնել և՛ մարմնավոր միտքը, և՛ մարմնավոր մարմինը, որպեսզի կարողանանք մտնել «Սրբություն սրբոցը»՝ կատարելագործված իբրև Աստվածային բնության և դրա հոգևոր վիճակների հաղորդակիցներ, քանի որ մարմինն ու արյունը չեն կարող ժառանգել Աստծու արքայությունը (Ա Կորնթ. 15:50): Հմմտ. Հովհաննես 3:5, 8, 13:

Այս երեք վայրերը՝ «Բանակատեղի», «Սրահ» և «Խորան», ներկայացնող այս երեք պայմանների վերաբերյալ մտքերը մեր աչքի առաջ ունենալով՝ մեր հաջորդ ուսումնասիրության մեջ հատուկ ուշադրություն կդարձնենք այս պայմանների մեջ ներառված երեք դասերին, այն է՝ անհավատ աշխարհը, արդարացված հավատացյալները և սրբերը կամ նվիրագործված հավատացյալները՝ ներկայացված համապատասխանաբար իսրայելացիների, ղևտացիների և քահանայության կողմից:

ԳԼՈՒԽ II

ԻՍՐԱՅԵԼԱՑԻՆԵՐԸ, ՂԵՎԻՏԱՑԻՆԵՐԸ ԵՎ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Իսրայելացիների, ղևտացիների և քահանաների կողմից դասակարգված մարդկային դասերը, քահանաների օծումը. սովորաբար դիտարկվում է Քահանայապետի «Փառքի և գեղեցկության զգեստների» նշանակությունը՝ նախանշելով Աբրահամի Ուխտը, Օրենքի Ուխտը և Նոր Ուխտը:

ԿԱՐԵՎՈՐ Է, որ մենք հստակ պատկերացում ունենանք ոչ միայն խորանի կառուցվածքի և կահավորանքի ու դրանց բնորոշ նշանակության մասին, այլև պետք է ինչ-որ բան իմանանք դրա դերակատարների և իբրև նախատիպեր նրանց նշանակության մասին:

Իսրայելը շատ դեպքերում օգտագործվում է քրիստոնեական եկեղեցուն բնորոշելու համար: Օրինակ՝ երբ նրանք ազատվեցին Եգիպտոսի գերությունից, նրանք Աստծու զավակների այն նախատիպն էին, որոնք լսում էին Նրա կոչը՝ դուրս գալ աշխարհից և զբաղվել Նրա պաշտամունքով:

Անապատի ճամփորդությունն այն հոգնեցուցիչ ուխտագնացությունն էր, որով շատերն են անցնում՝ փնտրելով խոստացված հանգիստը Քանանում. «Ինձ մո՛տ եկեք, և ես հանգիստ

կտամ ձեզ»: Եվ ինչպե՛ս նախատիպի պարագայում, այնպե՛ս էլ իրականում, խոստացված հանգիստը Քանանում մոտ է, եթե Աստծու զավակները բավականաչափ հավատ ունեն, որ վեր կենան և հավատքով անմիջապես մտնեն այնտեղ: Աստված առատորեն տվել է անհրաժեշտ ամեն ինչ, բայց նրանք թափառում են Սին անապատում, հանգստություն են փնտրում և չեն գտնում, քանի որ չունեն հավատ Աստծու խոստումների հանդեպ: Ոմանք այդքան երկար թափառում են, իսկ ոմանք երբեք չեն մտնում Քանանի հանգստության մեջ անհավատության պատճառով: Բայց եթե Իսրայելը՝ ըստ մարմնի, այսպես, թե այնպես, օգտագործվում է հոգևոր Իսրայելի նախատիպը բնորոշելու համար, ապա խորանի հետ իր առնչությամբ, ինչպես մենք հիմա քննում ենք, այն բոլորովին այլ նախատիպ է ներկայացնում: Այստեղ Իսրայելը, անկասկած, խորհրդանշում էր մարդկային ողջ աշխարհը: Մեղքի զոհը, զոհաբերությունը, քավությունը և այլն, որոնք բնորոշ են դրանց (և միայն դրանց), բնորոշ էին «ավելի լավ զոհերին» և ամբողջ աշխարհի անունից արված քավությանը, քանի որ կարդում ենք. «նա է քավությունը մեր մեղքերի համար, և ոչ միայն մեր, այլ նաև ամբողջ աշխարհի»:

Մի խոսքով՝ Իսրայելը, ինչպես նաև խորանը, քահանաները, ղևտացիները և զոհաբերությունները, նախատիպ էին: Իսկ այն, ինչ արվել է խորհրդանշական կերպով Իսրայելի հետ և հանուն Իսրայելի, Քրիստոսի առաջին գալուստից ի վեր իրականացվել է ավելի բարձր մակարդակով և ավելի մեծ մասշտաբով, ընդ որում վերջինս իրականություն էր, իսկ մյուսը նախատիպ էր կամ ստվեր:

Ինչպես Իսրայելը խորհրդանշում էր ողջ աշխարհը, այնպես էլ Ղևիի ցեղը խորհրդանշում էր «հավատի տունը», կամ Հիսուսին հավատացող բոլոր մարդկանց և Նրա փրկագինը: Քահանայությունը, որը մեկ մարմին է՝ մեկ գլխավորի կամ Քահանայապետի ենթակայության ներքո, բնորոշում էր «փոքր հոտին», որն իր «Գլխով» կամ Քահանայապետով ներկայացնում էր թագավորական քահանայությունը, որի անդամները, զոհաբերության ներկա ժամանակից հետո, պետք է լինեն թագավորներ և քահանաներ Աստծու համար և թագավորեն երկրի վրա (Հայտ. 5:10): Այսպիսով, մենք Հիսուսին տեսնում ենք որպես Քահանայապետ, այլ ոչ թե քահանա՝ ըստ Ահարոնի կարգի, որը միմիայն ավելի մեծ և խոշոր կոչման կամ կարգի նախատիպն էր՝ Գլուխն իրական քահանայության, որի համար մյուսներն ուղղակի

կերպարներ էին: Ահարոնի քահանայությունը հիմնականում խորհրդանշում էր Քրիստոսի նվաստացումն ու չարչարանքները, և ոչ թե Նրա ապագա փառքը. Մելքիսեդեկն էր Քրիստոսի նախատիպը՝ որպես թագավորական կամ արքայական քահանայություն:

Բայց մինչ կրտսեր քահանաները՝ Քրիստոսի Մարմնի, թագավորական քահանայության անդամները, կմիանան իրենց Գլխին և կսկսեն իրենց թագավորությունը, նրանք պետք է «Նրա հետ չարչարվեն»՝ Նրա հետ մասնակից լինելով նախատիպային զոհաբերություններին, ինչը մենք շուտով կտեսնենք (Բ Տիմ. 2:12):

Պետրոս առաքյալը ցույց է տալիս, թե ում էին խորհրդանշում Ահարոնյան քահանաները, երբ դիմելով սրբագործվածներին՝ ասում է. «Իսկ դուք... կառուցվում եք որպես հոգևոր տաճար սուրբ քահանայության համար, որպեսզի Հիսուս Քրիստոսի միջոցով Աստծուն բարեհաճ հոգևոր զոհեր մատուցեք», «Բայց դուք... թագավորական քահանայություն եք» (Ա Պետ. 2:5,9): Նրանք բոլորն էլ ճշմարտության սպասավորներ են, թեև ոչ բոլորն են աստվածաբանության քարոզիչներ և դոկտորներ, և յուրաքանչյուրը պետք է անձնազոհության իր մասն ու բաժինն ունենա, որպեսզի արժանանա Քրիստոսի ժառանգակիցը լինելու: Միայն Նրա չարչարակիցներին է խոստացված թագավորել Նրա հետ (Հռոմ. 8:17):

Այն, որ այս քահանայության, այս «փոքր հոտի» Գլուխը կամ Քահանայապետը մեր Տեր Հիսուսն է, բազմիցս նշվում է առաքյալների կողմից: Մենք միմիայն մեկ մեջբերում ենք անում. «Ուստի, սո՛ւրբ եղբայրներ, [«արքայական քահանայություն»], երկնային կոչմա՛ն մասնակիցներ, նայե՛ք մեր Առաքյալին ու Քահանայապետին՝ Քրիստոս Հիսուսին, որին խոստովանում ենք [մեր ապագա քահանաների կարգը] (Եբր. 3:1):

Անդրադառնալով տիպիկ քահանայության հաստատման քննարկմանը՝ նկատում ենք, որ Ղևիի ցեղը (որ բնորոշում է բոլոր արդարացված հավատացյալներին) գոյություն է ունեցել մինչ քահանայության հաստատումը: Ուստի նախատիպի պարագայում «թագավորական քահանայությունն» սկսվեց Հիսուսի՝ Քահանայապետի օծմամբ (մկրտության ժամանակ, Ղուկ. 3.22, Գործք 10.38), բայց հավատացյալները՝ արդարացված Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքով, ապրել են դրանից շատ առաջ: Օրինակ՝

Աբրահամը հավատաց Աստծուն և արդարացավ իր հավատքով (Հռոմ. 4:2, 3)։ Թեև իր ժամանակներում նախատիպը դեռ չէր հայտնվել, բայց Աբրահամը՝ որպես արդարացված հավատացյալ, ղևտացիների կողմից ներկայացված «հավատի տան» անդամ էր։ Սակայն «թագավորական քահանայությունից» և ո՛չ մեկը չընտրվեց մինչ այդ կարգի Քահանայապետի ընծայումն ու հաստատումն այդ պաշտոնում։ Այդ ժամանակից ի վեր կրտսեր քահանաների ընծայումն ու հաստատումը դարձել են այս քրիստոնեական տնտեսության կամ Ավետարանի դարաշրջանի հատուկ գործը։ Այսպիսով՝ քահանաները, որոնք այժմ սրբագործվում, հաստատվում և անձնազոհվում են, պատրաստվում են որպես Աստծու գործիքներ Արքայության թագավորական իշխանության և, հետևաբար, աշխարհի բոլոր ազգերի օրհնության համար։

Քահանայություն

Ավելորդ չէ նշել, որ քահանայության ձեռնադրության և աշխատանքի հետ կապված յուրաքանչյուր արարողության ժամանակ քահանայապետն առաջինն էր, և այդպես էր նաև նախատիպային քահանայության մեջ. Հիսուսն առաջինն էր՝ Առաջնորդը, Գլխավորը, Նախակարապետը՝ հստակ ցույց տալով, որ ոչ ոք չէր նախորդել Իրեն։ Ուստի տեսնում ենք, որ նահապետներից կամ մարգարեներից ո՛չ մեկը չի պատկանում «փոքր հոտին», «թագավորական քահանայությանը», որն այլ կերպ կոչվում է «Հարս», «Գառան կին»։ Թեև նրանք մեծապես կօրհնվեն՝ որպես Տիրոջ ծառաներ, սակայն նրանց ծառայությունը չի լինի այնքան մեծ, որքան քահանաներինը, և նրանց պատիվը նույնպես չի լինի այդքան մեծ։ Այնուամենայնիվ, ինչպես տեսնում ենք Ղևտացիների գրքում, նրանց ապագա աշխատանքն ու պատիվն ակնհայտորեն մեծ են լինելու։

«Կյանքի նեղ ճանապարհը» (անմահությունը) չէր բացվել մինչև Հիսուսի գալուստը։ Նա առաջինն էր, որ քայլեց այդ ճանապարհով։ Նա «կյանքն ու անմահությունը լուսավորեց» (Բ Տիմ. 1.10)։ Եվ թեև բոլոր հավատարիմ հավատացյալները (ղևտացիները), ինչպես նաև աշխարհը (ներկայացված «Իսրայելի բանակատեղիով») կտիրանան հավիտենական կյանքին, եթե ընդունեն այն Հազարամյա դարաշրջանում, սակայն միայն քահանաները, որոնք կհաղթահարեն և կհետևեն իրենց Առաջնորդին կյանքի նեղ ուղով՝ զոհաբերելով

մարդկային շահերը, այդպիսով փառք, պատիվ և անմահություն փնտրելով (Հռոմ. 2:7), մի օր կտիրանան անմահություն կոչված կյանքի այդ անսահմանափակ աստիճանին, որն ի սկզբանե տիրապետում էր միայն Եհովա Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսն Իր հարությունից հետո: Տե՛ս «Դարերի ծրագիրը», X և XI գլուխներ:

Օծում

Օրենքի համաձայն՝ օծումն այն արարողությունն էր, որով քահանաները մտնում էին իրենց ծառայության մեջ: Նրանք իրենց պաշտոնի համար օծվում էին հատուկ յուղով, որը կոչվում էր «սուրբ օծության յուղ», որը չպետք է օգտագործվեր ոչ ոքի կողմից, բացի քահանաներից, և չէր թույլատրվում որևէ այլ մեկին օգտագործել կամ ունենալ այն (Ելք 30:25-33, 38): Այս յուղը խորհրդանշում է որդեգրության սուրբ Հոգին, որով մենք՝ իրական «թագավորական քահանայությունը», կնքվում ենք որպես Աստծու որդիներ: Այսպես պետք է օծվեն միայն սրբագործվածները՝ քահանաները:

Ահարոնը՝ տիպիկ Քահանայապետը, ներկայացնում էր Հիսուսին՝ Գլխին, և Եկեղեցուն՝ որպես անդամներ այն Մարմնի, որը մեծ նախատիպային Քահանայապետն է: Լինելով ուրիշների նման մեղավոր մարդ՝ Ահարոնը պետք է մաքրվեր՝ պատշաճ կերպով ներկայացնելու նախատիպի՝ Հիսուսի մաքրությունը, ով մեղք չէր ճանաչում, ինչպես նաև Նրա Եկեղեցին՝ մաքրված Նրա թանկագին Արյամբ և ջրի ավազանով՝ Խոսքով (Եփես. 5:26):

Մաքրվելուց հետո Ահարոնը հագավ «փառքի և գեղեցկության» սուրբ զգեստները (Ելք. 28), և վերջապես օծության յուղը թափվեց նրա գլխին (Ելք 29:7): Այս փառահեղ հագուստի յուրաքանչյուր կտոր բնորոշ էր Մեծ Ազատարարի՝ Գլխի և Մարմնի հատկանիշներին և զորություններին, ինչպես որ Եհովան զանազանում էր նրանց՝ նայելով ապագային՝ «Աստծու որդիների դրսևորման» ժամանակին և Նրա խոստումների կատարմանը նրանց մեջ:

Քահանայապետը «փառքի և գեղեցկության» տիպիկ զգեստներով

«Սրանք են այն զգեստները, որ պիտի պատրաստեն. լանջապանակ, եփուդ, պատմուճան, նկարազարդ շապիկ, խույր և գոտի» (Ելք. 28:4):

Սպիտակ կտավից «շապիկը» խորհրդանշում էր քահանայապետի մաքրությունը, իսկ դրա ասեղնագործությունը ցույց էր տալիս, թե ինչպես է այդ մաքուր բնավորությունը դրսևորվում շնորհի գործերում:

Խույրը՝ սպիտակ կտավից երիզը (արդարության խորհրդանիշ), որը կրում էին ճակատին, որին ոսկյա թիթեղ կամ «թագ» էր ամրացված կապույտ կապիչով, ցույց էր տալիս, որ թագն արդարացիորեն պատկանում է իրեն:

Ոսկյա թիթեղի վրա գրված էր «Սրբություն Տիրոջը»՝ այսպիսով հռչակելով, որ այս Քահանայապետն ամբողջությամբ նվիրված էր Եհովայի նպատակների իրականացմանը: Ոսկե թագը նույնպես հռչակում էր Նրա թագավորական իշխանությունը. Քրիստոսը պետք է լիներ «քահանա՝ Իր գահի վրա» «հավիտյան քահանա՝ ըստ Մելքիսեդեկի կարգի» (Զաք. 6:13, Սաղմ. 110:4, Եբր. 7:17):

«Կտավի գոտին» խորհրդանշում էր արդար ծառային. կտավը՝ արդարություն, գոտին՝ ծառայություն:

Կապույտ «պատմուճանը» խորհրդանշում էր նրա հավատարմությունը: Դրա ծայրը պատրաստված էր ոսկե զանգերից և նռներից: Նուռը, լինելով ընտիր միրգ, ցույց էր տալիս, որ զոհաբերական փրկագործության հավատարիմ կատարումն առատ պտուղներ է տվել, այն է՝ մարդկային ցեղի կորսված կյանքի փրկությունը: Ոսկե զանգերը խորհրդանշում էին, որ երբ մեր Քահանայապետը հայտնվի փառքով ու գեղեցկությամբ, զոհաբերության պտուղները կհայտնվեն բոլորին՝ կազդարարվեն ամբողջ աշխարհին, ինչպես նախատիպի պարագայում զանգերը ազդարարեցին այդ մասին ամբողջ Իսրայելին: Դրա մասին է վկայում սերտ մոտիկությունը. զանգերը ուշադրություն են հրավիրում մրգերի վրա:

«Եփուդը» պատրաստված էր մանուշակագույն, կապույտ, կարմիր, սպիտակ և ոսկե թելերից պատրաստված կտավից՝ հմտորեն և գեղեցիկ կերպով միահյուսված: Այն երկու մասից էր բաղկացած՝ մեկը կախված էր առջևից, մյուսը՝ հետևից: Այս երկու մասերը միմյանց ամրացված էին ուսերի վրա դրված երկու ոսկե ճարմանդներով: Եփուդը բնորոշում էր երկու մեծ ուխտերը՝ Աբրահամի Ուխտը, որը ներկայացված էր առջևի մասով, և Նոր Ուխտը, որը ներկայացված էր հետևի մասով, որոնցից երկուսն էլ, հետևաբար, կախվածություն ունեն մեր Քահանայապետից: Այս երկու ուխտերն էլ դրված են Նրա վրա.

եթե Նա չկարողանա աջակցել նրանց, կատարել նրանց պայմանները, նրանք վայր կընկնեն՝ կձախողվեն։ Բայց, փառք Աստծու, այս ուխտերը միավորված և ամրացված են Նրա վրա ոսկյա ճարմանդներով (աստվածային զորությամբ), ինչպես նաև կապված են Նրան «գոտիով», որը մի պարան է՝ եփուդի նույն կտավից պատրաստված։

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԸ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱԼԻՔ ՓԱՌՔԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՎ

Այս «գոտին» կարծես ասում է՝ «Սա ծառա է», և քանի որ դա եփուդի գոտին է, այն մեզ ասում է, որ այս մարդը «ուխտի պատգամաբերն է, որին դուք հավանում եք» (Մաղ. 3:1)։

Եփուդի մասերից մեկը, որը ներկայացնում է Նոր Ուխտը, երաշխավորվեց Գողգոթայում. արդյոք մեր Տիրոջ մահը «Նոր Ուխտի արյունը» չէ՞ր, որին բաժնեկից են Նրա անդամները (Մատթ. 26:28, Ա Կորնթ. 10:16)։

Մյուս մասը դեռ կիսատ է, բայց Երկնային Հայրը տեսնում է դրա կատարումն ապագայում. չէ՞ որ Աբրահամի ուխտը խոստացել էր Աբրահամի Սերնդի աճը, որի միջոցով Նոր Ուխտն օրհնելու էր բոլոր ազգերին, իսկ այս Սերունդը դեռ ամբողջական չէ։ Ճիշտ է,

որ մեր Տեր Հիսուսն է այդ Սերունդը, բայց Աստված կանխատեսել և կանխագուշակել է ավելի մեծ՝ հոգևոր սերունդ, որը ներառում է Մարմինը՝ Եկեղեցին իր Գլխով (Գաղ. 3:16, 29): Եվ Առաքյալը նշում է, որ Աբրահամի երկրային սերունդը նույնպես մասնակցելու է աշխարհի օրհնության գործին, սակայն հոգևոր Իսրայե՛լն է ճշմարիտ Սերունդը, ինչպես գրված է. «աղախնի որդին ազատի որդու հետ ժառանգություն չպիտի ստանա» (Գաղ. 4:22–31):

Խոսելով Աբրահամի բնական սերնդի մասին և ապացուցելով, որ նրանք չեն լինելու օրհնող Քահանայի անդամները՝ առաքյալն ասում է. «Ավետարանի համաձայն [Ուխտի հոգևոր կողմը]՝ նրանք [բառացի սերունդը] թշնամի են ձեր պատճառով, ընտրության տեսակետից՝ [դեռևս] սիրելի են հայրերի միջոցով. որովհետև Աստծու շնորհն ու կոչումը անփոփոխելի են: Իմ կողմից ուխտը ՆՐԱՆՑ ՀԵՏ սա է. Սիոնից [հոգևոր Եկեղեցին] Փրկիչը [այս մեծ Քահանայապետը, Ուխտի ծառան՝ Հիսուսը, Գլուխը, և «փոքր հոտը»՝ Նրա Մարմինը] կգա և ամբարշտությունները Հակոբից կհեռացնի»: Նրանք նախ պետք է օրհնվեն հոգևոր կամ ճշմարիտ Սերնդի կողմից և ապա կարող են դառնալ գործակիցներ (Հռոմ. 11:26-29):

Այսպիսով, այն բանից հետո, երբ Քրիստոսի Մարմինն ամբողջացնի հոգևոր «Սերունդը», պետք է կատարվի Աբրահամին տրված հավելյալ խոստումը երկրային սերնդի մասին. մարմնական սերունդը պետք է բազմանա «ծովեզերքում եղող ավազի չափ», իսկ երկնային Սերունդը համեմատվում է «երկնքի աստղերի» հետ (Ծնն. 22:17): Նրանք նախ պետք է դառնան դեպի արդարությունը և ճշմարտությունը, և ապա կդառնան այն գործիքները, որոնց միջոցով հոգևոր Սերունդը կգործի ողջ մարդկությանը խոստացված օրհնության համար՝ շնորհով և ճշմարտությամբ:

Կարմիր, կապույտ, մանուշակագույն և այլ կտավները, որոնցից կազմված էր եփուդը, խորհրդանշում էին երկու ուխտերի պայմանները: Կարմիրը ցույց է տալիս, թե ինչպես է Աստված փրկում ադամական անեծքից փրկանքի արյան միջոցով: Սպիտակ կտավը խորհրդանշում է մարդու սկզբնական մաքրության վերականգնումը: Կապույտը երաշխավորում է նրան օգնություն, իր արդար բնավորությունը հավատարմորեն պահպանելու կարողություն: Մանուշակագույնը հռչակում է համագործակցող Արքայության թագավորական

իշխանությունը։ Միահյուսված այս բոլոր օրհնությունները տրվում են օծյալ Քահանայի աստվածային զորությամբ, որը ներկայացված է միահյուսված ոսկե թելով։ Այսպիսով, Եհովան մարդկանց հետ կապված այս երկու ուխտերն էլ դրել է Նրա վրա, ով և՛ զորեղ է, և՛ պատրաստ է բերելու այս փառահեղ ուխտի օրհնությունները՝ «իր ժամանակին»։

«Դատաստանի լանջապանակը» ամրացված էր եփուդի առջևի մասում։ Այն կախված էր ուսի ճարմանդներից ոսկե շղթայով և ամրացված էր եփուդին կապիչով՝ ոսկյա օղակների միջոցով. այս ամրացումն այնպես էր թաքնված տակը, որ պատահական դիտորդին կարող էր թվալ, թե եփուդի մի մասն է (Ելք 28:26-28)։

Այս լանջապանակը գեղեցիկ կերպով ներկայացնում էր Օրենքը. այն Աբրահամի ուխտի (եփուդ) մասը չէր, այլ «կցված» էր դրան (Գաղ. 3:19)։ Իսրայելացիների կարծիքով (չտեսնելով թաքնված կապը) Աբրահամի հետ կնքված ուխտը և «օրենքը, որ տրվեց դրանից 430 տարի անց», նույնն էին։ Բայց Պողոսը մեզ ցույց է տալիս, որ Աստված նկատի ուներ երկու սերունդ՝ հոգևորը և բնականը, և որ Ուխտն ու Օրենքը տարբեր էին. «որպեսզի խոստումը հաստատուն լինի ամբողջ սերնդի համար. ոչ միայն օրենք ունեցողի համար, այլ նաև նրա համար, ով Աբրահամի հավատից է» (Հռոմ. 4:16)։

Օրենքի այս խորհրդանիշը (լանջապանակը) քահանայապետի ամենագեղեցիկ զգեստներից մեկն էր։ Այն պատրաստված էր նույն նյութերից, ինչ եփուդը։ Այն պարունակում էր ոսկով շրջանակված տասներկու թանկարժեք քարեր, որոնց վրա փորագրված էին տասներկու ցեղերի անունները։ Այն ամրացված էր նրա սրտին՝ ցույց տալու, որ այն թանկ է իր համար։ Որպես «արդարության լանջապանակ»՝ այն ծածկում էր նրա սիրտը։ Նրան հաճույք էր պատճառում այն, ինչը դատապարտում էր բոլոր թերությունները. «Քո կամքը կատարել կամեցա, ո՛վ իմ Աստված, և քո օրենքն իմ սրտի մեջ է» (Սաղմ. 40:8)։

Այս լանջապանակը մեջտեղից ծալելիս ուներ երկու թիզ երկարություն և մեկ թիզ լայնություն, այսինքն՝ մեկ թիզ երկարություն և մեկ թիզ լայնություն՝ կրկնակի ծալելիս։ Չափը՝ թիզը, ցույց էր տալիս, որ Աստծու օրենքը կատարյալ մարդու հնարավորությունների ամբողջական չափումն է։ Քրիստոս Հիսուս մարդը, լինելով կատարյալ, միակն էր, ով երբևէ անխախտ պահեց Աստծու կատարյալ օրենքը,

մինչ «փոքր հոտը»՝ Նրա Մարմինը կազմողներին է վերագրվում Նրա արդարությունը, և հետևաբար նրանք կարող են ասել. «Օրենքի արդարությունը կատարվում է մեր մեջ»։

Այն փաստը, որ այն կրկնակ էր և իր մասերը հավասար չափերի էին, ներկայացնում էր Օրենքի տառն ու ոգին։ Առջևի հատվածը գոհարազարդ էր և ոսկյա շղթայով կախված էր եփուդի ոսկե ճարմանդներից։ Ներքևի մասը ամրացված էր եփուդին։ Այս ստորին կեսը, որը կցված էր եփուդին (Ուխտ), ըստ երևույթին, ներկայացնում էր Օրենքի տառը, ինչպես այն ներկայացվել է մարմնական Իսրայելին։ Առջևի հատվածը կարծես պատկերում է Օրենքի ոգին, որը կատարվում է մեր մեջ, «որ ոչ թե ըստ մարմնի ենք վարվում, այլ ըստ Հոգու» (Հռոմ. 8:4)։ Ճիշտ զննելիս՝ այս երկու մասերն իսկապես մեկ են, սակայն թանկարժեք քարերը դրված են միայն առջևի մասում։

Մաքուր ոսկին աստվածային բաների խորհրդանիշն է, հետևաբար Օրենքի այս մասի կախվածությունը ոսկե շղթայով ոսկե ճարմանդներից, կարծես սովորեցնում է, որ Օրենքն աստվածային է. և մենք նաև գիտենք, որ Աստվածային օգնությամբ է, որ մենք կարող ենք վարվել ոչ թե ըստ մարմնի, այլ ըստ հոգու։ Օրենքի այս փուլն է, որը կրում է ոսկով շրջանակված «գոհարները», որոնք ներկայացնում են ճշմարիտ Իսրայելը՝ Տիրոջ «փոքր հոտը»։ «Եվ նրանք իմը կլինեն,- ասում է Զորքերի Տերը,- այն օրում, երբ ես կպատրաստեմ իմ իսկ սեփականությունը» (Մաղ. 3:17)։ Այսպիսով, լինելով շրջանակված ոսկով (Աստվածային բնությամբ) և պահպանված Աստվածային խոստումների ոսկե շղթայով՝ զարմանալի չէ, որ «օրենքի արդարությունը կատարվեց մեր մեջ» (Հռոմ. 8:1, 4)։

Երբ Ահարոնը կանգնեց այնտեղ՝ հանդերձավորված այդ գեղեցիկ հագուստներով, որոնք սովորաբար այնքան նշանակալից էին, և օծվեց սուրբ յուղով, նրա գլուխը ներկայացնում էր Հիսուսին՝ Քահանայության Գլխին, իսկ նրա մարմինը՝ Եկեղեցին՝ ամբողջացած Քրիստոսով։ Որքա՜ն տպավորիչ և նշանակալից է աշխարհի Քահանայապետի նախատիպը՝ անարատ, զորություն և իշխանություն հագած՝ կատարելու Եհովայի ուխտերը։

Կրտսեր քահանաները՝ «Մարմինը»

Մենք տեսնում ենք Մարմինը կամ Քահանայապետի անդամները,

որոնք կրկին անհատապես ներկայացված են կրտսեր քահանաների կողմից, որոնցից յուրաքանչյուրը «գլխարկ» էր կրում, որը ծածկում էր իր գլուխը՝ ցույց տալու համար, որ ինքը Քահանայության գլուխը չէր, այլ պարզապես Մարմնի անդամ էր։ Աստված Հիսուսին «եկեղեցու գլուխ դրեց՝ ամեն ինչից վեր, որ է նրա մարմինը» (Եփես. 1:22, 22)։ Ահա թե ինչու է Պողոսը պնդում, որ կինը պետք է ծածկի իր գլուխը՝ ցույց տալով, թե նա գլուխը չէ. ամուսինն ու կինը Հիսուսի և Նրա հարսի՝ Առաջնեկների Եկեղեցու խորհրդանիշներն են։

Կրտսեր քահանաները կրում էին կտավից հագուստներ և կապում էին գոտիներ։ Նրանց հագուստները ներկայացնում էին Հիսուսի արդարությունը, որը վերագրվում էր նրանց, իսկ նրանց գոտիները ներկայացնում էին իրենց՝ իբրև արդարության սպասավորներ։ Քահանայապետը դրանց շատ նման հանդերձներ էր հագնում զոհաբերության ժամանակ (Քավության օրը), իսկ քավություն անելուց հետո հագնում էր փառահեղ զգեստները։

Քահանայի օծումը

Ինչպես Ահարոնի գլխին թափվեց սուրբ յուղը, այնպես էլ մեր Գլուխը՝ Տեր Հիսուսը, օծվեց նախատիպային յուղով՝ Սուրբ Հոգով, Հորդանանի ափին, Իր ընծայման ժամանակ, երբ Նա երեսուն տարեկան էր։ Այնտեղ Նա «օծվեց ուրախության յուղով ավելի, քան Իր ընկերները»՝ որպես Իր բոլոր ժառանգակիցների Գլուխ։ Հոգին յուրաքանչյուր ընծայվողի տրվում է ըստ չափի, բայց Եհովան Նրան չտվեց «Հոգին ըստ չափի» (Հովհ. 3:34)։ Հովհաննեսը տեսավ և արձանագրեց, որ մեր Քահանայապետն այսպես է օծվել, իսկ Պետրոսն ավելացրեց իր վկայությունը. «Գիտեք Հիսուսին, որ Նազարեթից էր. թե ինչպե՛ս Աստված նրան օծեց Սուրբ Հոգով ու զորությամբ» (Հովհ. 1:32, Ղուկ. 4:1, Գործք 10:38)։

Օծության յուղը լցնում էին միայն գլխին։ Կրտսեր քահանաներն անհատապես չէին օծվում*։ Նրանք համարվում էին Քահանայապետի մարմնի անդամներ և իրենց օծումն ստանում էին միայն Նրա մեջ՝ որպես իրենց գլուխ։ Հետևաբար նախատիպային քահանաները նույնպես պարզապես հաղորդակից էին Քրիստոսի հոգուն, և միայն նրանք, ովքեր Քրիստոս Հիսուսում են, մասնակից են օծմանը, որով կկնքվեն բոլոր նրանք, որոնք կհամարվեն Աստծու խոստումների

ժառանգորդներ և իրենց Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ժառանգակիցներ (Եփես. 1:13,14, 4:30)։

---

* Ելք 30:30 վերաբերում է Ահարոնի և նրա որդիների օծմանը։ Սա նշանակում է, որ Քահանայապետի պաշտոնում հաջորդած Ահարոնի որդիներից յուրաքանչյուրը պետք է օծվեր իր հերթին, ինչպես որ հենց ինքը՝ Ահարոնը սկզբում օծվեց։

Յուղը «իջնում է մինչև նրա [քահանայապետի] հանդերձանքների ծայրը» (Սաղմ. 134:2)՝ այսպիսով ներկայացնելով, թե ինչպես Քրիստոսի Մարմնի բոլոր անդամները պետք է մասնակից լինեն նույն օծմանը՝ հետևելով իրենց Գլխին։ «Եվ այն օծումը, որ դուք նրանից ընդունեցիք, ձեր մեջ է բնակվում» (Ա Հովի. 2.27)։ Այս յուղը հասավ Մարմնին Պենտեկոստեի օրը և հոսում է Ավետարանի այս ողջ դարաշրջանում՝ օծելով բոլոր նրանց, որոնք իսկապես մկրտված են Քրիստոսով՝ նրանց, իրենց Գլխի հետ միասին, դարձնելով Աստծու թագավորներ և քահանաներ, որ հազար տարի թագավորեն (Հայտ. 20:6)։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Ահարոնը՝ զգեստավորված և օծված, ներկայացնում էր ամբողջությամբ Քրիստոսին՝ Աբրահամի ամբողջական Սերնդին, որով Աստված օրհնելու է աշխարհի բոլոր ազգերին։ Բայց եկեք չմոռանանք, որ մենք նայում էինք Մեծ Ազատարարին Աստծու տեսանկյունից, և Նրա հետ՝ Նրա հայտնության ժամանակին՝ Հազարամյակի արշալույսին, երբ բոլոր անդամները կմիավորվեն Մարմնին և երբ «սուրբ յուղը» կհոսի «մինչև նրա հանդերձանքների ծայրը»՝ օծելով յուրաքանչյուր անդամի (Ղևտ. 10:7)։ Այնուհետև Նա կսկսի մարդկությանը օրհնելու գործը։ Այս Թագավորական Քահանայի փառահեղ իշխանության համար մենք անընդհատ աղոթում ենք. «Քո թագավորությունը թող գա, քո կամքը թող լինի երկրի վրա»։

ԳԼՈՒԽ III

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՆՎԻՐԱԳՈՐԾՈՒՄ
Ղևտ. 8:14-33

Նվիրում Աստծու ծառայությանը - «Հավատարի՛մ եղիր մինչև մահ» - «Սրբագործե՛ք ձեր անձերը» և «Ես կսրբագործեմ ձեզ» - Նվիրագործության զվարակներ ու խոյեր - Նվիրագործության օծման յուղ:

Քահանայականնվիրագործումը Տեր Հիսուսի մարդկային բնության և Նրա Մարմնի՝ Եկեղեցու խորհրդանշական նվիրումն էր Եհովայի կամքին. Հիսուսի հնազանդությունը մինչև մահ, և Նրա Մարմնի անդամների հնազանդությունը, որոնք Նրա հետ չարչարվում էին հանուն արդարության «նույնիսկ մինչև մահ»: Ամբողջ Մարմինը՝ ներկայացված Ահարոնի որդիների կողմից (ինչպես նաև Գլուխը, որը ներկայացնում է անձամբ Ահարոնը), նախատիպային զոհաբերությունների միջոցով կազմվում է Ավետարանական դարաշրջանում, սրբագործվում է նրանց ապագա աշխատանքի համար՝ իբրև թագավորներ և քահանաներ՝ վերականգնելու, իշխելու և օրհնելու մարդկությանը: Այս նվիրագործությունը նշանակում է ամբողջությամբ հանձնվել Աստծու կամքին Նրա ծառայության մեջ: Բայց զոհաբերողների ծայրահեղությունը հնարավորություն է դառնում Եհովայի համար. երբ այս քահանաները նվիրաբերում

են այն ամենը, ինչ ունեն, այն ամենը, ինչ կան, և այն ամենը, ինչի վրա հույս են դրել իբրև մարդ՝ նզովելով կամ զոհաբերելով դրանք՝ այդպիսով բաժնեկից լինելով իրենց Փրկիչ Հիսուսի զոհաբերությանը, ապա ընդունելով նրանց զոհերը՝ Եհովան նրանց մեջ նոր բնություն է ծնում՝ հոգևոր բնություն։ Եվ ոչ միայն դա, այլ որպես վարձք նրանց հավատարմության համար Նա խոստանում է նրանց շնորհել հոգևոր գոյության բարձրագույն աստիճանը՝ Աստվածային բնությունը, և նրանք անմիջապես համարվում են Աստծու հոգևոր որդիներ (Գաղ. 4:4-7, Բ Պետ. 1:4)։

«Հավատարի՛մ եղիր մինչև մահ»

Այն, որ զոհաբերության նվիրագործվածներից ոմանք, որոնք այդպիսով միացել են «թագավորական քահանայությանը», չեն հասնելու ապագա թագավորական ծառայությանը, երևում է նաև այս նախատիպերում, ինչպես նաև ուղղակիորեն նշված է Նոր Կտակարանում։ Դասակարգերից մեկը «կփրկվի կրակով»՝ «անցնելով մեծ նեղության միջով», բայց չի հասնի այն պարգևին, որի համար նվիրագործվել էր, որովհետև նրանք բավարար չափով չեն գնահատել իբրև քահանաներ զոհաբերվելու իրենց արտոնությունը, և ոչ էլ բավարար չափով նախանձնախնդիր են եղել «չարչարվելու Նրա»՝ Քահանայապետի հետ։ Մենք կքննարկենք այս հարցերն ավելի ուշ, երբ ուսումնասիրենք Քավության օրվա զոհաբերությունները։

Նվիրագործված քահանաների մյուս դասը, որոնք չեն ստանալու այս քահանաներին խոստացված թագավորական օրհնությունները, կկործանվեն Երկրորդ մահով։ Այս մարդիկ, որոնց մասին Նոր Կտակարանը հստակ խոսում է (Եբր. 6:4-6, 10:28-31, Ա Հովհ. 5:16), պատկերված են նաև Խորանի ծառայության այս նախատիպերի կամ ստվերների միջոցով։

Ահարոնի չորս որդիները սկզբում ներկայացնում էին կրտսեր քահանաներին, բայց նրանցից երկուսը, որոնք համապատասխանում էին վերը նկարագրված երկու դասերին, ոչնչացվեցին։ Երկուսն էլ ձախողվեցին թագավորական քահանայության հարցում. նրանցից մեկը կործանվեց երկրորդ մահով, իսկ մյուսը փրկվեց միայն «կրակով»՝ նեղություններով, մաքրագործվելով։ Եվ քանի որ Ահարոնին և մնացած երկու որդիներին արգելված էր սգալու այդ կերպ հեռացված

իրենց եղբայրների համար, դա նշանակում է, որ բոլոր հավատարիմ քահանաները պետք է ճանաչեին Աստծու որոշումների արդարությունը և հնազանդությամբ խոնարհվեին նրանց առաջ՝ ասելով. «արդար ու ճշմարիտ են քո ճանապարհները, ո՛վ ազգերի Թագավոր»։ Անշուշտ այն օրհնություն է բերում հավատացյալներին՝ առաջնորդելով ավելի մեծ նախանձախնդրության՝ ասելով. «Ուրեմն զգուշանանք. քանի դեռ նրա հանգստի մեջ մտնելու խոստումը մնում է, ձեզանից որևէ մեկը դուրս չմնա» (Ղևտ. 10:1-7, Հայտ. 15:3, Եբր. 4:1)։

«Սրբագործե՛ք ձեր անձերը» և «Ես կսրբագործեմ ձեզ»

Արդարացված հավատացյալին նվիրագործվելու, սրբագործվելու կամ աստվածային ծառայությանը նվիրվելու հրավերը երկրային շահերն ու իրավունքները զոհաբերելու հրավեր է, իսկ Աստծու խոստումն այն է, որ այդպիսի զոհաբերությունները սուրբ և ընդունելի կլինեն մեր Փրկչի արժանիքներով, և որ փոխարենը Նա կընդունի մեզ որպես նոր արարածներ՝ մեր մեջ ծնելով նոր բնություն ճշմարտության Սուրբ Հոգու միջոցով։ Այսպիսով, Աստված սրբացնում կամ առանձնացնում է նրանց, որոնք համարվում են սուրբ նոր արարածներ։

Նախատիպային քահանաների վրա կատարվող սրբագործման նախատիպային արարողությունը ցույց է տալիս սրբագործման երկու մասերը. մեր մասը՝ մարդկային բնությունից ու նրա իրավունքներից հրաժարվելը, և Աստծու մասը՝ մեր զոհաբերությունն ընդունելը, մեզ որպես նոր արարածներ առանձնացնելն ու ճանաչելը։ Նոր հոգևոր բնությունը ներկայացված էր Ահարոնի և նրա որդիների միջոցով, զոհաբերված երկրային բնությունը ներկայացված էր զոհասեղանի վրա մատուցված զվարակի և խոյերի միջոցով (Ղևտ. 8:14–33)։

Նրանք մեղքի ընծայի համար զվարակ բերեցին, «և Ահարոնն ու նրա որդիները ձեռքերը դրեցին նրա գլխին» և ասացին. Այս զոհը մեզ է ներկայացնում։ Այդ պահից սկսած այն ամենը, ինչ տեղի ունեցավ զվարակի հետ, ներկայացնում էր այն, ինչ պետք է տեղի ունենար Հիսուսի և Նրա Մարմնի՝ Եկեղեցու հետ՝ իբրև մարդ արարածներ։ Զվարակը հանձնվեց «Օրենքին» (ի դեմս Մովսեսի), որպեսզի կատարի Իսրայելի նկատմամբ դրա պահանջները, որոնք բնորոշ են ողջ մարդկությանը։ Օրենքի պահանջները կատարելու համար այն պետք է մորթվեր, «և Մովսեսը մորթեց»։ Հետո արյունը քսեց զոհասեղանի

եղջյուրներին։ Այսպիսով «Օրենքի մատը» ցույց տվեց, որ երկրային զոհերի զոհասեղանն ընդունելի էր Աստծուն՝ թափված արյան (տրված կյանքի) պատճառով, և որ բոլոր նրանք, որոնք ճանաչում են զոհասեղանի զորությունը (եղջյուրները զորության խորհրդանիշ են), նախ պետք է ճանաչեն այն սրբագործող արյունը։ Զոհասեղանի հիմքում թափված արյունը ցույց էր տալիս, որ զոհաբերության (տրված կյանքի) արյան միջոցով նույնիսկ երկիրը փրկագնվեց անեծքից. «մինչև ստացվածքի փրկությունը»։ Տե՛ս Եփես. 1:14։

Իսկ Մովսեսը վերցրեց զվարակը, դրա մորթին, միսը և այլն, և «բանակատեղիից» դուրս այրեց կրակով (համար 17)։ Այսպիսով, Քրիստոսի մարդկային բնությունն ամբողջությամբ՝ Գլուխը և Մարմինը, դառնում է «մեղքի ընծա»՝ կրելով այն կործանումը, որին աշխարհը դատապարտված էր, և որից ի վերջո ազատվելու է այս զոհաբերությամբ՝ մեր Տեր Հիսուսի զոհաբերության արժանիքներով, իսկ մենք՝ Նրա «եղբայրները», արտոնված ենք լցնելու Նրա չարչարանքների չափը՝ որպես «Նրա Մարմնի անդամներ» (Կող. 1:24)։ Բայց մինչ թագավորական քահանայության մարդկային բնությունը կործանվում է իբրև անարգություն աշխարհի աչքում, ինչպես ներկայացված է «բանակատեղիից» դուրս զվարակի այրմամբ, Աստված ընդունում է զոհաբերության մղող սրտանց նվիրվածությունը, որն ասում է. «Ահա գալիս եմ քո կամքը կատարելու, ո՛վ Աստված»։ «Քո կամքը կատարել կամեցա, ո՛վ իմ Աստված»։ Սա ներկայացված էր զոհասեղանի վրա ճարպի և կենսատու ներքին օրգանների մատուցմամբ՝ որպես «անուշահոտություն» Տիրոջ առաջ։

Նույն նվիրագործության այլ առանձնահատկություններն արտահայտված են երկու խոյերի միջոցով՝ նշված **18 և 22 համարներում։** Նախ նշվում է ողջակեզի խոյը։ Ահարոնն ու նրա որդիները ձեռքերը դրեցին նրա գլխին՝ ցույց տալով, որ նա ներկայացնում է իրենց։ Նրան մորթեցին, նրա արյունը ցողեցին զոհասեղանի վրա, և Մովսեսը «խոյը բաժանեց կտորների, ջրով լվաց փորոտիքն ու ոտքերը» և «այրեց գլուխը, կտորներն ու ճարպը»։

ՔԱՀԱՆԱՆ՝ ԿՏԱՎՅԱ ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՎ

Ավետարանի դարաշրջանի Հիսուսը և Նրա Մարմինը՝ Եկեղեցին, անդամ առ անդամ, ներկայացված են Աստծու առջև՝ զոհասեղանի վրա,

բայց բոլորը միասին համարվում են մեկ զոհ: Սկզբում Գլուխը դրվեց զոհասեղանի վրա, և այդ ժամանակվանից ի վեր բոլոր նրանք, որոնք «Նրա հետ մահացան» և մաքրվեցին Խոսքի միջոցով՝ ջրով լվացվելով, ինչպես նախատիպում է, համարվում են Գլխի հետ միասին նույն զոհասեղանին դրված: Զոհը զոհասեղանի վրա այրելը ցույց է տալիս, թե ինչպես է Աստված ընդունում զոհն իբրև «անուշահոտություն»:

Երկրորդ խոյը՝ «նվիրագործելու խոյը», ցույց էր տալիս, թե ինչ ազդեցություն էր ունենալու զոհաբերությունը մեզ վրա, ինչպես որ առաջինը ցույց տվեց, թե ինչպես է Աստված ընդունում մեր զոհը: Ահարոնն ու նրա որդիներն իրենց ձեռքերը դրեցին նվիրագործելու խոյի գլխին՝ ցույց տալով, որ այն իրենց է ներկայացնում: Իսկ Մովսեսը մորթեց այն ու վերցրեց դրա արյունը (նվիրագործված կյանքը) և քսեց յուրաքանչյուրի վրա առանձին՝ դրանով ցույց տալով, որ մեր նվիրագործումն անհատական հարց է: Եվ նա քսեց նրա աջ ականջի բլթակին, աջ ձեռքի բթամատին և նրա աջ ոտքի բթամատին: Այսպիսով, մեր նվիրագործման միջոցով մեզ հնարավորություն է տրվում ունենալ «հավատքի ականջ» և գնահատել Աստծու խոստումներն այնպես, ինչպես ոչ ոք չի կարող, բացի նվիրվագործվածներից: Մեր ձեռքերը սրբագործված են, այնպես որ ինչ էլ որ մեր ձեռքերն անեն, մենք պետք է անենք մեր ամբողջ ուժով, ինչպես Տիրոջ համար: Մեր ոտքերը սրբագործված են, որպեսզի այսուհետ մենք «այլևս չընթանանք, ինչպես հեթանոսները», այլ «նոր կյանքով ընթանանք», «ընթանանք հավատով», «Հոգո՛վ ընթանանք», «քայլենք լույսի մեջ» և ավելին՝ «ինչպես ընդունեցինք Քրիստոսին, նրանով էլ ընթանանք» **23, 24 համարներ**:

Խոյի ընտիր մասերը, նրա «փորոտիքն» ու «ճարպը» ներկայացնում էին մեր սրտաբուխ զգացմունքները, մեր լավագույն ուժերը: Դրանք տվեցին քահանաների ձեռքը և «երերացրեցին»՝ ետ ու առաջ գնալով Տիրոջ առաջ, ներկայացնելով այն փաստը, որ նվիրաբերված զոհը չի տրվում Տիրոջը մեկ րոպեով, մեկ օրով կամ մեկ տարով, այլ մենք նվիրում ենք այն, որպեսզի մեր զգացմունքներն ու ուժերն անընդհատ վեհացնենք՝ մինչև որ Նա մեզ ընդունի իբրև ճանապարհն ավարտածների: Եվ Մովսեսը նրանց ձեռքից վերցրեց երերացնելու զոհը (քահանաներն այն վայր չէին դրել), իսկ Աստծու կողմից դրա ընդունելի լինելը ցույց տրվեց կրակով: Այսպիսով, մենք՝ «թագավորական քահանաներս», չենք կարող պառկել կամ դադարել

մեր ողջ ուժն Աստծու ծառայությանը նվիրաբերելուն, քանի դեռ այն ունենք, քանի դեռ այն ամբողջովին չի սպառվել Նրա ծառայության մեջ, և քանի դեռ Աստված չի ասել. «Բավական է, վե՛ր բարձրացեք»: Երբ մեր ներքին էության սերը (ճարպը) դրվում է զոհասեղանի վրա, դա օգնում է բորբոքելու Աստծու համար ընդունելի լինելու կրակը: Որքան մեծ է սերը՝ կապված Աստծուն մեր նվիրաբերության հետ, այնքան ավելի արագ այն կայրի մեր զոհը:

Սակառի միջից երեք հաց դրվեց այս «երերացնելու զոհի» վրա, մինչ այն նրանց ձեռքում էր: Մովսեսը դրեց այս զոհն ինչպես Քահանայապետի, այնպես էլ կրտսեր քահանաների ձեռքերի վրա:

Առաջին բաղարջ հացը ներկայացնում էր Հիսուսի իրական մաքրությունը՝ իբրև մարդ, և Եկեղեցուն վերագրված մաքրությունը՝ իբրև մարդիկ՝ հաստատված Օրենքով (Մովսես) - արդարացում, քանի որ «օրենքի արդարությունը կատարվում է մեր մեջ», մինչ մենք Նրա Մարմնի անդամներն ենք (Հռոմ. 8:4): Երկրորդ բաղարջ հացը՝ յուղով հունցված, ներկայացնում էր ներբնակվող Աստծու Հոգին՝ սրբագործումը: Երրորդը՝ լավաշը, ներկայացնում էր մեր հույսն ու հավատը փառքի, պատվի և անմահության չափազանց թանկ խոստումների հանդեպ:

Առանց այս տարրերի մեր նվիրագործումը չի կարող լինել ամբողջական և, հետևաբար, ընդունելի, այսինքն՝ արդարացում (մաքրություն), սրբագործում Հոգով՝ ճշմարտության հանդեպ հավատքով, և հավատ՝ խոստացված փառավորման նկատմամբ:

Օծության յուղը, միախառնված նվիրագործման արյան հետ, ցողվեց նրանց վրա **(համար 30)**՝ ցույց տալով, որ մեր նվիրագործումն ընդունելի է միայն այն պատճառով, որ մենք արդարացված ենք մեր Փրկչի թանկագին արյամբ: Այսպիսով, մեզ ասում են, որ մենք ընդունված ենք միայն «իր Սիրելիի միջոցով» (Եփես. 1:6):

Նվիրագործելու համար նախատեսված միսը եփելը **(համար 31)** զոհաբերության մաս չէր կազմում. դա պարզապես ուտելիքի պատրաստումն էր: Այդ ամենը պետք է դեն նետվեր **(համար 32)**՝ ցույց տալով, որ մենք պետք է լիովին և ամբողջությամբ նվիրաբերվենք, և մեր ժամանակն ու էներգիան չպետք է վատնվեն:

Նվիրագործման յոթ օրերը **(33, 35 համարներ)** կրկին ցույց էին

տալիս, որ մենք նվիրաբերված ենք Աստծու ծառայությանը ոչ թե մեր ժամանակի մի մասի, այլ ամբողջ ժամանակի ընթացքում: Սուրբ Գրքում յոթը կատարյալ թիվ է, որը խորհրդանշում է բոլորը կամ ամբողջը («Յոթ կնիքներ», «յոթ փողեր», «յոթ պատուհասներ» և այլն): **36-րդ համարը** ցույց է տալիս նվիրագործման ավարտը:

Երբևէ այնքան անհրաժեշտ չի եղել, որքան այժմ, որ բոլոր իբրև քահանա նվիրագործվածներն այնպես անեն, որ մենք «մեռնենք նրա հետ», և որ մեր բոլոր կարողությունները երերացվեն Աստծու առաջ, որպեսզի Նա ընդունի և օգտագործի մեր տաղանդներն Իր փառքի համար: Սա հատկապես հետաքրքրում է նրանց, որոնք ընկալում են Սուրբ Գիրքն իբրև ուսմունք այն մասին, որ շատ շուտով Մարմնի բոլոր անդամներն ընդունվելու են Գլխի հետ միասին՝ որպես անուշահոտություն Աստծու համար, և որ այդ ժամանակ ավարտվելու է անձնազոհության գործը, և սկսվելու է մարդկությանն օրհնելու և Աստծու Ուխտը կատարելու փառավոր գործը:

Նախատիպային քահանաների նախատիպային նվիրագործումը պատկանում է ներկա [Ավետարանական] դարաշրջանին: Այն անշեղորեն զարգանում է այն ժամանակից ի վեր, երբ մեր Տերն ու Նախակարապետը «Իրեն զոհաբերեց», և կավարտվի մինչև այս դարաշրջանի ավարտը: Եվ եթե մեզ հիմա՝ նվիրագործության ժամանակ, չհաջողվի քահանաների թվում լինել, ապա չենք կարողանա նրանցից մեկը լինել, երբ նրանք սկսեն իրենց ծառայությունը ժողովրդին Աստծու Արքայության մեջ, երբ այդ նույն քահանաները (որոնք այժմ արհամարհված են մարդկանց կողմից, բայց «անուշահոտություն են Աստծու համար») Թագավորի տիտղոս կստանան և իրենց Գլխի՝ Հիսուսի հետ միասին կիշխեն և կօրհնեն բոլոր ազգերին (Հայտն. 20:6): Արդյո՞ք ցանկանում ենք լինել նրանց թվում, ովքեր երգելու են մեր մեծ Քահանայապետի փառքը. «Եվ նրանց մեր Աստծու համար թագավորներ ու քահանաներ դարձրիր, և կթագավորեն երկրի վրա»: Եթե այո, ապա մենք պետք է լիովին նվիրագործվենք հիմա, քանի որ միայն «եթե համբերենք» Նրա հետ, «նրա հետ էլ կթագավորենք» (Բ Տիմ. 2:12):

ԳԼՈՒԽ IV

ՔԱՎՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՕՐԸ
Ղևտ. 16:3-33

Նախատիպի կարգը և դրանց նախատիպային նշանակությունները - Զվարակ - Քահանա - Մուտք Սուրբ տեղ/Սրբարան արյունով - Խունկ, անուշահոտություն և գարշահոտություն - Մուտք Սրբությունների սրբություն - Տիրոջ նոխազը - Քավության նոխազը - Ժողովրդի օրհնությունը:

Քավության օրը՝ որպես նախատիպ, պետք է դիտարկել խորանի մյուս նախատիպերից առանձին, բայց միևնույն ժամանակ՝ որպես դրանց մի մաս և դրանց հետ առնչություն ունեցող: Իրոք, այս բոլոր նախատիպերը, այսպես ասած, առանձին պատկեր են ներկայացնում. յուրաքանչյուրն ունի իր թեման և իր դասն է սովորեցնում, բայց դրանք բոլորն էլ համահունչ են՝ իբրև մեկ պատկերասրահի մասեր, և ներդաշնակ են, ինչպես մեկ մեծ Նկարչի գործ: Այդ բոլորի մեջ նախ պետք է փնտրենք Գլխին, իսկ հետո Նրա Մարմինը՝ կրտսեր քահանաներին, Եկեղեցին:

Քավության օրվա և դրա գործի իմաստը հասկանալու համար մենք պետք է հասկանանք, որ թեև մեր Տեր Հիսուսն Ինքը Քահանայապետն է կրտսեր քահանաների՝ Ավետարանի Եկեղեցու, որն է «Նրա Մարմինը», սակայն ավելի ամբողջական և անթերի իմաստով Նա է Գլուխը, և մենք անդամներն ենք աշխարհի Քահանայապետի Մարմնի:

Այսպիսով, Ահարոնը գլխավորում էր կրտսեր քահանաներին, մինչդեռ իրականում, ընդհանուր և պատշաճ իմաստով ներկայացնելով կրտսեր քահանաներին, նա ձեռնադրվեց պաշտոնավարելու իբրև Քահանայապետ Իսրայելի «ողջ ժողովրդի համար», որոնք ողջ մարդկության նախատիպային ներկայացուցիչներն էին և ցանկանում էին քավել իրենց մեղքերը և վերադառնալ աստվածային բարեհաճությանը և հնազանդությանը:

Ինչպես նախատիպային քահանայության նվիրագործումը ներառում է Մարմնի բոլոր անդամներին, և դրա համար պահանջվում է Ավետարանի ողջ դարաշրջանը՝ այն ավարտին հասցնելու համար, այնպես էլ մեղքի զոհը կամ քավության զոհաբերությունն սկսվեց Գլխից, և մենք՝ Նրա Մարմնի անդամներս, լրացնում ենք Քրիստոսի չարչարանքների չափը, որոնք մնացել են անցյալում: Եվ այս չարչարանքների համար պահանջվում է Ավետարանի ողջ դարաշրջանը՝ այն ավարտին հասցնելու համար (Ա Պետ. 4:13, Հռոմ. 8:17, Բ Կորնթ. 1:7, 4:10, Փիլ. 3:10, Կող. 1:24, Բ Տիմ. 2:12, Ա Պետ. 5:1.10):

Քավության օրը, որը նախատիպում ընդամենը քսանչորսժամյա օր էր, այնուհետև տեսնում ենք, որ խորհրդանշում է ողջ ավետարանական դարաշրջանը: Դրա ավարտից հետո դադարում են զոհաբերությունները, սկսվում են փառքն ու օրհնությունը, և աշխարհի մեծ Քահանայապետը (Հիսուսը և Նրա Հարսը՝ իբրև մեկ, Գլուխը և անդամները միավորված) հայտնվում են թագադրված՝ իբրև Թագավոր և Քահանա՝ ըստ Խաղաղության Արքա Մելքիսեդեկի կարգի – Քահանա՝ Իր գահի վրա (Եբր. 5:10):

Այնտեղ նա կկանգնի աշխարհի առաջ (բացահայտված, ճանաչված, բայց բնական տեսողության համար անտեսանելի) ո՛չ միայն որպես Թագավոր և Քահանա, այլև որպես մեծ մարգարե. «Ձեր Տերը՝ Աստվածը, ձեր եղբայրների միջից ինձ նման [Մովսես] մի մարգարե պիտի հանի... Եվ ամեն մարդ, ով այդ մարգարեին չլսի, ժողովրդի միջից պիտի բնաջնջվի»: Երբ Հազարամյակի ընթացքում, այս մեծ Մարգարեի, Քահանայի և Թագավորի առաջնորդությամբ և ուսուցմամբ, մարդկությունը ձեռք բերի կատարյալ գիտելիք և կարողություն, ապա կատարյալ հնազանդություն կպահանջվի, և բոլոր նրանք, ովքեր չկարողանան դա մատուցել, կբնաջնջվեն առանց

ապագա հույսի, որն է երկրորդ մահը (Գործք 3:22, 23)։

Հրեական դարաշրջանի վերջում Հիսուսն Իրեն առանձնապես զոհաբերեց Իսրայելին՝ որպես մարգարե, քահանա և թագավոր, որը խորհրդանշում կամ պատկերում է ողջ Մարմնի՝ կատարյալ և փառավորված Քրիստոսի զոհը ողջ աշխարհին։ Որպես մարգարե՝ Նա ուսուցանեց նրանց, որպես քահանա՝ «ինքն իրեն պատարագ մատուցեց» (Եբր. 7:27), իսկ որպես թագավոր՝ Նա նրանց քաղաք մտավ Իր ծառայության ավարտին։ Բայց նրանք չընդունեցին Նրան այս պաշտոններից և ո՛չ մեկում։ Ավետարանի դարաշրջանում Նրա Եկեղեցին կամ Մարմինը Նրան ճանաչում էր որպես «Աստծուց ուղարկված ուսուցիչ»՝ մեծ մարգարե, որպես «մեր դավանանքի Քահանայապետ» և որպես օրինավոր Թագավոր։ Աստծու Խոսքը, սակայն, սովորեցնում է, որ ոչ միայն Եկեղեցին պետք է ընդունի Նրան, այլ որ Նա (իր Մարմնի՝ Եկեղեցու հետ միասին) կլինի բոլոր ժողովուրդների Մարգարեն, բոլոր ժողովուրդների Քահանան և կթագավորի «բոլոր ժողովուրդների, ազգերի և լեզուների» վրա. «Տեր բոլորի», բոլորի Քահանա և մարգարե կամ վարդապետ։

Նախատիպային քահանաների նվիրագործման ժամանակ մենք տեսանք Ահարոնին և նրա որդիներին, որոնք ներկայացնում էին մեր Տեր Հիսուսին և Նրա Մարմինը՝ որպես «նոր արարածներ», իսկ զվարակը ներկայացնում էր նրանց մարդկային բնությունը, բայց մեր դիտարկելիք նախատիպի մեջ միայն Ահարոնն է ներկայացնում Օծյալին ամբողջությամբ (Գլուխը և Մարմինը), իսկ երկու տարբեր զոհերը՝ զվարակն ու նոխազը, օգտագործվում են այստեղ՝ ներկայացնելու Մարմնի և նրա Գլխի՝ որպես «մեղքի զոհի» տարբերությունը, բայց չարչարանքների նմանությունը։

Քավության օրվա առաջին զոհը
Զվարակ

Զվարակը ներկայացնում էր Հիսուսին երեսուն տարեկանում. կատարյալ մարդ, ով զոհաբերեց Իրեն և մահացավ մեզ համար։ Քահանայապետը, ինչպես արդեն տեսանք, ներկայացնում էր Հիսուսի «նոր» բնությունը՝ օծյալ Գլուխը, և Աստծուն նախապես հայտնի Նրա Մարմնի բոլոր անդամներին։ Այստեղ մարդու և «նոր արարածի» միջև նշված տարբերությունը պետք է հստակ հասկանալ և հիշել*։ «Քրիստոս

Հիսուս մարդը, ով զոհաբերեց Իրեն» երեսուն տարեկանում, Նա էր, ով նախկինում հարուստ էր (ունենալով ավելի բարձր բնություն), բայց հանուն մեզ աղքատացավ, այսինքն՝ մարդացավ, որպեսզի տա մարդկային միակ հնարավոր փրկագինը՝ կատարյալ մարդու կյանքը (Ա Կորնթ. 15:21):

---

* Տե՛ս Սուրբ Գրքի ուսումնասիրություններ, հատոր I, գլ. X, և հատոր II, էջ. 126:

Քանի որ մարդու մեղքի պատիժը մահն էր, անհրաժեշտ էր, որ մեր Փրկիչը մարդանար, «մարմին դառնար», այլապես Նա չէր կարող փրկել մարդկությանը: Մարդը մեղք գործեց, և դրա պատիժը մահն էր, և որպեսզի մեր Տերը հատուցեր այդ պատժի համար, անհրաժեշտ էր, որ Նա նույն բնությունն ունենար (բայց անարատ, մեղքից զուրկ և մեղավորների ցեղից) և մեռներ որպես Ադամի փոխանորդ, այլապես մարդկությունը երբեք չէր կարող ազատվել մահից: Այդ նպատակով Հիսուսը զոհաբերեց «այն ամենը, ինչ ուներ». փառքը՝ որպես կատարյալ մարդ, պատիվը, որին կարող էր հավակնել կատարյալ մարդը, և վերջապես կյանքը՝ որպես կատարյալ մարդ: Եվ դա այն ամենն էր, ինչ Նա ուներ (բացի Աստծու՝ նոր բնության մասին խոստումից և այդ խոստումի ծնած հույսից), քանի որ Նա Իր հոգևոր էությունը կամ գոյությունը փոխարինեց մարդկայինով, որը Նա մատուցեց իբրև «մեղքի զոհ» և որը խորհրդանշվում էր Քավության օրվա զվարակով (Հովհ.1:14, Ես. 53:10):

Բայց քանի որ «Քրիստոս Հիսուս մարդը» Իրեն տվեց որպես ՓՐԿԱԳԻՆ մեզ համար, ապա այստեղից հետևում է, որ Նա չի կարող վերադառնալ մարդկային բնությանը, որը Նա զոհաբերել է: Եթե Նա հետ վերցներ փրկագինը, մենք՝ փրկագնվածներս, նորից մահվան դատապարտության տակ կհայտնվեինք: Բայց, փառք Աստծու, Նրա զոհաբերությունը հավիտյան է, որպեսզի մենք հավիտյան ազատվենք ադամական մեղքից և դրա մահապատժից: Այսպիսով, եթե Հայրը երբևէ Հիսուսին որևէ պատիվ, փառք կամ կյանք շնորհեր՝ որպես վարձատրություն Նրա հնազանդության համար՝ նույնիսկ մինչև մահ, ապա դա կլիներ փառք, պատիվ և կյանք մարդկայինից տարբեր գոյության որևէ այլ հարթության վրա:

Սա էր Եհովայի նպատակը Հիսուսի համար, որ Նա բարձրացներ

Նրան մարդկային հարթությունից և Իր նախամարդկային վիճակից վեր, բոլոր հրեշտակներից, իշխանություններից և զորություններից վեր, Իր իսկ աջ կողմում (գլխավոր բարեհաճության վիճակը՝ Եհովայի կողքին) և դարձներ Նրան անմահության՝ Աստվածային բնության բաժնեկից։ Հիսուսը «Իր առջև դրված ուրախության փոխարեն խաչը հանձն առավ և ամոթն արհամարհելով՝ Աստծու աթոռի աջ կողմում նստեց» (Եբր. 12։2, Փիլ. 2։9, Եբր. 1։3, 4)։

Այն նոր բնությունը, որը մեր Տերը ստացավ մարդկային բնության փոխարեն և իբրև վարձատրություն՝ այն զոհաբերելու համար, այն է, ինչ այստեղ ներկայացնում է Քահանան։ Թեև ճիշտ է, որ մարդկային բնության զոհաբերությունն ավարտված չէր մինչև խաչը, և որ պարգևը՝ աստվածային բնությունը, ամբողջությամբ չէր ստացել մինչև հարությունը՝ երեք օր անց, սակայն Աստծու հաշվարկով և ինչպես ցույց է տրված այս նախատիպի մեջ, Հիսուսի (զվարակի) մահը համարվեց կատարյալ, երբ Հիսուսն Իրեն մատուցեց իբրև կենդանի զոհաբերություն՝ մկրտությամբ խորհրդանշելով Իր մահը։ Այնտեղ նա Իրեն մեռած համարեց՝ մեռած մարդկային բոլոր նպատակների համար, մարդկային փառքի, պատվի կամ կյանքի հույսերի համար այնպես, ինչպես մենք՝ նրա հետևորդները, հորդորվում ենք մեզ մեռած համարել աշխարհի համար, իսկ Աստծու համար՝ կենդանի՝ իբրև նոր արարածներ (Հռոմ. 6։11)։

Հիսուսի զոհաբերության այս ընդունումը Եհովայի կողմից Նրա նվիրագործման ժամանակ՝ կարծես ամեն ինչ ավարտված լիներ, և Նա իրոք մահացած լիներ, նշանավորվեց Սուրբ Հոգով օծմամբ. «գրավական» կամ երաշխիք, թե ինչ էր Նա ստանալու, երբ մահն իրականում վրա հասներ։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ զվարակի մահը խորհրդանշում էր Հիսուսի ինքնազոհությունն Իր նվիրագործման ժամանակ։ Սա համահունչ է առաքյալի հայտարարությանը Հիսուսի նվիրագործման կամ ինքնազոհության մասին։ Նա մեջբերում է մարգարեին. «Ահա գալիս եմ (ինչպես որ Սուրբ գրքի փաթույթում իմ մասին գրված է), որ քո կամքը կատարեմ»՝ մեռնելու և փրկելու շատերին։ Այստեղ ներշնչված հեղինակն ասում է. «Ջնջում է առաջինը [այսինքն՝ մի կողմ է դնում խորհրդանշական զոհաբերությունները], որպեսզի երկրորդը [նախատիպը, իրական զոհաբերությունը մեղքերի համար] հաստատի

[կամ կատարի] (Եբր. 10:7, 9, 14)։

Այո՛, տեղի ունեցավ զվարակի խորհրդանշած մեղքի զոհի մորթը, և Հիսուսի ծառայության երեքուկես տարիները ցույց տվեցին, որ մարդկային ողջ կամքը մեռած էր, և մարդու մարմինն էլ էր համարվում այդպիսին նվիրագործման պահից։

Օծյալ Հիսուսը՝ մկրտության պահին լցված Սուրբ Հոգով, աստվածային «նոր արարածն» էր (թեև ոչ կատարելագործված իբրև աստվածային մինչև հարությունը), և Նա միշտ հաստատում էր այս հարաբերությունը՝ ասելով. «Այն խոսքերը, որ ես ձեզ ասում եմ, ինքս ինձնից չեմ ասում [որպես մարդ], այլ Հայրը, որ իմ մեջ է [Իր Հոգու միջոցով], նա է գործերը կատարում»։ «Այն խոսքը, որ լսում եք, իմը չէ, այլ Հորը, որ ինձ ուղարկեց» (Հովհ. 14.10, 24) «Ոչ թե իմ [որպես մարդ], այլ քո կամքը [Հորը՝ Աստվածայինը] թող լինի» մահվան համար նվիրագործված «կավե անոթների» մեջ և համար (Ղուկ. 22:42)։

Զվարակը մորթվեց «Գավթում», որը, ինչպես տեսանք, խորհրդանշում էր առ Աստված հավատքի վիճակը և Նրա հետ ներդաշնակությունը, որը մարմնի՝ մարդկային բնության բարձրագույն ձեռքբերումն է։ Հիսուսն այդ վիճակում էր՝ լինելով կատարյալ մարդ, երբ զոհաբերվեց Աստծուն (նախատիպի զվարակը)։

Եկեք հիշենք այս տարբերությունները, երբ ուշադիր ուսումնասիրենք խորհրդանշական Քավության օրվա գործը, որպեսզի ավելի հստակ հասկանանք նախատիպային իրողությունները։ Ահարոնը լվացվեց՝ ներկայացնելու «նոր արարածի»՝ Գլխի և Նրա Մարմնի անդամների մաքրությունն ու անմեղությունը։ («Ամեն ոք, ով Աստծուց է ծնված, մեղք չի գործում, որովհետև նրա սերմն իր մեջ մնում է, և չի կարող մեղանչել, որովհետև Աստծուց է ծնված» (Ա Հովհ. 3:9, Դիագլոտ))։ Նոր արարածը չի կարող մեղանչել, և նրա պարտականությունն է մշտապես հսկել մեռած համարվող հին բնությանը, որպեսզի այն նորից չկենդանանա։ Այն, որ հին կամքը կիսում է վերահսկողությունը նորի հետ, նշանակում է, որ հինը չի մահացել, իսկ նորը չի «հաղթել»։ Հնի հաղթանակը կնշանակեր «նոր արարածի» մահ՝ «երկրորդ մահ»։

Ահարոնը զգեստավորվել էր «Քավության օրվա» ծառայության համար ոչ թե իր սովորական «փառքի և պատվի» զգեստներով, այլ զոհաբերության զգեստներով՝ «կտավե հագուստով», որը մաքրության՝

սրբերի արդարության խորհրդանիշն էր: Կտավե շապիկը գրավականն էր այն փառահեղ հագուստի, որը հաջորդելու էր: «Կտավե գոտին» նրան ներկայացնում էր որպես ծառայի, թեև ոչ այնքան զորեղ, որքան երբ «Քավության օրվա» վերջում նրան կապում էին եփուդի վրա գտնվող գոտին: Կտավե խույրը, որը նույնպես պատկանում էր փառքի զգեստներին, հռչակում է մեր Գլխի կատարյալ արդարությունը զոհաբերության ժամանակ, ինչպես նաև դրանից հետո: Այսպիսով, նախատիպային Քահանայապետը՝ աստվածային մտքով, հոգուց ծնված, թեև դեռ Հոգուց չծնված, պատրաստ էր և կարողացավ քավության զոհը մատուցել Իր առաջին գալստյան ժամանակ և շարունակեց անել այն՝ ինչպես նախապատկերել էր Ահարոնը:

«Ահարոնն այս բաներով պետք է մտնի սուրբ տեղը. մի զվարակով՝ մեղքի զոհի համար և մի խոյով՝ ողջակեզի համար: Ահարոնը պիտի մատուցի զվարակը որպես իր մեղքի զոհը [որը ներկայացնում է իրեն] և քավություն անի իր [իր մարմնի անդամների՝ կրտսեր քահանաների] և իր ընտանիքի [բոլոր հավատացյալների, «հավատքի ողջ տան»՝ ղևտացիների] համար: Եվ նա պետք է մորթի իր մեղքի զոհի զվարակը [որը ներկայացնում է իրեն]: Եվ Տիրոջ առաջ գտնվող զոհասեղանի վրայից վերցնի վառված կրակով լի բուրվառը, իր ձեռքերը լցնի մանր ծեծած անուշահոտ խնկով և տանի վարագույրից [առաջին վարագույրը կամ «դուռը»] ներս: Խունկը դնի այդ կրակի վրա, Տիրոջ առաջ, և խնկի ծուխը [ներթափանցելով երկրորդ վարագույրից] ծածկի վկայության [Օրենքի] տապանակի վրայի քավությունը, որպեսզի նա չմեռնի [խախտելով այս պայմանները, որոնց դեպքում միայն նա կարող է մտնել Աստվածային ներկայության մեջ]» (3,6,11-13 համարներ):

Անցնելով տիպից նախատիպին՝ եկեք հիմա քայլ առ քայլ համեմատենք Հիսուսի գործերը Նրա առաքելության այս մարգարեական պատկերի հետ: Երբ Քրիստոս Հիսուս մարդը նվիրագործվեց, Նա անմիջապես, որպես Սուրբ Հոգուց ծնված նոր արարած, վերցրեց զոհաբերված մարդկային կյանքը (զվարակի արյունը), որպեսզի այն Աստծուն մատուցի որպես փրկագին «մեր մեղքերի համար և ոչ միայն մեր, այլ նաև ամբողջ աշխարհի»: Հոգուց ծնված՝ Նա այլևս «Գավթի» վիճակում չէր, այլ առաջին «Սուրբ տեղում», որտեղ Նա պետք է մնար և Իր խունկը մատուցեր փորձության կրակի վրա. Նա պետք է ցույց տար Իր հավատարմությունն Աստծուն և արդարությունը՝ որպես ծնված Որդի Իր չարչարանքներով, նախքան «Սրբությունների սրբություն»,

այն է՝ կատարյալ հոգևոր վիճակի մեջ մտնելը (Եբր. 5:8):

Քահանայապետը զոհասեղանից վերցրեց կրակը (արյան հետ միասին) և իր երկու ձեռքերը լցրեց անուշահոտ խունկով՝ բուրմունք առաջացնելու համար: Այսպիսով, մեր Տեր Հիսուսի նվիրագործման ուխտի կատարումը Նրա ծառայության երեքուկես տարիների ընթացքում ընդունելի անուշահոտություն էր Հոր համար, որը վկայում էր նվիրագործման ամբողջության և զոհաբերության կատարելության մասին: Մանր ծեծած անուշահոտ խունկը ներկայացնում էր Հիսուս մարդու կատարելությունը: «Պղնձե զոհասեղանի» կրակը ներկայացնում էր այն փորձությունները, որոնց Նա ենթարկվեց, իսկ այն փաստը, որ Քահանան այն վերցրեց, նշանակում էր, որ մեր Տերն Իր հավատարիմ ընթացքով պետք է հալածանքներ բերեր Իր վրա: Եվ երբ Նրա էության կատարելությունները (խունկը) հանդիպեցին կյանքի փորձություններին (կրակը), Նա կատարելապես ենթարկվեց Աստվածային կամքին՝ դառնալով անուշահոտություն: Այսպիսով ցույց են տրվում Նրա փորձությունները բոլոր առումներով, սակայն առանց մեղքի: Ինչպես խունկը պետք է ամբողջությամբ սպառվեր կրակի մեջ, այնպես էլ Նա հնազանդությամբ տրվեց ամբողջովին: Նա ընծայեց քահանայի «երկու լցված ձեռքերը»՝ այսպիսով ներկայացնելով մեր Տիրոջ ողջ ունակությունն ու արդարության կարողությունը, որը պահանջվում էր և որը տրվեց:

Բայց մինչ Հիսուսը, որպես «նոր արարած», «Սուրբ տեղում» էր՝ վայելելով ոսկյա աշտանակի լույսը, սնվելով ճշմարտության հացով և ընդունելի խունկ մատուցելով Եհովային, եկեք նայենք դեպի «Գավիթը» և դեռ ավելի հեռու՝ «Բանակատեղիից» այն կողմ և տեսնենք միաժամանակ կատարվող մեկ այլ գործ: Վերջին անգամ մենք տեսանք դա «Գավթում». մորթված զվարակը, որը ներկայացնում էր Հիսուս մարդուն՝ նվիրագործված երեսուն տարեկանում Նրա մկրտության ժամանակ: Այժմ դրա ճարպը, իսկ դրա հետ մեկտեղ՝ երիկամներն ու զանազան կենսատու օրգանները դրված էին «Պղնձե զոհասեղանի» վրա: Դրանք կատաղի այրվում են, քանի որ զվարակը շատ ճարպ ունի: Ծխի մի ամպ, որը կոչվում է «անուշահոտություն Աստծու համար», բարձրանում է «Գավթում» գտնվող բոլորի աչքի առաջ, այն է՝ ղևտացիների՝ հավատքի տան, հավատացյալների:

Սա ցույց է տալիս, թե ինչպես է Հիսուսի զոհաբերությունը

հայտնվել հավատացյալներին։ Նրանք տեսան նվիրվածությունը, անձնազոհությունը, սիրառատ նախանձախնդրությունը (ճարպ), որ առ Աստված էին բարձրանում իբրև քաղցր և ընդունելի զոհաբերություն՝ մեր Տիրոջ առաքելության երեքուկես տարիների ընթացքում։ Նրանք լավ գիտեին, որ Հայրը միշտ գոհ էր Նրանից։ Իրենց տեսածից նրանք գիտեին, որ Նա ընդունելի էր «Գավթում» (մարմնի մեջ), թեև չէին կարող տեսնել զոհաբերությունն իր ողջ վեհությամբ և կատարելությամբ, ինչպես այն տեսանելի էր Եհովային («Սուրբ տեղում»), որպես անուշահոտ խունկ «Ոսկե զոհասեղանի վրա»։

Եվ մինչ այս երկու կրակները վառվում են («Գավթում»՝ «ճարպը», իսկ «Սուրբ տեղում»՝ «խունկը», և դրանց բուրմունքները միաժամանակ բարձրանում են), կա ևս մեկ կրակ «բանակատեղիից դուրս»։ Այնտեղ ոչնչացվում է մսեղեն մարմինը (համար 27)։ Սա ներկայացնում է, թե ինչպես է աշխարհը տեսնում Հիսուսի գործը։ Նրանց հիմարություն է թվում, որ Նա պետք է Իր կյանքը զոհաբերությամբ անցկացնի։ Նրանք չեն տեսնում դրա անհրաժեշտությունը՝ որպես փրկագին մարդու համար, ոչ էլ հնազանդության ոգին, որը մղեց Նրան դեպի այդ քայլը, ինչպես որ Հայրն է տեսնում։ Նրանք չեն տեսնում մեր Տիրոջ սիրառատ կատարելություններն ու անձնազոհությունը, ինչպես տեսնում են հավատացյալները («Գավթի» վիճակում)։ Ո՛չ էլ Նրա ժամանակներում և նույնիսկ դրանից հետո Նրա մեջ տեսել են իրենց իդեալական հերոսին և առաջնորդին. նրանք հիմնականում Նրա բնավորության մեջ տեսնում էին միայն այն տարրերը, որոնք արհամարհում էին որպես թույլ և չէին կարողանում սիրել և հիանալ Նրանով։ Նրանց համար Նրա զոհաբերությունը վիրավորական ու զզվելի էր և է. Նա արհամարհված ու մերժված էր մարդկանց կողմից, և նրանք կարծես կարմրում էին ու թաքցնում իրենց դեմքերը Նրանից, ինչպես, օրինակ, նախատիպում իսրայելացիները զզվում էին այրվող դիակի հոտից։

Այսպիսով, մենք տեսնում ենք, թե ինչպես Հիսուսի կյանքը երեքուկես տարվա ընթացքում լրացրեց այս երեք պատկերները. կատարյալ մարդու Նրա զոհաբերությունը հիմարություն և զազրանք էր աշխարհի աչքում, հավատացյալների աչքում՝ Աստծուն հաճելի զոհ, իսկ Եհովայի աչքում՝ «անուշահոտ խունկ»։ Նրանք բոլորն ավարտվեցին միաժամանակ՝ խաչի վրա։ Ձվարակը ամբողջությամբ ոչնչացվեց, ճարպը լիովին սպառվեց, իսկ խունկը ամբողջությամբ մատուցվեց, երբ Հիսուսը բացականչեց «Կատարված է» և մահացավ։

Այսպիսով, Քրիստոս Հիսուս մարդն Իրեն իբրև փրկագին տվեց բոլորի համար:

Քանի որ «Ոսկե զոհասեղանի» խունկը նախորդել էր Իրեն և գոհացուցիչ համարվել, Քահանայապետը երկրորդ «վարագույրով» անցավ «Սրբությունների սրբություն»: Այդպես եղավ Հիսուսի դեպքում. երեքուկես տարի «Սուրբ տեղում» ընդունելի խունկ մատուցելուց հետո, նվիրագործված և հոգուց ծնված վիճակում, Նա անցավ «երկրորդ վարագույրից»՝ մահվանից այն կողմ: Երեք օր Նա «վարագույրի» տակ էր՝ մահվան մեջ, այնուհետև Նա նորից բարձրացավ Աստվածային բնության կատարելությանը՝ մարմնից դուրս, վարագույրից այն կողմ, «Հոր էության արտահայտումը»: Նա «մահացավ մարմնով, բայց կենդանացավ հոգով», «Հողի մեջ է դրվում ինչպես շնչավոր մարմին և հարություն է առնում իբրև հոգևոր մարմին»: Այսպիսով, մեր Տերն Իր հարության ժամանակ հասավ «Սրբությունների սրբության» վիճակին՝ հոգևոր էության կատարելությանը (Ա Պետ. 3:18, Ա Կորնթ. 15:44):

Նրա հաջորդ գործը քավության արյունը՝ մեր փրկագինը, Աստծուն մատուցելն էր (համար 14), քանի որ «փրկվեցիք Քրիստոսի պատվական արյունով (զոհաբերված կյանքով)» (Ա Պետ. 1:19): Քահանան, Եհովայի ներկայությամբ՝ արտահայտված Շեքինայի լույսով, որը գտնվում էր քերովբեների միջև Քավության վրա, ցողում կամ ընծայում էր արյունը Եհովային. այն ցողում էր Քավության վրա և առաջ: Այսպիսով, մեր Տեր Հիսուսը քառասուն օր հետո վեր բարձրացավ, «որպեսզի այժմ Աստծու առաջ ներկայանա ՄԵԶ ՀԱՄԱՐ», և մեր անունից, որպես մեր փրկագին, ներկայացրեց Գողգոթայի վրա հենց նոր մատուցված զոհի արժեքն ու արժանիքը (Եբր. 9:24):

Քավության օրվա երկրորդ զոհը

Տիրոջ նոխազը

Այժմ մենք Քահանայապետին կթողնենք Քավության առաջ և դուրս կգանք գավիթ՝ ականատես լինելու մեկ այլ գործի: Մեջբերում ենք.

«Իսրայելի ժողովրդից նա այծերից երկու նոխազ թող վերցնի մեղքի զոհի համար և մեկ խոյ էլ՝ ողջակեզի համար: Ահարոնը պիտի մատուցի զվարակը որպես իր մեղքի զոհը և քավություն անի իր և իր ընտանիքի համար: Եվ վերցնի երկու նոխազները և դրանք կանգնեցնի Տիրոջ

առաջ, ժողովի վրանի մուտքի մոտ։ Ահարոնն այդ երկու նոխազների համար վիճակ պիտի գցի. մի վիճակը՝ Տիրոջ համար, իսկ մյուս վիճակը՝ ազատ արձակվելիք նոխազի համար։ Ահարոնը պիտի մոտեցնի այն նոխազը, որի վրա ընկել է Տիրոջ վիճակը, և մեղքի զոհ անի նրան։ Իսկ այն նոխազը, որի վրա ընկել է ազատ արձակվելիք նոխազի վիճակը, այն կենդանի կանգնեցնի Տիրոջ առաջ, որպեսզի քավություն անի նրա համար և իբրև ազատ արձակվելիք նոխազ՝ բաց թողնի նրան դեպի անապատ» (5-10 համարներ)։

Այս երկու նոխազները, վերցված Իսրայելից և բերված «Գավիթ», խորհրդանշում կամ ներկայացնում էին բոլոր նրանց, որոնք աշխարհից դուրս գալով և ընդունելով Հիսուսի փրկությունը՝ այս ավետարանական դարաշրջանում իրենց կյանքն ամբողջությամբ նվիրել են Աստծու ծառայությանը՝ նույնիսկ մինչև մահ։ Սկզբում դուրս բերվելով «Բանակատեղիից» կամ աշխարհի վիճակից՝ «մեղավորներն, ինչպես մյուսները» բերվեցին «Գավիթ»՝ հավատքի կամ արդարացման վիճակի։ Այնտեղ նրանք ներկայանում են Տիրոջ առաջ (ներկայացված ժողովի վրանի մուտքի մոտի նոխազներով)՝ ցանկանալով որպես մարդ մեռնել իրենց Փրկիչ Քրիստոս Հիսուսի հետ և մտնել երկնային կամ հոգևոր վիճակների մեջ այնպես, ինչպես Նա արեց. նախ, հոգևոր մտքի՝ հոգուց ծնված վիճակի մեջ, և երկրորդ, հոգևոր մարմնի՝ հոգուց ծնված վիճակի մեջ՝ ներկայացված համապատասխանաբար «Սուրբ տեղում» և «Սրբությունների սրբության» մեջ։

Բայց մեր Ուսուցիչն ասում է, որ ոչ բոլոր «Տե՛ր, Տե՛ր» ասողներն են մտնելու Երկնքի արքայություն։ Ուստի այս նախատիպը նույնպես ցույց է տալիս, որ նրանք, որոնք ասում են. «Տեր, ահա ես նվիրվում եմ ամբողջովին», ավելին են խոստանում, քան պատրաստ են կատարել։ Նրանք չգիտեն, թե ինչ են խոստանում և թե ինչ գին ունի անձնազոհությունը. ամեն օր վերցնել խաչը և գնալ Հիսուս մարդու [զվարակի] հետքերով. «բանակատեղիից գնալ նրա մոտ [լիովին անտեսելով և ոչնչացնելով մարդկային հույսերը և այլն] ու նրա կրած նախատինքը մեզ վրա վերցնել» (Եբր. 13.13)։

Երկու նոխազների այս նախատիպում ներկայացված են այն մարդկանց երկու դասերը, որոնք ուխտել են մեռնել Քրիստոսի հետ, նրանք, որոնք իրականում գնում են Նրա հետքերով, ինչպես Նա մեզ օրինակ է տվել, և նրանք, ովքեր «իրենց ամբողջ կյանքում գերված

են մահվան ահից» (Եբր. 2.15)։ Առաջին դասը «Տիրոջ նոխազն է», երկրորդը՝ «քավության նոխազը»։ Նոխազների այս երկու դասերն էլ, ինչպես կտեսնենք, իրենց դերը կունենան քավության գործում՝ աշխարհը լիովին ներդաշնակեցնելով Աստծու և Նրա Օրենքի հետ, երբ այս «Քավության օրը»՝ Ավետարանի դարաշրջանը, վերջանա։ Բայց միայն առաջին դասն է՝ «Տիրոջ նոխազը», որ հետևում է Առաջնորդին, համարվում «մեղքի զոհի» մի մասը և, ի վերջո, Նրա փառավորված Մարմնի անդամները։

Վիճակահանությունը, որով որոշվելու էր, թե որ նոխազն է «Տիրոջ նոխազը», իսկ որը՝ «քավության նոխազը», ցույց տվեց, որ Աստված չի ընտրում, թե ներկայացվածներից ո՛րն է ստանալու մրցանակը։ Սա ցույց է տալիս, որ Աստված կամայականորեն չի որոշում, թե նվիրագործվածներից ո՛վ պետք է դառնա աստվածային բնության բաժնեկից և մեր Տեր Քրիստոսի ժառանգակից, և ով՝ ոչ։ Նրանք, ովքեր չարչարվում են Նրա հետ, կթագավորեն Նրա հետ, իսկ նրանք, ովքեր փախչում են կրակի փորձություններից՝ փոխզիջումների գնալով, կկորցնեն նաև փառքին հաղորդակից լինելը (Հռոմ. 8։17)։

Յուրաքանչյուր հավատացյալ, յուրաքանչյուր արդարացված (ղևտացի) «Գավթում», ով ներկայանում է Քավության օրը, Ավետարանի դարաշրջանում, ընդունելի զոհաբերություն է. այժմ ընդունելի ժամանակն է։ Իսկ ուխտը պահողն ու զոհ մատուցողը սովորաբար խորհրդանշվում է «Տիրոջ նոխազով»։ Նրանք, ովքեր չեն զոհաբերվում՝ «ներկայիս աշխարհը սիրելով», ներկայացված են «քավության նոխազով»։

Եկեք վերադառնանք Քահանայապետին. այն բանից հետո, երբ նա յոթ անգամ (կատարելապես) ցողի զվարակի արյունը «Քավության» (բառացի՝ Քավության վայրի) վրա, թող «մորթի մեղքի քավության նոխազը, որ ժողովրդի համար է, և նրա արյունը տանի վարագույրից ներս. նա այդ արյան հետ անի այնպես, ինչպես վարվեց զվարակի արյան հետ, այսինքն՝ այն շաղ տա քավության վրա և քավության առաջ» (14, 15 համարներ)։ Մի խոսքով, այն, ինչ արվում էր զվարակի հետ, կրկնվում էր «Տիրոջ նոխազի» հետ։ Նույն Քահանայապետը մորթում էր այն. դրա արյունը ցողում ճիշտ նույն կերպ, դրա ճարպը և այլն, նույնպես այրվում էր «Գավթում» գտնվող զոհասեղանի վրա։ (Արժե նշել, որ թեև հիմնական զվարակը միշտ շատ գեր է, նոխազը

շատ նիհար կենդանի է: Այսպիսով, մեր Տեր Հիսուսը՝ ներկայացված զվարակով, ուներ շատ ճարպ՝ նախանձախնդրություն և սեր Իր զոհաբերության հանդեպ, մինչդեռ Նրա հետևորդները՝ ներկայացված նոխազով, համեմատաբար նիհար են): «Տիրոջ նոխազի» մարմինն այրում էին այնպես, ինչպես զվարակի մարմինը՝ «բանակատեղիից դուրս»:

Պողոս առաքյալը բացատրում է, որ միայն մեղքի զոհ հանդիսացող կենդանիներն են այրվել բանակատեղիից դուրս: Եվ հետո ավելացնում է. «Ուրեմն եկեք բանակատեղիից գնանք նրա մոտ ու նրա կրած նախատինքը մեզ վրա վերցնենք» (Եբր. 13:11-13): Այսպիսով, ոչ միայն անհերքելի ապացույց է բերվում, որ Հիսուսի հետևորդները ներկայացված են «Տիրոջ այս նոխազով», այլ նաև, որ նրանց զոհաբերությունը՝ հավասարվելով իրենց Գլխին՝ Հիսուսին, ամբողջ աշխարհի մեղքի զոհի մաս է կազմում: «Քեզ նախատինք տվողների նախատինքներն ընկան ինձ վրա» (Սաղմ. 69:9):

Մեղքի զոհի դեպքում նոխազի հետ վարվում են այնպես, ինչպես զվարակի հետ. «բանակատեղիից դուրս» այրելը ներկայացնում է այն անարգանքը, որով զոհը կընդունվեր բանակատեղիից դուրս գտնվողների կողմից, այն է՝ անհավատների, որոնք Աստծու հետ ուխտի հարաբերությունների մեջ չէին: (1) Նրանք, ովքեր ընդունում են Քրիստոսի Մարմնի զոհաբերությունն աստվածային տեսանկյունից՝ որպես անուշահոտություն Աստծու համար, որը ներթափանցում և հասնում է նույնիսկ մինչև Քավություն, շատ քիչ են. միայն նրանք են, ովքեր իրենք գտնվում են «Սուրբ տեղում»՝ «Քրիստոսի հետ նստած երկնքում»: (2) Նրանք, ովքեր ընդունում են սրբերի զոհաբերությունները՝ ներկայացված Պղնձե զոհասեղանի վրա մատուցված մեղքի զոհի «Տիրոջ նոխազի» ճարպով, և ովքեր համարում են իրենց անձնազոհությունն իբրև Աստծուն ընդունելի, ավելի շատ են. բոլոր նրանք են, ովքեր արդարացված են և զբաղեցնում են «Գավիթը»՝ «հավատքի տունը»: (3) Նրանք, ովքեր գտնվում են բանակատեղիից դուրս, ովքեր այս զոհաբերողներին և նրանց անձնազոհությունը համարում են միայն «երկրի աղտեղության և տականքների» սպառում, Աստծուց հեռու դասակարգն են, Նրա՝ «չար գործերի մեջ գտնվող թշնամիները»: Նրանց է վերաբերում մեր Տիրոջ կանխասացությունը. «իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար բան զրպարտությամբ կասեն»:

Ի՞նչ են սովորեցնում սրանք: Քանի դեռ մենք ինքներս ճշմարիտ զոհաբերողներ ենք «Սուրբ տեղում» կամ «հավատքի տան» ճշմարիտ անդամներ՝ «Գավթում», մենք չպետք է նախատենք ներկայիս ճշմարիտ զոհաբերողներից և ո՛չ մեկին և ոչ էլ կուրանանք չարությամբ, ատելությամբ, նախանձով կամ կռվով, որպեսզի չտեսնենք Աստծու համար ընդունելի զոհաբերությունները: Ուրեմն ի՞նչ պետք է ասենք նրանց մասին, ովքեր ժամանակին «եղբայրներ» են եղել, ովքեր մասնակցել են նույն զոհաբերություններին և մատուցել դրանք նույն «Ոսկե զոհասեղանի վրա», ովքեր եղել են թագավորական քահանայության կարգի անդամներ, և ովքեր այնքան են փոխվել, այնքան են տիրել հակառակ ոգուն, որ կարող են շարունակ չարախոսել իրենց քահանա եղբայրներին: Մենք անկասկած պետք է «վախենանք» նրանց համար (Եբր. 4:1), որ նրանք հեռացել են «Սուրբ տեղից» և «Գավթից» և դուրս են եկել Աստծու հետ բոլոր հարաբերություններից՝ դեպի «արտաքին խավար»: Մենք մեր ուժերի ներածին չափով պետք է ամեն ինչ անենք՝ նրանց հետ վերադարձնելու համար (Հակոբոս 5:20), բայց ոչ մի դեպքում չպետք է լքենք «Սուրբ տեղը»՝ չարին չարով, կամ նախատինքին նախատինքով պատասխանելու համար: Հավատարիմ կրտսեր քահանաներից ո՛չ բոլորը պետք է գնան մեծ Քահանայապետի հետքերով, սիրեն իրենց թշնամիներին և բարություն անեն իրենց հալածողներին: Նրանք պետք է ընդօրինակեն Նրան. «Նախատվելիս նա փոխարենը չէր նախատում, չարչարվելիս չէր սպառնում, այլ հանձնվեց արդար դատավորին» (Ա Պետ. 2:23):

Տիրոջ նոխազը ներկայացնում էր Տիրոջ հավատարիմ հետևորդների ողջ «փոքր հոտը»: Նրանք բոլորն էլ նման են. նրանք բոլորը գնում են նույն «նեղ ճանապարհով», հետևաբար այն, ինչ վերաբերում է բոլորին, վերաբերում է նաև նրանցից յուրաքանչյուրին: Հետևաբար «Տիրոջ նոխազը» ներկայացնում էր յուրաքանչյուրին և յուրաքանչյուրի զոհաբերությունը, բացի նրանից, որ ամբողջը պետք է լրացվեր, և բոլորի զոհաբերությունն ավարտվեր մինչև նոխազի (որը ներկայացնում էր Քրիստոսի ողջ Մարմինը) «արյունը» մատուցվեր «Քավության» վրա:

Արյունը, որը ցողվում էր «Քավության» վրա և առաջ, խաչի տեսքով էր, իսկ խաչի գագաթը կամ գլուխը գտնվում էր «Քավության» վրա: Դրա մասին է վկայում այս նկարագրությունը. «Եվ առնի այդ զվարակի արյունից, իր մատով շաղ տա քավության վրա՝ արևելյան կողմից [դեպի

«վարագույրը»], և քավության առաջ [դիմաց, առջևում] արյունից իր մատով շաղ տա յոթ անգամ»: Այսպես ավարտվեցին Իսրայելի մեղքերի համար մատուցված մեղքի զոհերը. զվարակը՝ կրտսեր քահանաների, Քահանայապետի «մարմնի» և ղևտացիների՝ ներկայիս դարաշրջանի «հավատքի տան» համար, իսկ նոխազը՝ «ժողովրդի համար», Իսրայելի համար, որը նախապատկերում է ողջ աշխարհը, որը ապագայի գիտելիքի ու հնարավորությունների շնորհիվ դառնալու է Աստծու ժողովուրդ:

Այսպիսով, մենք հստակ տեսնում ենք, որ Ավետարանի այս ողջ դարաշրջանը տառապանքի և մահվան ժամանակ է նրանց համար, ովքեր զոհաբերում են մարդկայինը, երկրայինը, բնությունը՝ դառնալու հոգևորի, երկնայինի բաժնեկից: Երբ Հիսուսի զոհաբերությունն Իր «Մարմնի» և «տան» անունից ավարտվեց և ներկայացվեց Հորը՝ Նրա համբարձումից հետո, ուղարկվեց Հոր կողմից Նրա զոհաբերության ընդունելի լինելու ապացույցը՝ Նրա Եկեղեցու, Նրա Մարմնի և Նրա տան ներկայացուցիչների՝ Պենտեկոստեի մկրտությունը: Այնտեղ Նրա օծումը՝ Սուրբ Հոգին (խորհրդանշված սուրբ օծության յուղով), իջավ Եկեղեցու վրա և այդ ժամանակվանից մնաց Քահանայապետի Մարմնի բոլոր կենդանի անդամների վրա, և կրկնության կարիք չկա, քանզի յուրաքանչյուր ոք, ով ընկղմված է Քրիստոսի մեջ՝ որպես Նրա Մարմնի անդամ, այդպիսով ընկղմված է Նրա Սուրբ Հոգու մեջ, որը կենդանացնում է այդ Մարմնի յուրաքանչյուր անդամի:

Սուրբ Հոգու այս էջքը Աստծու նշանն էր, որ ընդունելի են բոլոր նրանք, որոնք հավատում էին Հիսուսին, որոնք արդեն նվիրագործված էին և Ուսուցչի առաջնորդությամբ սպասում էին, որ Հայրը կընդունի նրանց զոհերը (ընդունելի՝ Սիրելիի միջոցով), և նրանք որդեգրության Հոգու միջոցով կծնվեն որպես որդիներ: Պենտեկոստեի ժամանակ Սուրբ Հոգու այս գալուստը, Տիրոջ զորությունը կամ «ձեռքը» նախատիպում (համար 15) պատկերված է Քահանայապետի միջոցով, որը գնում էր դեպի ժողովի վրանի մուտքը, ձեռքերը դնում «Տիրոջ նոխազի» վրա և մորթում այն: Ինչպես Հոր Հոգին հնարավորություն տվեց Հիսուսին անել այն ամենը, ինչ ներկայացված էր զվարակի սպանությամբ, այնպես էլ նույն Հոգին՝ Աստծու Հոգին, զորությունը կամ ներգործությունը, Ճշմարտության Հոգին կամ ներգործությունը «Տիրոջ նոխազների» դասի վրա, Քրիստոսի միջոցով, նրանց հնարավորություն է տալիս խաչվել որպես մարդ, այն է՝ մորթել նոխազին՝ ապականված կամքը՝

աստվածային բնության խոստացյալ փառքի, պատվի, անմահության հույսով՝ իբրև «Քրիստոսով նոր արարածներ»։

Օրինակ՝ Պողոս Առաքյալը, ունենալով Առաջնորդի և Գլխի Հոգին, կարող էր ամեն ինչ կորած և անարժեք համարել՝ Քրիստոսին [անդամակցությունը] շահելու և Նրա մեջ գտնվելու համար։ Այս հույսով և Հոգով ներշնչված՝ նա կարող էր ասել. «Ես [նոր արարածը] ողջ եմ, բայց դա այլևս ես չեմ [հին արարածը՝ ներկայացված նվիրաբերված նոխազով]»։ Այն սպառվում էր՝ բանակատեղիից դուրս աշխարհի նախատինքին ու արհամարհանքին արժանանալով։ Պողոսի երկրային բոլոր զգացմունքներն ու կարողությունները մատուցվեցին Աստծուն՝ որպես կենդանի զոհաբերություն։ Դրանից հետո նրա մեջ Քրիստոսն էր ապրում, փառքի հույսը՝ Քրիստոսի միտքը՝ խաչելով ու ճնշելով նրա ապականված ու արդարացված մարդկային բնությունն ու դրա կամքը։

Այս աշխարհում գտնվելով՝ նա այս աշխարհից չէր, և դա այնքան ճշմարիտ էր, որ նա կարող էր ասել. «Եթե հիմա ապրում եմ մարմնով, ապրում եմ Աստծու Որդու հավատով» (Գաղ. 2.20)։ Այո՛, հավատքով նա համարվեց «նոր արարած», որին, հավատարիմ լինելու դեպքում, պատկանում են Աստվածային բնության ամենամեծ ու պատվական խոստումները (Բ Պետ. 1։4)։ Նա ապրում էր «Սուրբ տեղի» վիճակում, սնվում էր «առաջավորության հացով» և անընդհատ լուսավորվում էր «Ոսկե աշտանակի» լույսով։ Այդպիսով ձեռք բերելով գիտելիք և ուժ՝ նա կարողացավ Աստծուն հաճելի «խունկ» մատուցել Հիսուս Քրիստոսի միջոցով, այսինքն՝ Պողոս առաքյալի զոհաբերությունը՝ շնորհիվ նրան վերագրվող Հիսուսի արժանիքների, ընդունելի էր Աստծու համար։ Այսպիսով, նա նոխազի բնությունը միշտ զոհաբերված էր պահում. նա ոչ միայն մեռած էր պահում մարմնական կամքը, այլ որքան հնարավոր էր, ճնշում էր մարմնեղեն մարմինը՝ ենթարկելով նոր կամքին։ Նույնն արեցին «Տիրոջ նոխազի» այս դասի մյուս անդամները, թեև մյուսներն այնքան էլ հայտնի չէին։ Պողոսի զոհաբերությունը շատ հարուստ բուրմունք արձակեց. նրանը շատ անուշահոտ զոհաբերություն էր Աստծու համար, սակայն ինչպես մեր պարագայում է, այն ընդունելի էր Աստծուն ո՛չ թե իր արժանիքի համար, այլ որովհետև այն մատուցվեց «Ոսկե զոհասեղանի վրա» և Քրիստոս Փրկչի արժանիքներին բաժնեկից եղավ։

Ինչպես նոխազը լրացնում է մեղքի զոհի պակասը՝ ավարտին

հասցնելով զվարակով սկսված զոհը, այնպես էլ «փոքր հոտը», հետևելով Հիսուսին, «լրացնում է Քրիստոսի նեղությունների պակասը» (Կող. 1.24)։ Այնպես չէ, որ մեր զոհաբերություններն ինքնին արժեքավոր էին, ինչպես մեր Տիրոջ պարագայում է, քանի որ միայն Նա էր կատարյալ և կարող քավելու՝ իբրև մեղքի զոհ մատուցվելու համար։ Մեր զոհաբերությունների ընդունելիությունը պայմանավորված է նրանով, որ Նրա արժանիքները վերագրվում են մեզ՝ նախ արդարացնելով մեզ, ապա շնորհի միջոցով, որը հնարավորություն է տալիս մեզ մեր արդարացված անձերը մատուցել մեր Տիրոջ կատարյալ զոհաբերության հետ միասին, մենք՝ որպես Նրա մարմնի անդամներ, չարչարակից ենք լինում Քրիստոսին, որպեսզի ի վերջո բաժնեկից լինենք նաև Նրա փառքին՝ մասնակցելով բոլոր ազգերին օրհնելու Նրա ապագա գործին՝ վերականգնվելու առավելություններով և հնարավորություններով։

Պետք է գա մի պահ, երբ «Աստծու նոխազի» այս դասի վերջին անդամների զոհաբերությունն ավարտվի և մեղքի զոհն ընդմիշտ դադարի։ Այլ տեղերում բերված ապացույցների հիման վրա՝ մենք հաստատապես հավատում ենք, որ մենք այժմ «Քավության օրվա» վերջում ենք, և որ «Աստծու նոխազի» այս դասի վերջին անդամներն այժմ զոհաբերվում են։ Շուտով այս դասի՝ Քրիստոսի Մարմնի վերջին անդամները կանցնեն երկրորդ «վարագույրից»՝ մարմնից այն կողմ, դեպի հոգևոր բնության կատարելությունը, որն արդեն սկսվել է նոր մտքում կամ կամքում և որն այժմ վերահսկում է նրանց մահկանացու մարմինները։ Եվ ոչ միայն սա, այդպիսի հավատարմություն ունեցողներին խոստացվում է հոգևոր բնություններից ամենաբարձրը՝ «Աստվածային բնությունը» (Բ Պետ. 1.14)։

Երկրորդ «վարագույրից» անցնելը Մարմնի համար նույնն է, ինչ Գլխի համար, այսինքն՝ նոխազի արյուն մատուցելը նույն նշանակությունն ունի, ինչ զվարակի արյուն մատուցելը։ Քահանայի մարմինը, երկրորդ «վարագույրով» անցնելով և կրելով նոխազի արյունը, ներկայացնում էր Քրիստոսի Մարմնի անցումը մարդկային պայմաններից դեպի Աստվածային բնության կատարելությունը, երբ մենք կնմանվենք Քրիստոս Հիսուսին, որն այժմ «Հոր էության արտահայտումն» է։ Օ՜ երանելի հույս։ «Երբ արթնանամ, պիտի կշտանամ քո նմանությամբ»,- մարգարեաբար ասվել է Հիսուսի մասին, և որքա՜ն վեհ է խոստումը, որ «նրա նման կլինենք» (Եբր. 1:3, Հռոմ. 8:29, Սաղմ. 17:15, Ա Հովհ. 3:2)։

Եթե մեզ հաջողվի շահել մրցանակը, որի համար վազում ենք, ապա.

«Թող անհետանան բոլոր երազանքները,

որ ունեինք կամ փնտրում էինք երկրի վրա,

քանզի այնքա՜ն հարուստ է մեր վիճակը.

Երկնային հեռանկարները բաց են մեզ համար»։

«Սրբությունների սրբություն» հասնելը, որը Մարմնի զոհաբերության վկայությունն է «ժողովրդի համար», կներկայացվի «Քավության» վրա ցողված նոխազի արյան միջոցով։ «Եվ քավություն անի սրբարանի համար Իսրայելի որդիների անմաքրություններից և նրանց բոլոր մեղքերից ու հանցանքներից։ Եվ այսպես անի ժողովի վրանի հետ, որ նրանց հետ է լինում իրենց անմաքրությունների մեջ» (Ղևտ. 16։16)։

Ներկայացվելիս՝ այն կընդունվի «ժողովրդի համար», ինչպես որ մեր փառապանծ Առաջնորդինն ընդունվեց «Իր [Իր Մարմնի] և Իր տան [հավատքի տան] համար»։ Այսպիսով կավարտվի հաշտության գործը։ Մեղքն ու դատապարտությունը լիովին ծածկված կլինեն բոլորի համար, որին արագորեն կհետևի այս քավության մեծ արդյունքներն աշխարհին փոխանցելու խոշոր գործը ճիշտ այնպես, ինչպես Հոգեգալստյան օրհնությունն իջավ «Մարմնի» վրա, իսկ դրա ակամա ազդեցությունը՝ «տան» վրա Հիսուսի զոհաբերությունն ընդունելուց անմիջապես հետո, երբ Նա անցավ մարմնի «վարագույրից» այն կողմ և Աստծու առաջ ներկայացրեց մեր փրկագին-զոհաբերությունը։

Բոլոր իրերն արյունով ցողելը ցույց էր տալիս, որ «արյունը» լիակատար հաճություն էր, ինչպես նաև ցույց էր տալիս, որ դրան հաջորդած «քավության նոխազի» հետ գործ ունենալը մեղքի զոհի մաս չէր կազմում և անհրաժեշտ չէր «հաշտությունն» ավարտին հասցնելու համար։ Ուստի դրա մեջ պետք է այլ նպատակ ու իմաստ տեսնենք։

Քավության նոխազը

«Երբ վերջացնի սուրբ տեղի [«Սրբությունների սրբության»], ժողովի վրանի [«Սուրբ տեղի»] և զոհասեղանի համար [«Գավթում»] քավություն անելը, թող մոտ բերի կենդանի նոխազը։ Ահարոնն իր երկու ձեռքերը դնի կենդանի նոխազի [քավության նոխազի] գլխին և դրա վրա խոստովանի Իսրայելի որդիների [որ խորհրդանշում է աշխարհը]

բոլոր անօրենություններն ու նրանց գործած բոլոր հանցանքներն իրենց բոլոր մեղքերով: Նա դրանք թող դնի նոխազի գլխին և այն ուղարկի դեպի անապատ մի հատուկ մարդու [ցանկացած հարմար մարդու] միջոցով» (20-22 համարներ):

Ինչպես արդեն ասվեց, մենք հասկանում ենք, որ այս «քավության նոխազը», որը ներկայացվեց մյուսների հետ, բայց չզոհաբերվեց և չհետևեց զվարակի օրինակին, ներկայացնում էր Աստծու ժողովրդի մի դաս, որն աշխարհի համար մեռնելու, իրենց արդարացված մարդկային բնությունը զոհաբերելու ուխտ էր կապել, բայց չմատուցեց ուխտած զոհաբերությունները: Այս «նոխազը» չի ներկայացնում նրանց, որոնք «ընկրկողներ չեն, որ կորսվեն», «Շունն իր փսխածին է վերադառնում» տեսակին (Եբր. 10:39, Բ Պետ. 2:22), այլ այն դասակարգին, որը ձգտում է խուսափել մեղքից, ապրել բարոյապես և պատվել Տիրոջը, սակայն փնտրելով նաև աշխարհի պատիվն ու շահը՝ Տիրոջը և Նրա գործին ծառայելիս հրաժարվում է երկրային իրավունքները զոհաբերելուց:

«Քավության նոխազների» այս դասը գոյություն է ունեցել Ավետարանի ողջ դարաշրջանում: Մեկ նոխազը և նրա հետ կատարված աշխատանքը «Քավության օրվա» վերջում, ընդհանուր առմամբ, ներկայացնում էին այդ դասի յուրաքանչյուր մարդու այդ դարաշրջանում, թեև այն հատկապես ներկայացնում էր այդ դասի այն անդամներին, ովքեր ապրում էին զոհաբերության դարաշրջանի վերջում: Եկեք նախ տեսնենք, թե Աստված ինչպես է վարվելու այս դասի այն անդամների հետ, որոնք ողջ կլինեն, երբ մեղքի զոհի աշխատանքն ավարտվի, այն է՝ «քավության նոխազների» դասի վերջին անդամների հետ, և հետո տեսնենք, թե այս նախատիպն ինչպես է վերաբերվում նույն դասի նախորդ անդամներին:

Հիշեք, որ «մեղքի զոհից» հետո մենք այժմ գործ ունենք գալիք բաների հետ: «Տիրոջ նոխազը» դեռ ամբողջությամբ սպառված չէ, հետևաբար «փոքր հոտը»՝ ի դեմս Քահանայի մարմնի, դեռևս չի անցել երկրորդ «վարագույրից»՝ հասնելով հոգևոր կատարելության վիճակի, իսկ կենդանի «քավության նոխազի» հետ հատուկ աշխատանք կկատարվի միայն դրանից հետո:

Սուրբգրային այլ հատվածներ (Հայտն. 7:9, 13-17 և Ա Կորնթ. 3:15) ցույց են տալիս, որ կլինի «մեծ ամբոխ», որոնք այս դարաշրջանում հավակնում էին Հիսուսին ժառանգակից լինելու գլխավոր մրցանակին

և չկարողացան «այնպե՛ս վազել» այն ստանալու համար: Այս մարդիկ, թեև «զրկված» են մրցանակից (Ա Կորնթ. 9:27), սակայն հադիսանում են Տիրոջ սիրո առարկան, քանի որ իրենց սրտերում նրանք արդարության և ո՛չ թե մեղքի համակիրներ են: Ուստի Իր նախախնամությամբ՝ կյանքի հանգամանքների բերումով, Տերը կստիպի նրանց անցնել «մեծ նեղության միջով»՝ դրանով իսկ նրանց համար այնպես անելով, «որպեսզի մարմինը կորչի, և հոգին փրկվի մեր Տեր Հիսուսի դատաստանի օրը» (Ա Կորնթ. 5.5): Նրանք նվիրագործեցին իրենց արդարացված մարդկային կյանքը, իսկ Աստված ընդունեց այդ նվիրագործությունը և, ըստ իրենց ուխտի, նրանց համարեց մահացած՝ իբրև մարդ, և կենդանի՝ իբրև նոր՝ հոգևոր արարածներ: Բայց չկատարելով անձնազոհության ուխտը՝ նրանք կտրեցին իրենց «թագավորական քահանայությունից»՝ Քրիստոսի Մարմնի անդամությունից: «Յուրաքանչյուր որթաճյուղ, որ ինձ վրա է և պտուղ չի տալիս, նա կտրում է այն» (Հովհ. 15:2):

Նրանք անմխիթար վիճակում են. նրանք չկարողացան նվաճել մրցանակը, ուստի նրանք չեն կարող ունենալ աստվածային բնություն, ոչ էլ կարող են աշխարհի հետ միասին վերադարձնել կատարյալ մարդկային բնությունը, որովհետև իրենց նվիրագործությամբ մարդկային բոլոր իրավունքներն ու արտոնությունները փոխանակեցին հոգևորի հետ, ինչպես նաև աստվածային բնության համար մրցավազքին մասնակցելու հնարավորության հետ: Բայց թեև նրանք կամավոր հաղթողներ չեն, Տերը սիրում է նրանց և կփրկի նրանց, ովքեր մահվան ահից (արհամարհանքի ահից, նախատինքի ահից, որոնք զվարակն ու նոխազը տարան «բանակատեղիից» դուրս՝ անապատ, առանձնացված կամ մեռած վիճակ) իրենց ողջ կյանքում գերության մեջ են եղել. գերություն մարդկանց ահից, մարդկանց ավանդույթներից ու կարծիքներից, որոնք միշտ թակարդ են լարում և խանգարում, որ լիովին հնազանդվեն Աստծուն՝ նույնիսկ մինչև մահ (Եբր. 2:15):

Քահանայապետի բարեհաճությամբ այս մեծ դասը պետք է անցնի «մեծ նեղության» միջով և կործանի մարմինը: Սա նրանց կամավոր հաղթանակողներ կամ Մարմնի՝ Քրիստոսի Հարսի անդամներ չի դարձնի: Սա նրանց տեղ կտա ո՛չ թե թագավորների և քահանաների գահի վրա, այլ «գահի առաջ»՝ իբրև կատարյալ հոգևոր էակների, որոնք սակայն չեն պատկանում բարձրագույն հոգևոր՝ աստվածային

կարգին: Թեև նրանք չեն արժանանա կյանքի, անմահության պսակին, սակայն եթե ճիշտ անցնեն նեղության միջով, նրանք կհասնեն «հրեշտակային նմանության» վիճակին: Նրանք կծառայեն Աստծուն Նրա Տաճարում, թեև չեն լինի այդ խորհրդանշական Տաճարի անդամները, որը Քրիստոսն է (Հայտ. 7:14, 15):

Այս դասը՝ ներկայացված «քավության նոխազով», կուղարկվի անապատ՝ բաժանվելու աշխարհից, նրան այնտեղ կուղարկի «պատեհապաշտ մարդը»՝ անբարենպաստ հանգամանքները, որտեղ նրանք տանջվելու են դժբախտություններից, մինչև չհասկանան աշխարհի հավանության ունայնությունը, խաբեությունը և բացարձակ անարժեքությունը, մինչև չմեռնեն մարդկային բոլոր հույսերն ու նկրտումները, և նրանք պատրաստ լինեն ասելու. «թող Աստծու, ոչ թե իմ կամքը կատարվի»: Աշխարհը միշտ պատրաստ է արհամարհելու և վտարելու ճնշվածներին և տառապյալներին, նույնիսկ եթե նրանք անկեղծորեն փափագում են նրա խաբուսիկ ժպիտին և դատարկ պատիվներին: «Քավության նոխազի» մարմինն անապատում չէին այրում. այրում էին միայն մեղքի զոհերը (զվարակն ու «Տիրոջ նոխազը» (Եբր. 13:11): Մեղքի զոհերի այրումը ներկայացնում էր այս դասերի մշտական, շարունակական ենթարկումը կրակի տառապալից չարչարանքներին. «հավատարիմ [կամավոր զոհաբերություններ] մինչև մահ»: Երկու դասերն էլ տառապում են նույնիսկ մինչև մարդու կամքի և մարմնի մահ, բայց առաջին դասի ներկայացուցիչները մահանում են կամավոր՝ մարմնի մշտական խաչելությամբ, ինչպես ցույց է տալիս կրակի խորհրդանիշը, որն անընդհատ այրվում է՝ մինչև այրելու ոչինչ չմնա: Երկրորդ դասի ներկայացուցիչներին ուղղակի ուղարկում են անապատ և թողնում այնտեղ՝ ակամա մեռնելու: Աշխարհի կողմից արհամարհանքը, ծաղրն ու նախատինքը սպանում են աշխարհի հավանության հանդեպ նրանց սերը, իսկ այդ ընթացքում նրանց նոր հոգևոր բնությունը հասունանում է կյանքի համար: «Աստծու նոխազների» դասը հրաժարվում է մարդկային բնությունից Տիրոջ հոգով և օգնությամբ՝ զոհաբերությամբ, հոժարությամբ, կամավոր կերպով. «քավության նոխազների» դասն Աստվածային նախախնամությամբ ոչնչացնում է իրենց մարմինը, որպեսզի հոգին փրկվի:

Սա պատահելու է «Քավության նոխազների» այս դասի վերջին անդամներին ո՛չ միայն մոտ ապագայում, այլև որոշակիորեն

կատարվել է Ավետարանի ողջ դարաշրջանում, որովհետև միշտ եղել է մի դասակարգ և բավականին մեծ, որն իր կամքը սպանել է միայն հարկադրաբար, և փոխանակ կամավոր զոհ մատուցելու՝ տառապել է «մարմնի կորստից»։ (Ա Կորնթ. 5:5) Երկու նոխազներով ներկայացված դասերն ամբողջ դարաշրջանի ընթացքում զարգացել են կողք կողքի։

Երբ «փոքր հոտի» բոլոր անդամներն անցնեն «վարագույրից», աստվածային նախախնամությունը՝ Տիրոջ ձեռքը կազատի նրանց, ովքեր «իրենց ամբողջ կյանքում գերված են մահվան ահից [աշխարհի համար]»՝ տապալելով մարդկային բազմաթիվ տեսություններ, դավանանքներ և ավանդույթներ, ինչպես նաև անվանի եկեղեցական մեծ կազմակերպություններ, որոնց միջոցով «քավության նոխազների» դասի Նրա ժողովուրդը զերծ է մնում Տիրոջ ձայնը լսելուց և հնազանդվելուց։

Բաբելոնի անկումով պարտադրված ազատության մեջ գիտակցելով, որ մեծ մրցանակը կորսված է՝ այս «նեղության սրբերը» լսելու են Քահանայապետի ձայնը և հասկանան, որ հայտնվել են անապատում. մեկուսացում և մարմնի կորուստ։ Նախկինում երբևէ այսքան ՆՎԻՐԱԳՈՐԾՎԱԾՆԵՐ չեն եղել, որքան հիմա, թեև ողջ դարաշրջանում եղել են նաև այդպիսի մարդիկ։

Երկու դասերի բոլոր նվիրագործվածները (Տիրոջ նոխազների դասը և քավության նոխազների դասը) անցնում են մեծ փորձությունների և տառապանքների միջով, սակայն մի դասի համար դրանք համարվում են թեթև տառապանքներ՝ ուրախությամբ ընդունված, և նրանք ուրախանում են, որ արժանի են համարվել տառապելու։ Նրանց զոհաբերությունը կամավոր է, ինչպես Գլխի զոհաբերությունը։ Մյուս դասի համար դա ծանր, մեծ տառապանք է՝ գրեթե առանց ուրախության. մարմնի պարտադրված կորուստ։ Իսկ մրցավազքի վերջում նրանց դիրքերն ու պարգևները համամասնորեն տարբեր են լինում։

Քավության օրվա ողջակեզները

«Ահարոնը մտնի ժողովի վրանը [«Սուրբ տեղ»]. սրբարան [«Սրբությունների սրբություն»] մտնելիս հանի իր հագած կտավե զգեստները և դրանք դնի այնտեղ։ Եվ իր մարմինը ջրով լվանա սուրբ

վայրում [«Գավիթ»] և հագնի իր [սովորական] զգեստները [փառքի և պատվի հանդերձները]. և դուրս գալով՝ մատուցի իր ողջակեզն ու ժողովրդի ողջակեզը և քավություն անի իր [Մարմնի՝ Եկեղեցու, «փոքր հոտի»] համար և ժողովրդի համար» (Ղևտ. 16:23, 24). նույն քավությունը պատկերված կամ ներկայացված է այլ տեսանկյունից:

Ողջակեզը բաղկացած էր երկու խոյից (3, 5 համարներ), որոնցից մեկը ներկայացնում էր զվարակին, իսկ մյուսը՝ Տիրոջ նոխազին: Դրանք նման են և ցույց են տալիս Հիսուսի և Նրա հետևորդների մատուցած զոհերի ներդաշնակությունն ու միությունը, որոնք բոլորն էլ Աստծու աչքում մեկ զոհաբերություն են: «Որովհետև թե՛ սրբացնողը [Հիսուսը] և թե՛ սրբացվողները [փոքր հոտը]՝ բոլորը մեկից են. այդ պատճառով ամոթ չի համարում նրանց եղբայրներ կոչել» (Եբր. 2:11):

Այդ է վկայում նաև այս զոհերից յուրաքանչյուրի նկատմամբ վերաբերմունքը: «Ողջակեզի» խոյերը կտոր-կտոր էին անում, լվանում, և նրանց կտորները դնում էին գլխին՝ զոհասեղանի վրա և այրում՝ իբրև Եհովային մատուցվող անուշահոտ ողջակեզ: Քանի որ երկու խոյերի հետ էլ այդպես էին վարվում, դա ցույց էր տալիս, որ Եհովայի գնահատմամբ դրանք բոլորը մեկ զոհի մաս էին՝ Գլխին միավորված անդամներ, ընդունելի իբրև մեկ ամբողջություն, իբրև քավություն աշխարհի մեղքերի համար՝ այդպիսով բավարարելով արդարության պահանջները մեղավորների ամբողջ աշխարհի անունից:

Ինչպես մեղքի զոհերը ցույց էին տալիս Փրկչի զոհաբերական մահը, այնպես էլ հաջորդող ողջակեզները ցույց էին տալիս Աստծու կողմից այդ նույն զոհաբերության ակնհայտ ընդունումը: Եկեք չմոռանանք, որ Աստված այսպիսով ցույց է տալիս, որ Նա չի հայտնի, որ ընդունում է զվարակներից ու նոխազներից «ավելի լավ զոհերը», մինչև մեղքերի համար մատուցված զոհաբերություններն ավարտվեն, և ճշմարիտ Քահանայապետը հագնի իր պաշտոնին պատշաճ փառքի ու պատվի զգեստները, որը ներկայացված է հագուստի փոփոխությամբ: Մեղքի զոհի մատուցման ժամանակ նա կրում էր միայն սպիտակ կտավե հագուստները: Դրանից հետո (և սովորաբար) նա հագնում էր իրեն շնորհված պատիվն ու փառքն արտահայտող փառքի զգեստները: Ավետարանի դարաշրջանում մեղքի զոհերը շարունակվում են, իսկ քահանաներին պատիվ չի տրվում, բայց դրա ավարտին դրսևորվում է Աստծու հավանությունն ու ընդունումը՝ փառք ու պատիվ շնորհելով

այն քահանաներին, ովքեր զոհաբերություն են արել, և օրհնելով այն ժողովրդին, ում մեղքերի համար նրանք քավություն են արել։

Ողջակեզն այրվում էր զոհասեղանի վրա՝ «Գավթում»՝ այդպիսով ուսուցանելով, որ Աստված կհայտնի, որ ընդունում է ողջ Մարմնի (Գլխի և մասերի կամ անդամների) զոհաբերությունը բոլորի աչքի առաջ՝ «Գավթի» վիճակում, այն է՝ բոլոր հավատացյալներին։ Բայց մինչև հավատացյալներին կհայտնվի գործի՝ Աստծու կողմից ընդունելի լինելը, «քավության նոխազների» դասին հեռու են ուղարկում, իսկ Քահանայի զգեստները փոխվում են։

Ինչպես զոհաբերության ժամանակ հագած սպիտակ հանդերձները ծածկում էին Մարմինը և ներկայացնում էին Մարմնի արդարացումը՝ նրանց մաքրությունն Աստծու աչքում՝ Քրիստոսի միջոցով, այնպես էլ հաջորդիվ հագնված «փառքի և պատվի զգեստները» ներկայացնում են Եկեղեցու դիրքի և ապագա գործի փառքը, երբ նոր արարածները կատարելագործվեն, երբ անցնեն «վարագույրից» այն կողմ։ Ջրով լվացումն այդ ժամանակ նշանակում է, որ թեև սպիտակ զգեստները («Մարմնին» վերագրվող արդարությունը) այժմ հանված են, դա չի ենթադրում մեղքի վերստին վերագրում, այլ մաքրության ավարտ՝ «Մարմինը» կատարյալ դարձնելով հարության ամբողջության մեջ՝ փառքի և պատվի զգեստներով, որոնք ներկայացնում են Առաջին Հարության փառքը, պատիվը և անմահությունը՝ դեպի աստվածային բնություն։ Լվացումը նաև ցույց է տալիս, որ մարդկանց մեղքերը, որոնց համար քավություն է արվել, չեն կպչում և չեն աղտոտում քահանայի մաքրությունը։

Այսպիսով ավարտվեց քահանայության այս տեսակի զարգացումը և աշխարհի մեղքերի համար հատուցումը, բայց մենք կանգ առնենք՝ աչքի անցկացնելու այս գլխի մի քանի համարները (Ղևտ. 16), որոնք ուղղակիորեն կապ չունեն մեր թեմայի հետ։

Համար 17. «ոչ մի մարդ չպետք է լինի ժողովի վրանում մինչև նրա դուրս գալը, որ քավություն անի իր համար, իր ընտանիքի և Իսրայելի ամբողջ ժողովրդի համար»։

Այս սահմանափակումը վերաբերում է միայն այս հատուկ օրվան, քանի որ առաքյալն ասում է. «քահանաները միշտ մտնում էին առաջին խորանը [«Սուրբ տեղը»]՝ պաշտամունքներ կատարելու։ Իսկ երկրորդի

մեջ [«Սրբությունների սրբությունը»] տարին մեկ անգամ մտնում էր միայն քահանայապետը» այս «Քավության օրը», որը կրկնվում էր ամեն տարի (Եբր. 9:6-7)։

Ճշմարիտ խորանի արտոնությունները պատկանում են միայն նրանց, ովքեր քահանաներ են՝ Քահանայապետի Մարմնի անդամներ, և անկախ նրանից, թե այս երկնային վիճակներից առաջինում ենք, ինչպես հիմա (հոգևոր մտածողությամբ, նոր արարածներ՝ Քրիստոս Հիսուսով), թե երկրորդ կամ կատարյալ հոգևոր վիճակում, որում հուսով ենք շուտով հայտնվել, երկու դեպքերից մեկում կամ երկու դեպքում էլ դա այդպես կլինի, քանի որ մենք Քրիստոս Հիսուսով նոր արարածներ ենք՝ այլևս ոչ մարդկային։ «Բայց դուք մարմնին [մարդկայինին] չեք հետևում, այլ Հոգուն [հոգևոր, նոր արարածներ], եթե Աստծու Հոգին ձեր մեջ է բնակվում» (Հռոմ. 8:9)։

Համար 28. «Դրանք [մեղքի զոհի զվարակն ու նոխազը] այրողը պետք է լվանա իր զգեստները, իր մարմինը ջրով լվանա և ապա մտնի բանակատեղի»։

Սա կարծես սովորեցնում է, որ նրանք, ովքեր կարևոր դերակատարություն են ունեցել Հիսուսի (զվարակի) մարդկային բնությունը և Նրա «փոքր հոտի» (նոխազի) մարդկային բնությունը նախատելու, վիրավորելու և ոչնչացնելու գործում, հատուկ պատիժ չեն կրի դրա համար, որովհետև դա արել են անգիտակցաբար՝ միևնույն ժամանակ կատարելով Աստծու ծրագիրը։ Նրանք կարող են լվացվել, մաքրվել և գալ բանակատեղի, այսինքն՝ նույն վիճակին, ինչ մնացած աշխարհը, որոնք բոլորն էլ մեղավոր են ժառանգությամբ, բոլորն էլ փրկվել են ադամական ապականությունից և մահից, և բոլորն էլ սպասում են մեծ Քահանայապետի վերադարձին և օրհնությանը, որն այնուհետև կտարածվի բոլորի վրա։

Համար 26. «Նոխազն ազատ արձակելու համար տանող մարդը լվանա իր զգեստները, իր մարմինը ջրով լվանա և ապա մտնի բանակատեղի»։

Այս նույն խրատն է տալիս նրանց, ովքեր կարևոր դերակատարություն են ունենալու «քավության նոխազով» ներկայացված «մեծ դասի» վրա նեղություններ բերելու և մարմնի հետագա կորստի գործում։ Նրանք պետք է հատուկ ներում ստանան Տիրոջ կողմից այս սխալ արարքների

համար, բայց, ի վերջո, հավասար դիրքերում կկանգնեն մնացած մարդկանց հետ:

«Քավության օրվա» զոհաբերություններին հաջորդող օրհնությունները

Այսպիսով ավարտվեց խորհրդանշական «Քավության օրը», իսկ Իսրայելը՝ այսպես խորհրդանշական կերպով մեղքից մաքրված, այլևս պիղծ և Աստծուց բաժանված չէր համարվում, այլ այժմ մեկ էր Նրա հետ: Արդարությունն այլևս չէր դատապարտում նրանց, այլ կոչ էր անում ճանաչել Աստծու հաշտեցնող ներկայությունն իրենց մեջ՝ օրհնելու, պաշտպանելու և առաջնորդելու նրանց դեպի խաղաղության և հանգստի Քանան:

«Քավության օրվա» նախատիպն Ավետարանի այս դարաշրջանն է, որի ընթացքում Հիսուսը և «Նրա Մարմինը»՝ Եկեղեցին (փրկության և հետագա արդարացման շնորհով) զոհաբերություն են մատուցում Արդարությանը՝ լիովին հատուցելով ադամական մեղքի համար: Երբ հաշտության գործն ավարտվի, Աստված կճանաչի մարդկային աշխարհը և Իր սրբավայրը կդնի մարդկանց մեջ: Այն ժամանակ գրվածը կիրականանա. «Ահա Աստծու խորանը [Աստծու բնակավայրը, փառավոր եկեղեցին], որ նա բնակվելու է մարդկանց հետ: Նրանք կլինեն [կդառնան] նրա ժողովուրդները, իսկ ինքը կլինի նրանց Աստվածը, որ նրանց հետ է: Եվ նրանց աչքերից պիտի սրբի ամեն արտասուք. այլևս մահ չի լինելու, չի լինելու նաև ո՛չ սուգ, ո՛չ աղաղակ, ո՛չ ցավ, որովհետև նախկիններն [Սատանայի թագավորությունը, մեղքը և մահը] անցան»: Եվ գահի վրա նստողն ասաց. «Ահա ամեն բան նոր եմ դարձնում» (Հայտն. 21:3-5):

Բայց մինչ այս բոլոր օրհնությունները կդառնան մարդկանց մեջ Աստծու բնակության կամ սրբավայրի հաստատման արդյունքը («ես իմ ոտքերի տեղը կփառավորեմ», «երկիրն իմ ոտքերի պատվանդանն է» - Ես. 60:13, 66:1), օրհնության հետագա աշխատանքն աստիճանական կլինի, որի համար կպահանջվի Հազարամյա դարաշրջանը, այսինքն՝ ադամական մահը, ցավն ու արցունքները կործանման (վերացման) ընթացքի մեջ կլինեն: Սա կսկսվի Քրիստոսի՝ Թագավորական Քահանայի երկրորդ գալուստով, բայց ամբողջությամբ չի ջնջվի մինչև Հազարամյա դարաշրջանի ավարտը:

Աստիճանական գործընթացը, որով մարդը կկատարելագործվի և լիովին ներդաշնակության մեջ կլինի Եհովայի հետ, լավ երևում է «Քավության օրվան» հաջորդող Իսրայելի խորհրդանշական զոհաբերություններում, որոնց նախատիպերը, ինչպես այժմ կտեսնենք, կիրականանան Հազարամյա դարաշրջանի ընթացքում։

Այս խորհրդանշական զոհաբերությունները ճիշտ տարբերակելու և հասկանալու համար անհրաժեշտ է ընդունել, որ Ավետարանի ներկայիս դարաշրջանը «Քավության օրն է» Աստծու առաջ մարդկության ընդհանուր մեղքերի համար, և որ նախատիպի մեջ «Քավության օրվանից» հետո մատուցված բոլոր զոհաբերությունները ներկայացնում են Ավետարանի դարաշրջանի ավարտից հետո՝ Հազարամյա դարաշրջանում, սպասվող կատարումները կամ նախատիպերը, երբ մեղավորների աշխարհը կարող է հաշտվել կամ դառնալ մեկ՝ Աստծու հետ։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ հաշտությունը բաղկացած է երկու մասից. նախ՝ արդարությունը հաշտվում է Ադամի և նրա զավակների հետ և այլևս չի դատապարտում և ոչնչացնում նրանց Ադամի մեղքի պատճառով, երկրորդ՝ մեղավորը վերադառնում է հաշտության Աստծու արդար օրենքների հետ՝ ընդունելով դրանք և հնազանդվելով դրանց։ Մեկ լինելու կամ հաշտության այս փուլերից առաջինը կատարվում է բացառապես «Քավության օրը» մատուցված զոհաբերություններում՝ Քահանայի ծառայության միջոցով։ Մյուսը՝ աշխարհի հաշտեցումն Աստծու հետ, կամ հնարավորինս շատ մարդկանց (ովքեր ցանկանում են) բերելն Աստծու հետ մեկ լինելու և ներդաշնակության վիճակին, կիրականացվի հաջորդ դարում՝ «Թագավորական քահանայության»՝ փառավորված թագավորների և քահանաների կողմից, որոնք Մովսեսի օրինակով կլինեն Մեծ Մարգարեն, որին Տերը կբարձրացնի՝ ուսուցանելու և կառավարելու ժողովրդին, իսկ եթե չլսեն նրան, կբնաջնջվեն՝ երկրորդ մահով (Գործք 3։23)։

Սակայն պետք է հստակ հասկանալ, որ թեև սրբերին՝ Հիսուսի հետևորդներին, թույլատրված է, ինչպես ներկայացված է «Տիրոջ նոխազի» միջոցով, մասնակցելու մեղքի զոհին և դրա անդամները լինելու՝ աշխարհի անունից, դա այն պատճառով չէ, որ նրանք իրենց բնույթով ավելի մաքուր են կամ ավելի լավը, քան աշխարհը. քանի որ Ադամի ողջ ցեղը դատապարտվեց նրա մեջ, և նրանցից «Չկա արդար

և ոչ մեկը» (Հռոմ. 3:10), և ոչ ոք չի կարող իր եղբոր փրկանքը տալ Աստծուն (Սաղմ. 49:7):

Նրանք շնորհով են մասնակցում մեղքերի համար զոհաբերությանը, որպեսզի այդպիսով կարողանան բաժնեկից լինել Հիսուսին՝ խոստացված աստվածային բնության հարցում, և դառնալ Նրա ընկերակիցներն ու ժառանգակիցները: Իրենց որպես ընդունելի զոհ մատուցելու թույլտվության ու հնարավորության համար Հիսուսի մահվան օգուտները նախ կիրառվեցին նրանց նկատմամբ՝ արդարացնելով կամ մաքրելով նրանց: Այսպիսով, Նրա մահն է, որ օրհնում է աշխարհն Իր Մարմնի՝ Եկեղեցու միջոցով:

ԳԼՈՒԽ V

ՔԱՎՈՒԹՅԱՆ ՄԵԿ ԱՅԼ ՏԵՍԱԿ
Զոհաբերություններ — ՂԵՎՏԱԿԱՆ IX

Քավության զոհաբերությունները՝ վերահաստատված տարբեր մանրամասներով – «Մովսեսն ու Ահարոնը մտան ժողովի վրանը և դուրս գալով՝ օրհնեցին ժողովրդին» - «կհայտնվի առանց մեղքի՝ իրեն սպասողների փրկության համար», «մեկ անգամ մեռնել, և դրանից հետո՝ դատաստան» - Քավության զոհաբերության աստվածային ընդունելիության դրսևորումը։

ԱՅՍ գլխում ավելի խտացված է պատկերվում Քավության գործը և զոհաբերությունները, քան արդեն դիտարկվածում (Ղևտ. 16), և բացի այդ, այն պարունակում է որոշ առանձնահատկություններ, որոնք ասվածի լույսի ներքո ոչ միայն հետաքրքիր, այլև օգտակար կլինեն մեզ համար։ Սա Քավության զոհաբերությունների ևս մեկ պատկեր է։

«Մովսեսն ասաց. «Ա՛յս է Տիրոջ պատվիրածը. կատարե՛ք այս, և Տիրոջ փառքը կերևա ձեզ»։ Եվ Մովսեսն ասաց Ահարոնին. «Մոտեցի՛ր զոհասեղանին և մատուցի՛ր քո մեղքի զոհն ու ողջակեզը և քավությո՛ւն արա քեզ համար [սա անհրաժեշտ էր նրանց, ովքեր կոչված էին դառնալու «Նրա Մարմնի» անդամները] և ժողովրդի [աշխարհի] համար»։

Այս նախատիպը ցույց է տալիս այն փաստը, որ մեր Տեր Հիսուսը

(մեղքի զոհի զվարակը) կարող էր փրկել թե՛ «Իր մարմինը», թե՛ «փոքր հոտին» և թե՛ ողջ մարդկությանը: Եկեղեցու բաժինը մեղքի զոհում կարող էր ամբողջությամբ շնորհվել. մենք կարող էինք զերծ մնալ մեր «նեղ ճանապարհի» հատուկ փորձություններից, զոհաբերության տառապանքներից և վերականգնել մարդկային էության կատարելությունը, ինչպես ողջ մարդկությունը: Բայց Եհովան հաճեց ոչ միայն ընտրել Հիսուսին այս մեծ զոհաբերության համար, այլև Նրան դարձրեց Առաջնորդը կամ Գլուխը «Եկեղեցու, որն Իր մարմինն է», և որ նրանք, ինչպես և իրենց Առաջնորդը, պետք է կատարյալ դառնան որպես ՀՈԳԵՎՈՐ էակներ՝ մարմնով տառապելով որպես մեղքի զոհ (Եբր. 2:10, Կող. 1:24):

Պողոս Առաքյալը, խոսելով Գլխի հետ մեր մտերիմ հարաբերությունների մասին, ասում է. «Օրհնյալ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ մեզ Քրիստոսով օրհնեց երկնքում [Սուրբ տեղ և Սրբությունների սրբություն] ամեն հոգևոր օրհնությամբ, ինչպես որ ՄԵԶ նրա միջոցով ԸՆՏՐԵՑ աշխարհի ստեղծումից առաջ… որպեսզի գովերգվի նրա շնորհի փառքը, որ մեզ [արդարացրեց կամ] շնորհվեց իր Սիրելիի միջոցով» (Եփես. 1:4, 6): Աստված «կանչեց ձեզ մեր Ավետարանով՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ՓԱՌՔՆ ստանալու համար» (Բ Թես. 2:14), որպեսզի «եթե համբերենք, նրա հետ էլ կթագավորենք» (Բ Տիմ. 2:12):

Քահանայապետը, իր զոհը մատուցելուց հետո, պետք է «մատուցեր ժողովրդի ընծան [նոխազ] և քավություն աներ նրանց [ամբողջ Իսրայելի] համար, ինչպես պատվիրել էր Եհովան»: Քավության զոհաբերությանը մեր մասնակցության այս պայմանավորվածությունը մեր Հոր պատվիրանի կամ սկզբնական ծրագրի մի մասն էր, ինչպես վկայում է Սուրբ Պողոսը Կող. 1:24–26-ում:

«Ահարոնը մոտեցավ զոհասեղանին և մորթեց իր համար [իր փոխարեն կամ փոխանակ] եղած մեղքի զվարակը: Ահարոնի որդիները արյունը բերեցին նրա մոտ. նա իր մատը թաթախեց արյան մեջ, քսեց զոհասեղանի եղջյուրներին, իսկ մնացած արյունը թափեց զոհասեղանի պատվանդանին: Բայց մեղքի զոհի ճարպը [և այլն]… այրեց զոհասեղանի վրա…: Իսկ միսն ու մորթին կրակով այրեց բանակատեղիից դուրս: Եվ մորթեց ողջակեզը [խոյ]: Ահարոնի որդիները արյունը ներկայացրին նրան, և նա շուրջանակի այն շաղ

տվեց զոհասեղանի վրա։ Նրանք ողջակեզը նրան ներկայացրին կտոր-կտոր արած, նաև գլուխը, և նա այրեց զոհասեղանի վրա։ Լվաց փորոտիքն ու ոտքերը և դրանք այրեց զոհասեղանի վրայի ողջակեզի վրա» (գրեթե նույնն է, ինչ **16-րդ գլխում** և ունի նույն նշանակությունը)։

Այսպիսով, Հիսուսի ողջակեզն այրվում է Ավետարանի ողջ դարաշրջանում՝ վկայություն տալով բոլոր «Գավթի» պայմաններում գտնվողներին (արդարացվածներին) Աստծու համար Նրա և «Նրա Մարմնի» բոլոր անդամների ընդունելի լինելու մասին, որոնք դրված են զոհասեղանի վրա՝ Գլխի առջև։

«Մոտեցրեց ժողովրդի ընծան և առավ ժողովրդի համար [ոչ թե քահանաների և ղևտացիների համար, ինչպես նախորդում էր] մեղքի զոհի նոխազը, մորթեց այն և մեղքի զոհ արեց նախորդի նման», այսինքն՝ դրա հետ վարվեց ճիշտ այնպես, ինչպես զվարակի։ Այս նոխազը նույնն է, ինչ «Տիրոջ նոխազը» մյուս պատկերում, իսկ «քավության նոխազը» և մյուս նկարագրությունները դուրս են թողնվել այս ավելի ընդհանուր պատկերից։ Սա ևս մեկ անգամ հաստատում է այն ուսմունքը, որ Տիրոջ հետքերով գնացողները մասնակցում են մեղքի զոհին։

«Մոտեցրեց ողջակեզը և զոհաբերեց այն ըստ [ընդունված] կանոնի։ Մոտեցրեց հացի ընծան, մի բուռ վերցրեց դրանից և այրեց զոհասեղանի վրա, բացի առավոտյան ողջակեզից։ Մորթեց ժողովրդի խաղաղության զոհի արջառն ու խոյը»։

Խաղաղության զոհը, ինչպես արդեն ասվեց, ներկայացնում էր երդում կամ ուխտ։ Մատուցվելով Քահանայապետի մեղքի զոհի հետ՝ այն ներկայացնում էր այն երդումները, պարտավորությունները և ուխտերը, որոնք Քահանան ստանձնել էր մեղքի զոհի հիման վրա։ Այս նախատիպում Եհովայի և Իսրայելի միջև խաղաղություն հաստատվեց հետևյալ կերպ. մեղքի զոհը մատուցելուց և ողջակեզից հետո, որը ցույց էր տալիս, որ զոհն ընդունելի է Աստծուն, Եհովայի և Իսրայելի միջև խաղաղություն հաստատվեց, քանի որ նրանց նախկին ադամական մեղքը խորհրդանշական կերպով վերացվեց, և այնուհետև նրանք պարտավոր էին ապրել իրենց ներման վրա հիմնված ուխտին հնազանդ, այսինքն՝ նրանք պարտավոր էին պահել Օրենքը. «Այս բաներն իրագործող մարդը դրանցով (կամ իբրև վարձատրություն՝ դրանք պահելու համար) կապրի»։ Բայց քանի որ մեր մեղքի զոհերն

ավելի լավն են, քան նախատիպային զոհաբերությունները, ապա այս զոհերով հաստատված խաղաղության զոհի կամ ուխտի միջոցով սա ավելի լավ ուխտ է։ Այսպիսով, խաղաղության այս զոհում կամ ուխտի ընծայում տեսնում ենք, որ Քահանան ծառայում է իբրև հոգևոր բաների օրինակ և ստվեր՝ իբրև ավելի լավ ուխտի միջնորդ (Եբր. 8:6-13), որով բոլոր մարդիկ կօրհնվեն՝ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼՈՎ, և այդպիսով հնարավորություն կունենան պահել կատարյալ օրենքը և ապրել հավիտյան։

«Ահարոնն իր ձեռքերը բարձրացրեց ժողովրդի վրա, օրհնեց նրանց և մեղքի զոհը, ողջակեզը և խաղաղության զոհը մատուցելուց հետո ներքև իջավ»։ Այստեղ նախատիպում տեսնում ենք, որ թեև օրհնությունն ամբողջությամբ չի գա մարդկանց վրա, քանի դեռ բոլոր զոհաբերությունները չեն ավարտվել, սակայն որոշ օրհնություններ գալիս են մարդկության վրա Քահանայության անդամների միջոցով նույնիսկ այժմ՝ զոհաբերության դարաշրջանում, մինչև մենք բոլորս կմտնենք «Սրբությունների սրբություն» կամ հոգևոր վիճակի մեջ։ Եվ որքա՜ն ճշմարիտ են փաստերը. որտեղ էլ որ լինեն թագավորական քահանաները, քիչ թե շատ արտահայտված օրհնություն է հորդում նրանցից մերձավորների վրա։

«Մովսեսն ու Ահարոնը մտան ժողովի վրանը և դուրս գալով՝ օրհնեցին ժողովրդին»

Երբ զոհաբերության այս օրը (դարաշրջանը) ավարտվի, Քահանան ամբողջությամբ (Գլուխը և Մարմինը) կհայտնվի Աստծու առաջ և վկայություն կտա, որ Նա բավարարել է Արդարության բոլոր պահանջները ժողովրդի (աշխարհի) հանդեպ։ Հարկ է նշել, որ մինչ Ղևտ. 16-ի նախատիպը բաժանում էր Քավության օրվա աշխատանքը և ցույց էր տալիս բոլոր մանրամասները, թե ինչպես է Տիրոջ զոհաբերությունը նախ ընդունելի դարձնում մեր զոհաբերությունը և այլն, այս տեսակը ցույց է տալիս Ավետարանի դարաշրջանի ամբողջ աշխատանքը որպես հաջորդական զոհեր, բայց իրականում միավորված մեկում. ողջ Քրիստոսի բոլոր չարչարանքները, որոնց անմիջապես հաջորդում են հատուցման օրհնությունները։ Մովսեսի մուտքը ժողովի վրան Ահարոնի հետ կարծես ասում է. Օրենքը լիովին բավարարված է, և դրա արդարությունը հաստատված է Քրիստոսի զոհաբերությամբ։ Օրենքը (Մովսեսի նախատիպով ներկայացված)

կվկայի Օրենքի տակ եղողների, այն է՝ Իսրայելի՝ ըստ մարմնի, անունից, որ բոլոր նրանք, ովքեր դատապարտվեցին Օրենքով, նաև արդարացվեցին կյանքի համար Քահանայի զոհաբերությունների միջոցով, ով «ինքն իրեն պատարագ մատուցեց» մեկընդմիշտ:

Մատուցված ողջ զոհը «սուրբ և ընդունելի էր Աստծուն», ինչի մասին է վկայում այն փաստը, որ Մովսեսն ու Ահարոնը չմահացան Սրբությունների սրբության շեմին: Մովսեսն ու Ահարոնը դուրս եկան և միասին օրհնեցին ժողովրդին: Ուստի գալիք դարաշրջանում Քրիստոսը կօրհնի երկրի բոլոր ազգերին (Գաղ. 3:8,16,29, Ծնն. 12:3), սակայն ոչ թե մի կողմ դնելով կամ անտեսելով Աստծու օրենքը և արդարացնելով մեղքը, այլ աստիճանաբար մարդուն վերականգնելով մարդկային կատարելության մեջ, որում նա կկարողանա պահել Աստծու կատարյալ օրենքը և օրհնվել դրանով: Կատարյալ դարձած և այն պահելու ունակ Քահանայի կողմից օրհնված Օրենքը՝ հնազանդվել և ապրել. «Ով արդարություն է անում, արդար է», մեծ օրհնություն կլինի, քանի որ ով կամենա, կարող է հնազանդվել և հավերժ ապրել երջանկության և Եհովայի հետ հաղորդության մեջ:

«Եվ Տիրոջ փառքը երևաց ամբողջ ժողովրդին»

Օրհնության աճին (մտավոր կերպով և ֆիզիկապես ցեղը վերականգնելուն և բարձրացնելուն) զուգահեռ՝ արդյունքներն ակնհայտ կդառնան: Ժողովուրդը՝ աշխարհն ընդհանրապես, ամեն օր ավելի ու ավելի կճանաչի Աստծու ողորմած սերը: Այսպիսով, «Պիտի հայտնվի Տիրոջ փառքը, և ամեն մարմին միասին պիտի տեսնեն այն» (Ես. 40.5): Աստիճանաբար նրանք կճանաչեն Աստծու սիրո լայնությունը և երկարությունը, բարձրությունը և խորությունը, որ գերազանցում է ամեն գիտություն:

Հարկ է նշել, որ այստեղ հիշատակված օրհնությունն օրհնություն չէր կրտսեր քահանաների համար: Ո՛չ. նրանք ներկայացված էին օրհնողի՝ Ահարոնի միջոցով: Օրհնությունը եկավ Իսրայելի ողջ ժողովրդի վրա, որը նախատիպում ներկայացնում էր աշխարհը: Աշխարհի այս օրհնությունն է «Սերնդի»՝ ողջ Քրիստոսի կողմից, այն բանից հետո, երբ բոլոր նեղությունների պակասը լրացվեց Մարմնի կողմից (Կող. 1:24), որի մասին Պողոսն ակնարկում է՝ ասելով. «ամբողջ ստեղծագործությունը [մարդկությունը] մինչև

հիմա հառաչում է ու ցավի մեջ է և «անհամբերությամբ ակնկալում է Աստծու որդիների հայտնությանը»։ Նախքան նրանք կկարողանան ազատվել ապականության (մեղքի և մահի) գերությունից և կվերականգնվեն ու կհասնեն Աստծու որդիների ազատությանը (ազատություն դատապարտությունից, մեղքից, մահից և այլն), որը վայելում էր Աստծու առաջին որդի Ադամը (Ղուկ. 3.38), պետք է ավարտվեն Քավության օրվա զոհերը, և զոհաբերող քահանաները պետք է զգեստավորվեն փառահեղ հանդերձներով, թագավորական, աստվածային իշխանությամբ ու զորությամբ՝ նրանց ազատելու համար (Հռոմ. 8։19–22)։

Անկասկած Պողոսն ակնարկում է բոլոր մարդկանց այս օրհնությունը՝ փրկությունը մահից և դրա խայթոցից՝ մեղքից, երբ ասում է. «երկրորդ անգամ կհայտնվի առանց մեղքի [այլևս ոչ որպես մեղքի զոհ և առանց վարակվելու մեղավորների փոխարեն կրած մեղքերից]՝ իրեն սպասողների փրկության համար» (Եբր. 9։28)։ Աշխարհը ականատես եղավ, թե այս դարաշրջանում Քահանան՝ Գլուխը և Մարմինը, ինչպես է տանջվում իբրև մեղքի զոհ. Հիսուսը հրեաներին հայտնվեց մարմնով (որպես մեղքի զոհ), և ինչպես Պողոսը կասեր, որպեսզի բոլոր նրա հետքերով գնացողները կարողանան ասել. «որպեսզի Հիսուսի կյանքն էլ մեր մահկանացու մարմնի մեջ հայտնվի» (Բ Կորնթ. 4։11)։ Ինչպես ողջ Քրիստոսն այսպիսով հայտնվեց և չարչարվեց մարմնով, այնպես էլ նրանք միասին «կփառավորվեն» աշխարհի առաջ. «Պիտի հայտնվի Տիրոջ փառքը [օրհնությունն ու փրկությունը], և ամեն մարմին միասին պիտի տեսնեն այն»։ Երբ Նա հայտնվի, այն ժամանակ մենք էլ նրա հետ փառքով կհայտնվենք» (Կող. 3։4)։

Բայց աշխարհի այս մեծ Քահանայապետը կճանաչվի միայն «իրեն փնտրողների» կողմից։ Եթե նա հայտնվեր իբրև մարմնավոր էակ՝ երկնքում կամ այլուր, տեսանելի կլիներ բոլորին, անկախ նրանից՝ փնտրեցին նրան, թե ոչ, բայց մենք արդեն տեսել ենք, որ Սուրբ Գիրքն ուսուցանում է, որ Գլուխը կատարելագործվել է իբրև հոգևոր էակ, և որ Նրա «փոքր հոտը» պետք է «նմանվի նրան»՝ դառնալով հոգևոր էակներ, աստվածային էությամբ, «որին մարդկանցից ոչ ոք չի տեսել ու ոչ էլ կարող է տեսնել» (Ա Տիմ. 6։16)։ Մենք տեսանք, որ աշխարհը փառավորված Եկեղեցուն տեսնելու է մտավոր ընկալման միջոցով, այն նույն իմաստով, որով կարելի է ասել, որ կույրը տեսնում է։ Այս նույն իմաստով մենք այժմ տեսնում ենք մրցանակը՝ «կյանքի պսակը»,

«քանի որ այս տեսանելի բաներին չենք նայում, այլ անտեսանելիներին [ֆիզիկական աչքերով], որովհետև տեսանելի բաները ժամանակավոր են, իսկ անտեսանելիները՝ հավիտենական» (Բ Կորնթ. 4.18)։ Այսպես է այս դարաշրջանի ողջ Եկեղեցին «նայում Հիսուսին», այսպիսով «մենք տեսնում ենք Հիսուսին» (Եբր. 2:9, 12:2)։ Այսպիսով, իրենց ընկալման աչքերով «դիտորդները» նկատում են Տիրոջ երկրորդ ներկայությունը ճիշտ ժամանակին՝ Աստվածային Խոսքի լույսի ներքո։ Եվ հետագայում ամբողջ աշխարհը, բոլոր աչքերը կտեսնեն Նրան նույն կերպ, սակայն Նրա դատաստանի «բոցավառ կրակի» լույսի ներքո (Բ Թես. 1:8)։

Միայն այս կերպ մարդը կարող է տեսնել կամ ճանաչել իրերը հոգևոր հարթության վրա։ Հիսուսը նույն միտքն արտահայտեց աշակերտներին. նրանք, ովքեր ճանաչում էին Նրա հոգին կամ միտքը և այդպիսով գիտեին Նրան, նույնկերպ էլ կճանաչեին Հորը։ «Եթե ինձ ճանաչեիք, իմ Հորն էլ կճանաչեիք։ Բայց այսուհետև ճանաչեցիք նրան և տեսաք» (Հովհ. 8:19, 14:7)։ Սա միակ իմաստն է, որում աշխարհը երբևէ կտեսնի Աստծուն, քանի որ «Աստծուն մարդկանցից ոչ ոք չի տեսել» («որին մարդկանցից ոչ ոք չի տեսել ու ոչ էլ կարող է տեսնել» (Ա Տիմ. 6:16)) «բացի միածին Որդուց. նա՛ է մեզ նրա մասին հայտնել [ցույց տվել]» (Ա Տիմ. 6:16, Հովհ. 1:18)։ Հիսուսն Իր աշակերտներին հայտնեց կամ ցույց տվեց Հորը՝ բացահայտելով Իր բնույթը՝ խոսքերով և գործերով հայտնելով Նրան իբրև Սիրո Աստված։

Նույն կերպ Լյութերը և մյուսները բացահայտեցին պապական համակարգը, և շատերը դրա մեջ տեսան Հակաքրիստոսին. կամ, ինչպես Պողոսը կանխագուշակեց, այդ չար համակարգը՝ մեղքի մարդը, հետո հայտնվեց, թեև շատերը դեռ չեն տեսնում դա այդպես։

Այսպիսով, մեր Տեր Հիսուսը՝ Գլուխը (այժմ ներկա է գոհարները հավաքելու համար), այս պահին հայտնվում է «փոքր հոտի» կենդանի անդամներին, թեև մյուսները տեղյակ չեն Նրա ներկայության մասին (Ղուկ. 17.26-30, Մաղ. 3:17)։

Այդպես կլինի Հազարամյակի օրը, երբ կհայտնվի ողջ Քրիստոսը՝ Քահանան։ Նա կհայտնվի միայն Իրեն փնտրողներին, և միայն նրանք կտեսնեն Նրան։ Նրանք կտեսնեն Նրան ոչ թե ֆիզիկական աչքերով, այլ հավատքի աչքերով՝ ճիշտ այնպես, ինչպես մենք այժմ տեսնում ենք բոլոր հոգևոր բաները՝ մեր Տեր Հիսուսին, Հորը, մրցանակը և այլն։ Մարդիկ Քրիստոսին չեն տեսնի ֆիզիկական աչքերով, քանի

որ գտնվում են գոյության տարբեր մակարդակներում. մեկը հոգևոր, մյուսը՝ մարմնավոր, այդ նույն պատճառով նրանք երբեք չեն տեսնի Եհովային։ Բայց մենք [փոքր հոտը, երբ փառավորվենք] կտեսնենք Նրան, ինչպես որ է, որովհետև մենք Նրա նման կլինենք (Ա Հովհ. 3։2)։

Բայց թեև միայն «Նրան փնտրողները» կկարողանան ճանաչել Քրիստոսին՝ որպես փրկիչ, ով կփրկի իրենց մահվան իշխանությունից, սակայն դա ներառելու է ամբողջ աշխարհը, քանի որ հայտնության եղանակը լինելու է այնպիսին, որ բոլորը պետք է ի վերջո տեսնեն։ «Նրան պիտի տեսնեն բոլոր աչքերը», և, այնժամ արթնանալով, բոլորն իրենց գերեզմաններում, նույնիսկ նրանք, ովքեր խոցեցին Նրան, կհասկանան, որ խաչել են փառքի Տիրոջը։ «Նա հայտնվելու է [երկնքո՞ւմ. ո՛չ] բոցավառ կրակով [դատաստանով]՝ վրեժ առնելու նրանցից, ովքեր Աստծուն չեն ճանաչում [չեն ընդունում [T87]] ու [նաև նրանցից, ովքեր] մեր Տեր Հիսուսի Ավետարանին չեն հնազանդվում»։ Ողջ մարդկության համար շատ ժամանակ չի պահանջվի ճանաչելու Նրան նման հանգամանքներում։ Այժմ բարիները տառապում են, բայց «դուք ետ կդառնաք և կզատորոշեք... Աստծուն ծառայողին և չծառայողին» (Մաղ. 3։15-18), քանի որ այդ օրը պարզ կլինի տարբերությունը։ Այնուհետև բոլորը, պարզ տեսնելով, կկարողանան հավիտենական կյանք գտնել՝ ընդունելով Քրիստոսին և Նրա կյանքի առաջարկը նոր ուխտի ներքո, քանի որ «հույս ենք դրել կենդանի Աստծու վրա, որ բոլոր մարդկանց, մանավանդ հավատացյալների Փրկիչն է» (Ա Տիմ. 4։10)։

«Մեկ անգամ մեռնել, և դրանից հետո՝ դատաստան»

Մի տեքստ, որն անմիջականորեն առնչվում է մեր թեմային, ինչպես ցույց է տալիս դրա համատեքստը, բայց որն ավելի հաճախ է սխալ կիրառվում և ընկալվում, քան Աստվածաշնչի որևէ այլ հատված, սա է. «Եվ ինչպես որ մարդկանց [Ահարոնի և իր հաջորդների, որոնք պարզապես նոր արարչագործության Քահանայապետի նախատիպն էին] համար սահմանված է մեկ անգամ մեռնել [այլաբանորեն, ինչպես ներկայացված է կենդանիների սպանդում], և դրանից հետո [որը եղավ այդ զոհաբերության արդյունքը]՝ դատաստանը [Աստծու դատաստանը՝ զոհաբերությանը հավանություն տալով կամ չտալով], նույնպես էլ Քրիստոսը շատերի [«ամեն մարդու»] մեղքերը վերցնելու

համար մեկ անգամ զոհաբերվեց [երբեք չի կրկնվի], իսկ երկրորդ անգամ կհայտնվի առանց մեղքի [ո՛չ կրած մեղքերով աղտոտված, ո՛չ էլ մեղքի զոհի կրկնությամբ, այլ]՝ իրեն սպասողների փրկության համար»՝ հավերժական կյանք տալու բոլոր նրանց, ովքեր փափագում են դրան՝ Աստծուն հավատալու և հնազանդվելու պայմաններով (Եբր. 9:27, 28):

Ամեն անգամ, երբ Քահանան «Սրբությունների սրբություն» էր մտնում Քավության օրը, նա վտանգում էր իր կյանքը, քանի որ եթե նրա զոհաբերությունն անկատար լիներ, նա կմահանար՝ անցնելով «երկրորդ վարագույրից»: Ո՛չ նա կնդունվեր Սրբությունների Սրբություն, և ո՛չ էլ նրա անկատար զոհաբերությունն ընդունելի կլիներ՝ քավելու ժողովրդի մեղքերը: Հետևաբար ցանկացած թերացում նշանակում էր նրա մահը և բոլոր նրանց դատապարտությունը, ում մեղքերը նա փորձում էր քավել: Սա այս տեքստում նշված «դատաստանն» էր, որն ամեն տարի կատարում էին նախատիպային քահանաները. այդ դատաստանը բարեհաջող անցնելու արդյունքից էր կախված քահանայի կյանքը և ժողովրդի մեղքերի ամենամյա խորհրդանշական քավությունը:

Մեր մեծ Քահանայապետ Քրիստոս Հիսուսն անցավ նախատիպային երկրորդ վարագույրի տակով, երբ մահացավ Գողգոթայում, և եթե Նրա զոհաբերությունն ինչ-որ ձևով կամ չափով անկատար լիներ, Նա երբեք հարություն չէր առնի մեռելներից, արդարության «դատաստանը» կլիներ Նրա դեմ: Բայց երրորդ օրը Նրա հարությունն ապացուցեց, որ Նրա գործը կատարվել է կատարելապես, որ այն անցել է աստվածային «դատաստանի» փորձությունը (տե՛ս Գործք 17.31):

Մեկ այլ ապացույց, որ մեր Տերը հաջողությամբ է անցել այս «փորձությունը»՝ մեկընդմիշտ, և որ Նրա զոհաբերությունն ընդունվել է, Պենտեկոստեի օրհնությունն էր, որը կանխաճաշակումն էր դեռ ավելի մեծ ապագա օրհնության և ամեն մարմնի վրա հեղման (Հովել 2.28). երաշխիք կամ հավաստիք, որ Նա (և մենք Նրա մեջ) ի վերջո կգա օրհնելու ժողովրդին՝ աշխարհին, որի մեղքերը Նա լիովին և ընդունելի կերպով քավել էր:

Այս տեքստի ցանկացած մեկնաբանություն, որով այն կվերագրվի մարդկության ընդհանուր մահվանն ընդհանրապես, ամբողջությամբ հերքվում և մերժվում է համատեքստի միջոցով:

Շատերն անորոշությամբ սպասում էին մի բարենպաստ ժամանակի, երբ մեղքի, մահվան և ընդհանրապես չարի անեծքը որոշ չափով կվերանար, բայց նրանք չէին հասկանում, թե ինչու է ամեն ինչ հետաձգվում այդքան երկար: Նրանք չեն հասկանում, որ «Քավության օրվա» զոհաբերությունն անհրաժեշտ է և պետք է ավարտվի նախքան փառքի և օրհնության հայտնվելը, և չեն տեսնում, որ Եկեղեցին՝ «ընտրյալները», «փոքր հոտը», Քրիստոսի զոհաբերության և չարչարանքների գործակիցներն են, ինչպես նաև այն փառքի, որը հաջորդելու է: «Ամբողջ ստեղծագործությունը մինչև հիմա հառաչում է ու ցավի մեջ է և անհամբերությամբ ակնկալում է [թեև անգիտությամբ] Աստծու որդիների հայտնությանը (Հռոմ. 8:19, 22):

Դեռ ավելին, քանի որ նախատիպային Քահանան ներկայացնում էր նախապատկերված Քահանայի՝ Քրիստոսի «մարմինը», ինչպես նաև «գլուխը», նշանակում է, որ Եկեղեցու յուրաքանչյուր անդամ պետք է անցնի այս «դատաստանով», որ թեև շատերն են կանչվել, սակայն ոչ ոք չի ընտրվի որպես Քրիստոսի Մարմնի՝ ճշմարիտ որթատունկի ճյուղերի վերջնականորեն ընդունելի «անդամներ», բացառությամբ «հաղթողների», որոնք հավատարիմ կլինեն մինչև մահ (Հայտն. 3:21): Սակայն այնպես չէ, որ նրանք կհասնեն մարմնի կատարելության, այլ սրտի, կամքի, մտադրությունների կատարելության. նրանք պետք է լինեն «սրտով մաքուր». գանձը պետք է լինի մաքուր ոսկուց՝ հնոցի բովով անցած, թեև դրա ներկայիս տուփը միայն անկատար կավե անոթ է:

Աստվածային ընդունելիության դրսևորում

«Տիրոջ առջևից կրակ դուրս եկավ և այրեց զոհասեղանի վրայի ողջակեզն ու ճարպերը, և ամբողջ ժողովուրդը, տեսնելով այդ, աղաղակեց և ընկավ երեսի վրա» - երկրպագեց: Սա նույն միտքն է՝ արտահայտված այլ կերպ: Կրակը խորհրդանշում էր ընդունումն Աստծու կողմից. ժողովրդի կողմից դրա ճանաչումը ցույց էր տալիս, որ աշխարհն ընդունելու էր զոհաբերությունը և հասկանալու էր դրա արժեքն Աստծու գնահատմամբ՝ որպես մահից և գերեզմանից ազատվելու գին, և երբ նրանք դա հասկանային, կերկրպագեին Եհովային և նրա ներկայացուցչին՝ Քահանային:

Այն, որ դա դեռ չի իրականացել, ակնհայտ է: Աստված դեռ կրակով

ցույց չի տվել, որ ընդունում է Քավության օրվա մեծ զոհը, մարդիկ դեռ չեն աղաղակել և երեսի վրա ընկել՝ երկրպագելով Մեծ թագավորին և Նրա ներկայացուցչին: Ո՛չ, ամբողջ աշխարհը չարի մեջ է (Ա Հովի. 5:19). այս աշխարհի աստվածը դեռ քիչ թե շատ կուրացնում է գրեթե ողջ մարդկությանը (Բ Կորնթ. 4:4), խավարը դեռ ծածկում է երկիրը, և մառախուղը՝ ժողովուրդներին (Ես. 60:2): Մենք չպետք է ձգտենք այս նախատիպի մեջ նախապատկերված վերականգնման մեծ օրհնություններին այնքան ժամանակ, քանի դեռ Եկեղեցու՝ մեծ Քահանայապետի, «Մարմնի» բոլոր անդամները, հարությամբ փոխվելով, չեն անցել երկրորդ վարագույրից (իրական մահից) դեպի Սրբությունների սրբություն: Նախատիպի այս «օրհնությունը» չի կատարվի, քանի դեռ չի եկել նեղությունների մեծ ժամանակը: Այնուհետև խրատված, սթափված, խոնարհված մարդկության աշխարհը, ընդհանուր առմամբ, «կսպասի» և «փնտրի» մեծն Քրիստոսին՝ Աբրահամի Սերնդին, օրհնելու և վեր բարձրացնելու իրենց:

Որքա՜ն գեղեցիկ են այս նախատիպերը ուսուցանում ողջ ժողովրդի լիակատար փրկագնման մասին, ինչպես նաև բոլորի համար հնարավոր դարձած փոխհատուցման և օրհնության մասին:

Այս նախատիպերի մեջ կարծես թե ոչինչ տարբերություն չի դնում ողջերի և մահացածների միջև, և ոմանք կարող են հակված լինել ենթադրելու, որ երբ Քահանայապետի զոհաբերություններն ավարտվեն, և օրհնությունն սկսվի, մեծապես շահելու են միայն նրանք, որոնք այդ ժամանակ ողջ են լինելու: Բայց մենք պատասխանում ենք. «Ոչ, Աստված նույն կերպ է գնահատում ողջերին ու մեռածներին. Նա բոլորի մասին խոսում է իբրև մահացածների: Ադամով բոլորը մահվան դատապարտվեցին, և կյանքի այդ փոքրիկ կայծը, որն այժմ ունի յուրաքանչյուր մարդ, իրականում ընդամենը մահվան փուլերից մեկն է: Ադամի մեղքի պատճառով այժմ այն մեռած ցեղ է, բայց այս նախատիպային «Քավության օրվա» ավարտին արդարացման և կյանքի օրհնությունները կտարածվեն բոլորի վրա այնպիսի պայմաններով, որոնց բոլորը կկարողանան ենթարկվել, և յուրաքանչյուր ոք Կենսատուից՝ Փրկչից կկարողանա կրկին ստանալ այն ամենը, ինչ կորցրել է Ադամի միջոցով, այն է՝ կյանքը, ազատությունը, Աստծու բարեհաճությունը և այլն. բոլոր նրանք, ովքեր անցել են դեպի մահ տանող ողջ ճանապարհը, ինչպես նաև նրանք,

ովքեր դեռ անդունդի եզրին են՝ «մահվան ստվերի ձորում»։

Սա է մեղքի նախատիպային զոհերի նպատակը. ազատել «ամբողջ ժողովրդին»՝ ողջ մարդկությանը մեղքի, մահվան իշխանությունից, վերադարձնել նրանց կատարյալ էությունը, որն անհրաժեշտ է կատարյալ երջանկության և Արարչի հետ մեկ լինելու համար։

Սա է այն օրհնությունը, որը գալու է երկրի բոլոր ազգերի վրա Աբրահամի Սերնդի միջոցով։ Սա այն բարի լուրն է, որը քարոզվեց Աբրահամին, ինչպես կարդում ենք. «Սուրբ Գիրքն էլ, կանխատեսելով, որ Աստված հեթանոսներին [ամբողջ մարդկությանը] հավատով է արդարացնելու, նախապես Աբրահամին խոստացավ [բարի լուրը]. «Բոլոր ազգերը քեզանով են օրհնվելու» [արդարանալու]... Այդ Սերունդը Քրիստոսն է [նախ՝ Գլուխը, և ապա՝ Մարմինը], «և եթե դուք Քրիստոսինն եք [անդամները], ուրեմն Աբրահամի սերունդն եք ու խոստման համաձայն՝ ժառանգներ, որի մասին խոսվում է, այսինքն՝ օրհնողների դասից մեկը՝ Աբրահամի Սերունդը, որն օրհնելու է երկրի բոլոր ազգերին (Գաղ. 3։8, 16, 29)։ Բայց այս «Սերունդը» պետք է ամբողջացվի նախքան օրհնության գալը, ինչպես ցույց է տալիս վերոնշյալ նախատիպը. մեղքի զոհը պետք է ավարտվի, նախքան դրանից բխող բոլոր օրհնությունների բաշխումը։

Պետք չէ սխալ ընկալել այն սահմանափակումը, որ միայն Քահանայապետն էր տարին մեկ անգամ մտնում «Սրբությունների սրբություն»՝ քավություն անելու համար, քանի որ դա նշանակում է, որ նա և կրտսեր քահանաները հաջորդ օրերին այնտեղ չէին մտնում այն բանից հետո, երբ մեղքերը լիովին քավվում էին Քավության օրը։ Ընդհակառակը, հաջորդ օրերին Քահանայապետը հաճախ էր մտնում այնտեղ։ Հենց «Սրբությունների սրբություն» էր մտնում Քահանայապետը, երբ հարցնում էր Եհովային Իսրայելի բարօրության մասին և այլն՝ օգտագործելով դատաստանի լանջապանակը՝ Ուրիմն ու Թումիմը։ Նաև, երբ նրանք տեղափոխում էին բանակատեղին, ինչը հաճախ էր պատահում, քահանաները մտնում էին ներս և իջեցնում «վարագույրները» և փաթաթում տապանակն ու բոլոր սուրբ անոթները, մինչև ղևտացիներին թույլ տրվեր դրանք տանել (Թվ. 4։5–16)։

Դարձյալ, երբ իսրայելացին մեղքի զոհ էր մատուցում քահանաներին («Քավության օրվա» զոհաբերություններն ավարտվելուց հետո),

նրանք բոլորն այն ուտում էին «Սրբությունների սրբությունում» (Թվ. 18:10): Այսպիսով, ըստ նախատիպի, ներկա «Քավության օրվա» ավարտից հետո «Թագավորական Քահանայությունը» կլինի «Սրբությունների սրբությունում» կամ կատարյալ հոգևոր վիճակում, և այնտեղ կընդունի (կուտի) մեղքի զոհերը՝ մատուցված աշխարհի կողմից իրենց օրինազանցության համար (ոչ թե սկզբնական կամ ադամական մեղքի համար, որը վերացել է Քավության օրը»: Այս կատարյալ հոգևոր վիճակում քահանաները կուսուցանեն ամեն հարցում, ինչպես ներկայացված է Ուրիմի և Թումիմի միջոցով Իսրայելին տրված որոշումներում և պատասխաններում:

ԳԼՈՒԽ VI

«ՔԱՎՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ» ՀԱՋՈՐԴՈՂ ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դրանք խորհրդանշում են Հազարամյակի ընթացքի ապաշխարությունները, երդումները, ուխտերը և այլն - ժողովրդի ողջակեզները - խաղաղության զոհերը, հացի ընծաները - հանցանքի զոհերը - տղամարդկանց և կանանց միջև տարբերությունների դադարը՝ ներկայացված նախատիպերում:

Ժողովրդի (Իսրայելի՝ աշխարհի) կողմից անհատապես մատուցված զոհաբերությունները, որոնք հաջորդում էին Քավության օրվա զոհերին և ներկայացված էին Իսրայելի կողմից մատուցված ընդհանուր զոհաբերություններով, պատկանում են հաջորդ դարաշրջանին և կներկայացվեն փառավորված թագավորական քահանայությանը: Այնուամենայնիվ այն ներկայումս շատ թույլ մեկնարկ ունի. հետևաբար հարստություն ունեցող աշխարհիկ մարդն այս իմաստով Աստծու գործերի տնտեսն է և այժմ կարող է օգտագործել այդ «մամոնան» և դրանից ընկերներ շահել իր համար, որպեսզի երբ ավարտվի սատանայի տիրապետության այս դարաշրջանը և սկսվի Քրիստոսի թագավորությունը (որտեղ նա այլևս տնտես չի լինի), օրհնեն նրան այն մարդիկ, ում նա այդպես օգնել է: Եթե հարստության աշխարհիկ տնտեսները (մամոնան կամ այս դարաշրջանի աստվածը) իմաստուն լինեին, նրանք ավելի շատ այսպես կօգտագործեին իրենց միջոցները: «Եվ ով այս փոքրիկներից որևէ մեկին որպես իմ աշակերտի թեկուզ

մեկ բաժակ սառը ջուր տա խմելու, ճշմարիտ եմ ասում ձեզ, նա իր վարձը չի կորցնի», երբ սկսվի Քրիստոսի թագավորությունը և գործի իր օրենքը (Ղուկ. 16:1-8, Մատթ. 10:42):

Այդ զոհաբերությունները, որոնք չեն պատկանում «Քավության օրվա զոհաբերություններ» կոչվող դասին, ցույց են տալիս Հազարամյակի դարաշրջանին պատկանող ընծաներն ու զոհաբերությունները:

Ինչպես նախատիպում է, «Քավության օրվա» զոհերը նախորդում էին բոլոր մյուսներին և հիմք էին հանդիսանում ողջ Իսրայելի ընդհանուր ներման և Աստծու կողմից ընդունելիության համար, սակայն դրանց հաջորդում էին այլ զոհեր, որոնք անհատները մատուցում էին այդ օրվանից հետո և որոնք կոչվում էին «մեղքի զոհեր», «հանցանքի զոհեր», «խաղաղության զոհեր» և այլն, ինչպես որ նախատիպում է: Այն բանից հետո, երբ ավետարանական այս դարաշրջանի զոհաբերությունները «ժողովրդին»՝ ողջ աշխարհին, բերեն արդարացված վիճակի, դեռ կլինեն մեղքեր և հանցանքներ, որոնց համար կպահանջվեն խոստովանություն և քավություն՝ անհրաժեշտ դարձնելով այս հետագա զոհաբերությունները:

Քավության օրվա զոհաբերությունները ներկայացնում էին ադամական մեղքի վերացումը Քրիստոսի զոհաբերությամբ, սակայն Հազարամյակի ընթացքում, մինչ քավության օգուտները կկիրառվեն աշխարհի վրա, մինչ դրանք աստիճանաբար կվերականգնվեն իրական կատարելության, կյանքի և Աստծու հետ ներդաշնակության մեջ, սխալներ կգործվեն, որոնց համար նրանք որոշ չափով պատասխանատու կլինեն: Նախքան նրանք կկարողանան կրկին ներդաշնակություն գտնել Աստծու հետ իրենց Միջնորդի՝ Քրիստոսի միջոցով, նրանք պետք է ապաշխարությամբ ուղեկցված որոշ շտկումներ կատարեն:

Նվիրագործումը նույնպես տեղին կլինի հաջորդ դարաշրջանում, թեև աշխարհի փոխված իշխանության շնորհիվ նվիրագործումն այլևս չի նշանակի մահ, ինչպես դա հիմա է, այլ, ընդհակառակը, կնշանակի կյանք, քանի որ չարի թագավորության ավարտին կվերանան ցավը, վիշտը և մահը, բացառությամբ ամբարիշտների դեպքերի: Նվիրագործումը միշտ պետք է լինի սեփական ուժերի կամավոր ընծայում, և ուստի այն ներկայացված է Քավության օրվան հաջորդող որոշ զոհաբերություններում:

Քանի որ հաջորդ դարաշրջանում մեղքերի ներման հիմքը լինելու են Քավության օրվա զոհաբերությունները, այս նախատիպում մեղավորին հարիր կլիներ զոհաբերություն մատուցել, որը ցույց կտար Քավության օրվա զոհաբերությունների ընդունումը՝ իբրև նոր ներման հիմք: Հետևաբար տեսնում ենք, որ Քավության օրվան հաջորդող ժողովրդի մատուցած բոլոր զոհաբերություններն այնպիսին էին, որ մատնանշում կամ ընդունում էին այդ օրվա զոհաբերությունները: Այս զոհաբերությունները կարող էին կատարվել խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից, թռչուններից (տատրակներ կամ աղավնու ձագեր) կամ ընտիր ալյուրից՝ կախված մատուցողի հնարավորություններից:

Հազարամյա դարաշրջանում բոլոր մարդիկ «կհասնեն ճշմարտության ճանաչմանը», և այդպիսով լիարժեք հնարավորություն կունենան փրկվելու ադամական մահվան անեծքից (դատապարտությունից կամ դատավճիռից) (Ա Տիմ. 2:4): Երբ հիշում ենք, որ այս մահը ներառում է բոլոր հիվանդությունները, ցավը և անկատարությունը, որոնց այժմ ենթակա է մարդկությունը, մենք տեսնում ենք, որ Աստծու ծրագիրը նախատեսում է մարդկային կատարելության ամբողջական վերականգնում. Երկրորդ մահ կունենան միայն նրանք, ովքեր միտումնավոր հրաժարվում կամ անտեսում են բոլորին հասանելի հնարավորությունները: Սակայն կատարելությունը գալու է աստիճանաբար, և դրան հասնելու համար կպահանջվի մեղավորի ԿԱՄՔԻ համագործակցությունը: Նա պետք է անի հնարավոր ամեն ինչ, որպեսզի նորից բարձրանա դեպի կատարելություն, և նրան կտրամադրվի անհրաժեշտ օգնությունը: Դա երևում է, ընդհանուր առմամբ, զոհաբերությունների օրինակից. դրանք պետք է համապատասխանեին յուրաքանչյուր մարդու կարողություններին: Անկախ այն բանից, թե որքան նվաստացած և անկատար էին մեղքի պատճառով, յուրաքանչյուրը պետք է, ճշմարտության իմացությանը հասնելով, ներկայանար Աստծուն, իսկ զոհաբերությունը պետք է արտացոլեր նրա վիճակը: Այս նախատիպում ամենաաղքատների բերած տատրակը կամ աղավնին ներկայացնում էր բոլոր բարոյապես աղքատների և նվաստացածների արդարացումը, առավել շատ հնարավորություն ունեցողների բերած նոխազը ներկայացնում էր բոլոր նրանց, որոնք պակաս նվաստացած էին, մինչդեռ զվարակը ներկայացնում էր բոլոր նրանց, որոնք հասել

էին մարդկային բնության կատարելությանը: Ինչպես Հիսուսի զոհաբերության ժամանակ զվարակն օգտագործվեց՝ ներկայացնելու կատարյալ մարդկային բնությունը (շատ գեր), իսկ նոխազը (կամակոր և նիհար)՝ ներկայացնելու սրբերի անկատար մարդկային բնությունը Քավության այս օրվա զոհաբերություններում, այնպես էլ այս կենդանիներն իրենց նվիրագործությամբ ներկայացնում էին զոհ մատուցողներին (Իսրայելը խորհրդանշում է Հազարամյակի դարաշրջանի հավատացյալ աշխարհը): Սակայն պետք է հիշել, որ ապագայի ողջակեզներն ու խաղաղության զոհերը ներկայացնում են ժողովրդի նվիրումը Տիրոջը: Նրանք չեն ներկայացնում մեղքի զոհերը՝ քավություն ապահովելու համար, ինչպես եղել են Քավության օրվա զոհերը: Իրոք եղել են հանցանքի զոհեր, որոնք ինչ-որ իմաստով մեղքի զոհ են հանդիսացել անհատների համար, բայց սրանք, ինչպես կտեսնենք հետագայում, բոլորովին տարբերվում էին Քավության օրվա ազգային մեղքի զոհերից:

Երբ հազարամյակի վերջում բոլոր մարդիկ, ովքեր պատրաստ են ստանալ Աստծու շնորհը, հասնեն կատարելության, այլևս աղքատներ չեն լինի, որոնք ի վիճակի չլինեն զվարակ զոհաբերել՝ մտավոր, բարոյական կամ ֆիզիկական կարողությունների պակասի իմաստով: Բոլորը կատարյալ մարդիկ կլինեն, իսկ նրանց ընծաները կներկայացնեն իրենց կատարյալ անձերը՝ ներկայացված զվարակներով: Դավիթը, խոսելով այս մասին, ասում է. «Այն ժամանակ քեզ հաճելի կլինեն արդարության զոհերը [արդար գործերը], ողջակեզներն ու ամբողջովին այրված զոհերը. այն ժամանակ ցլիկներ [կատարյալ զոհեր] կմատուցեն քո զոհասեղանի վրա» (Սաղմ. 51:19): Ակնհայտ է, սակայն, որ Դավթի ասածը չպետք է հասկանալ իբրև բառացի, արյունոտ, նախատիպային զոհաբերությունների վերականգնման մասին ուսուցում, որովհետև նույն կապակցությամբ նա ասում է. «Որովհետև դու զոհ չես ուզում [ո՛չ խորհրդանշական, ո՛չ նախատիպային. մեղքի ամբողջական քավությունը մինչ այդ «մեկընդմիշտ» կատարվել էր] .... Աստծու ընդունելի զոհը կոտրված հոգին է. բեկված ու խոնարհ սիրտը, ո՛վ Աստված, դու չես անարգում»: Այս բոլոր զոհաբերությունները պետք է կատարվեն զոհաբերողի ազատ կամքի և ցանկության համաձայն (Ղևտ. 1.3):

Նվիրագործման ամբողջականությունը ցույց էր տրվում կենդանու մահով, այսինքն՝ ցեղի յուրաքանչյուր անդամ պետք է նվիրագործեր

իր կամքը, բայց դրան չպետք է հաջորդեր ո՛չ մարդկային բնության ոչնչացումը (մարմնի այրումը բանակատեղիից դուրս), ո՛չ էլ կյանքի անցումը նոր բնության՝ դեպի «Սրբությունների սրբություն»: Այնտեղ միայն քահանաներն են մտնում, ինչպես ցույց է տրված Քավության զոհաբերություններում: Ոչ. նվիրագործվելիս նրանք ընդունվում են որպես մարդ և կատարելագործվելու են որպես այդպիսին. նրանց կյանքի իրավունքը, որպես այդպիսին, Քահանայապետն է գնել, որի Մարմնի անդամների մեջ ներկայացված է ողջ հաղթող Եկեղեցին: Նվիրագործությունները ներկայացնում են փրկագնի գնահատումը և նվիրատուների համաձայնությունը Աստծու օրենքին՝ որպես պայման, որով նրանք կարող են շարունակել հավերժ ապրել Նրա հետ ներդաշնակության և բարեհաճության մեջ:

Ժողովրդի ողջակեզները

Քահանաների ողջակեզները պետք է անընդհատ մատուցվեին զոհասեղանի վրա, և կրակը երբեք չպետք է մարեր. «Այս է ողջակեզի օրենքը. ողջակեզը զոհասեղանի վրա գտնվող կրակի վրա պիտի մնա ամբողջ գիշեր՝ մինչև առավոտ, և զոհասեղանի վրա կրակը վառած պիտի մնա... Զոհասեղանի վրա կրակը միշտ վառած պիտի մնա, չպիտի հանգչի: Ամեն առավոտ քահանան դրա վրա փայտ պիտի վառի, դրա վրա շարի ողջակեզը և դրա վրա այրի խաղաղության զոհերի ճարպը... Կրակը միշտ վառած պիտի մնա զոհասեղանի վրա, չպիտի հանգչի» (Ղևտ. 6:9, 12, 13):

Այսպիսով, յուրաքանչյուր զոհաբերողի մտքում այն փաստն էր, որ զոհասեղանն արդեն սրբացված կամ առանձնացված է, և որ նրանց զոհաբերություններն ընդունելի կլինեն, քանի որ Աստված ընդունել էր Քավության օրվա զոհաբերությունները: Այս զոհասեղանին իսրայելացին մատուցում էր իր ազատ կամքի զոհը, ինչպես ներկայացվում է Ղևտ. 1-ում: Այն կատարվում էր սովորական ձևով. կտորների բաժանված և լվացված անասունը դրվում էր զոհասեղանի վրա՝ և ամբողջությամբ այրվում՝ որպես անուշահոտ զոհաբերություն Տիրոջը: Սա խորհրդանշում էր Եհովային ուղղված երախտագիտության աղոթքը՝ իբրև Նրա ողորմության, իմաստության և սիրո ընկալում՝ արտահայտված Քրիստոսի կոտրված մարմնում. նրանց փրկագինը:

Ժողովրդի խաղաղության զոհերը

Այս զոհը պետք է լիներ նախրից կամ հոտից. դա կարող էր զոհաբերվել կա՛մ որպես ուխտի կատարում, կա՛մ որպես կամավոր «շնորհակալության զոհ»։ Մատուցողը դրա մի մասը պետք է տաներ Եհովային. «Եվ իր ձեռքով թող բերի Տիրոջ կրակով այրվող զոհերը. զոհի ճարպը թող բերի կրծքի հետ միասին», և Քահանան ճարպը թող այրի զոհասեղանի վրա, կուրծքը երերացնի Տիրոջ առաջ, բայց կուրծքը, ինչպես նաև ուսը պատկանում է քահանաներին։ Մատուցողը պետք է ուտի զոհաբերությունը (Ղևտ. 3 և 7։11-18, 30-34)։

Սա կարծես, թե ցույց է տալիս, որ եթե որևէ մեկը պետք է հետո կատարյալ խաղաղության և ներդաշնակության գա (ինչպես բոլորը պետք է անեն, այլապես կվերանան Երկրորդ մահով), նա պետք է ուտի կամ Աստծուն լիակատար նվիրաբերվելու ուխտ կապի Նրա հետ։ Եթե այդկերպ կատարելագործվելուց հետո նա կրկին պղծվի կամավոր մեղքով, ապա պետք է մեռնի (Երկրորդ մահը), ինչպես երևում է անմաքուր բաներին դիպչելու պատժից (Ղևտ. 7։19–21) Համեմատե՛ք Հայտն. 20։9, 13–15։

Այս զոհաբերության հետ մատուցվում էին յուղով հունցված բաղարջ շոթեր, յուղով օծված բաղարջ լավաշներ, որոնք խորհրդանշում էին զոհաբերողի հավատքը Քրիստոսի նկարագրի հանդեպ, որը նա պետք է ընդօրինակեր, և թթխմորով հացի ընծա՝ ցույց տալով, որ նա գիտակցում էր իր անկատարությունը նվիրագործման ժամանակ. թթխմորը մեղքի նախատիպն է (Ղևտ. 7։11–13)։

Ժողովրդի հացի ընծաները

Սրանք յուղով շաղված ընտիր ալյուրից բաղարջ շոթեր էին, որոնք մատուցվում էին Տիրոջը՝ քահանայի միջոցով։ Դրանք թերևս ներկայացնում էին ողջ աշխարհի կողմից, Իր Եկեղեցու միջոցով, Տիրոջը մատուցված գոհաբանությունն ու երկրպագությունը։ «Փառք նրան եկեղեցու մեջ, որ Քրիստոս Հիսուսով է, սերնդեսերունդ, հավիտյանս հավիտենից» (Եփես. 3.21)։ Դրանք ընդունվում էին քահանաների կողմից։ Զոհասեղանին դրված նմուշը ցույց էր տալիս, որ այն հավանության էր արժանացել և ընդունելի էր Եհովայի համար։

Ժողովրդի հանցանքի կամ մեղքի զոհերը

«Եթե մեկը հանցանք գործի և մեղանչի Տիրոջ սուրբ բաների հանդեպ... Եթե մեկը մեղանչի և խախտի Տիրոջ պատվիրաններից մեկնումեկը, թեև անգիտակցաբար, որ չպետք է արվեր, նա հանցավոր է և պետք է կրի իր անօրենությունը: Նա իր հոտերից քահանայի մոտ թող բերի անարատ մի խոյ» և դրամ՝ ըստ հանցանքին տրված քահանայի արժեքի, դրա վրա պետք է ավելացնի դրա արժեքի մեկ հինգերորդը, և դա կլինի նրա ընծան: Եվ քահանան նրա համար քավություն պետք է անի: Իսկ եթե որևէ մեկը դիտավորյալ մեղք է գործում և վնաս պատճառում կամ խաբում է իր մերձավորին, ապա նա պետք է վերադարձնի հիմնական գումարը և դրա վրա պետք է ավելացնի դրա արժեքի մեկ հինգերորդը (քսան տոկոսը) և տա տուժվածին: Եվ նա Տիրոջը խոյ պիտի մատուցի որպես հանցանքի զոհ (Ղևտ. 5:15–19, 6:1–7):

Սա սովորեցնում է, որ յուրաքանչյուր սխալ պետք է հատուցվի տոկոսներով և ուղեկցվի ապաշխարությամբ կամ Տիրոջից ներողություն խնդրելով Եկեղեցու (Քահանայության) միջոցով՝ օրինազանցի կողմից իր թերությունների և փրկագնի արժեքի գիտակցումով, որը ներկայացվում է մատուցված խոյով:

Բայց նկատեք տարբերությունը մեղքի այս զոհերի և «Քավության օրվա» մեղքի զոհերի միջև: Վերջիններս մատուցվում էին Աստծուն (Արդարություն) «Սրբությունների սրբություն»-ում՝ որպես «ավելի լավ զոհեր», իսկ առաջինները մատուցվում էին քահանաներին, որոնք ժողովրդին փրկագնում էին Քավության օրը: Ժողովրդի խոստովանությունը պետք է ուղղված լինի իրենց Փրկչին. Քահանան, իհարկե, վերցնում և Տիրոջն էր մատուցում զոհերի մի մասը՝ որպես «հիշատակ», որպես խոստովանություն, որ Քավության օրը (Ավետարանի դարաշրջան) իրականացված փրկության ամբողջ ծրագիրը պատկանում էր Երկնային Հորը, բայց մնացածը նա յուրացնում էր՝ ուտելով այն:

Ամբողջ աշխարհը, փրկագնված Քրիստոսի թանկարժեք արյամբ (մարդկային կյանքով), մեղքերի թողության համար կներկայանա «Թագավորական քահանայությանը», որոնց կողմից նրանց ընծաների կամ նվիրագործությունների ընդունումը կնշանակի ներում: Մեր Տեր Հիսուսի՝ Իր աշակերտներին ուղղված խոսքերը համահունչ են սրան.

«նրանց վրա փչեց ու ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին։ Եթե մեկի մեղքերը ներեք, նրան ներված կլինի. եթե մեկի մեղքերը չներեք, չներված կմնա» (Հովի. 20.23)։

Թեև այս «հաշտության ծառայությունը» ամբողջությամբ պատկանում է հաջորդ դարաշրջանին, երբ ավարտված կլինեն Քավության բոլոր զոհաբերությունները, սակայն նույնիսկ հիմա «Թագավորական քահանայության» ցանկացած անդամ կարող է ասել բոլոր նրանց, ովքեր հավատում և ապաշխարում են. «Քեզ ներված լինեն քո մեղքերը», ինչպես վարվեց մեր Գլուխը՝ հավատքով սպասելով, ինչպես Նա արեց, մեղքերի համար մատուցված զոհաբերությունների ավարտին։ Դեռ ավելին, այս քահանաներն այժմ գիտեն այն պայմանները, որոնցով ներում է խոստացված, և կարող են իշխանությամբ խոսել, երբ տեսնեն, որ այդ պայմանները կատարվում են։

Քավության օրվա զոհերը, ինչպես տեսանք, միշտ այրվում էին (Ղևտ. 6:30, Եբր. 13:11), բայց Քավության օրվանից հետո մատուցված հանցանքի զոհերը չէին այրվում, այլ դրանք ուտում (յուրացնում էին) քահանաները։

Տղամարդկանց և կանանց միջև տարբերությունների դադար

«Այս է մեղքի զոհի [հանցանքի զոհի] օրենքը.... Այն քահանան, որ մատուցում է մեղքի զոհը, նա պիտի ուտի այն... Քահանաների բոլոր արու զավակները պիտի ուտեն դրանից» (Ղևտ. 6։25-29)։

Ըստ Սուրբ Գրքի՝ Տերը և բոլոր սուրբ հրեշտակները համարվում են արական սեռի, մինչդեռ բոլոր սրբերը միասին ներկայացված են իբրև իգական սեռի՝ «կույսեր», որոնք մեր Տեր Հիսուսի հարսն են։ Բայց մարդկային կին արարածն ի սկզբանե եղել է Աստծու պատկերով և նմանությամբ ստեղծված տղամարդու մի մասը և դեռևս շարունակում է հանդիսանալ տղամարդու մի մասը (թեև նրանից ժամանակավորապես առանձնացված է վերարտադրման նպատակով), սակայն նրանցից ո՛չ մեկն էլ լիարժեք չէ առանց մյուսի։ Ինչպես կատարյալ մարդու անունն էր Ադամ, այնպես էլ երկուսի ստեղծման ժամանակ «Աստված նրանց անունը Ադամ դրեց». գլխավորությունը մնաց տղամարդուն,

որն այսպիսով դարձավ կնոջ խնամակալը կամ պահապանը՝ որպես իր մարմնի մաս (Եփես. 5:23, 28)։ Սեռային այս բաժանումն Ադամին անկատար չդարձրեց. այն պարզապես նրա կատարելությունները բաժանեց երկու մարմինների միջև, որոնց «գլուխը» մնաց ինքը։

Սուրբ Գիրքը խոսում է այն մասին, որ «վերականգնման ժամանակների» ավարտին, ի վերջո, բոլորը (տղամարդիկ և կանայք) կվերականգնեն իրենց կատարյալ վիճակը, որում Ադամն էր մինչև Եվայի՝ իրենից առանձնանալը։ Մենք չենք հասկանում, որ և՛ տղամարդը և՛ կինը կորցնելու են իրենց անհատականությունը, բայց նրանցից յուրաքանչյուրը ձեռք է բերելու այնպիսի հատկանիշներ, որոնք այժմ չունի։ Եթե այս միտքը ճշմարիտ է, ապա դրանից հետևում է, որ որոշ կանանց ծայրահեղ քնքշությունը և որոշ տղամարդկանց ծայրահեղ կոպտությունն անկման արդյունք են, և որ կատարելության վերականգնումը, որում երկու սեռերի տարրերը կատարելապես պետք է միավորվեն և ներդաշնակվեն, կդառնա Աստծու ծրագրած կատարյալ մարդկությունը։ Մեր սիրելի Փրկիչը, երբ նա «Քրիստոս Հիսուս մարդն էր», թերևս ո՛չ կոպիտ և առնական էր, ո՛չ էլ կանացի։ Նրա մեջ մտավոր ուժն ու տղամարդկային վեհությունն ամենահիասքանչ կերպով զուգորդվում էին իսկական կանացիության վեհ մաքրության, քնքշության և վայելչության հետ։ Մի՞թե Նա կատարյալ մարդ չէր, որ մահացավ մեր ցեղի համար և փրկեց երկու սեռերին։ Եկեք չմոռանանք, որ որպես մարդ նա օգնական չուներ. ուստի արդյո՞ք Նա չպետք է Ինքնին կատարյալ լիներ, որպեսզի վճարեր համապատասխան գինն Ադամի (տղամարդու և կնոջ) համար։ Կա՛մ Եվան այսկերպ էր ներկայացված մեծ փրկագնում, կա՛մ իր ամուսնու կողմից՝ որպես իր «գլուխը», այլապես մայր Եվան ընդհանրապես չէր փրկվի. այս գաղափարը հակասում է Սուրբ Գրքի մյուս հատվածներին։

Սուրբ Գրքում Ավետարանի եկեղեցին իսկապես կոչվում է «հարս», ոչ թե «Քրիստոս Հիսուս մարդու», այլ հարություն առած և համբարձված Քրիստոսի հարս։ Որպես նոր արարածներ, որոնք ծնվել են Աստծու հոգուց՝ հոգևոր բնության համար, մենք նշանված ենք Հոգի Հիսուսի հետ, որի անունը, պատիվը և գահը պետք է կիսենք։ Եկեղեցին ոչ թե զոհաբերված Քրիստոս Հիսուս մարդու հարսն է, այլ փառավորյալ Տեր Հիսուսի, ով Իր երկրորդ գալստյան ժամանակ կհռչակի նրան որպես Իրենը (Հռոմ. 7:4)։

Ինչպես հաջորդ դարաշրջանում տղամարդու և կնոջ դեպքում է լինելու, այնպես էլ կլինի Քրիստոսի և Եկեղեցու դեպքում. Եկեղեցու փառավորումից հետո ողջ կանացիությունը կվերանա. «Նրա նման կլինենք»՝Նրա Մարմնի անդամները: «Եվ սա է նրա անունը, որով նա [այն ժամանակ] պիտի կոչվի [իր Տիրոջ անունը]՝ Տերը՝ մեր Արդարությունը» (Երեմ. 33:16, 23:6): Լինելով մեծ Մարգարեի, Քահանայի և Թագավորի Մարմինը՝ Եկեղեցին կդառնա Հավիտենական Հոր կամ ողջ աշխարհի Կենսատուի մի մասը (Ես. 9:6):

Նույն գաղափարը հանդիպում է ողջ Սուրբ Գրքում. քահանայական ցեղի տղամարդիկ էին միայն զոհեր մատուցում և հանցանքի զոհերը ուտում, ինչպես նշվեց վերևում, և միայն նրանք էին մտնում ժողովի վրան և անցնում վարագույրից այն կողմ: Նույն կերպ էլ Սուրբ Հոգու տնօրինությունն է ավետարանական այս դարաշրջանի համար. «Եվ նա ոմանց տվեց [տղամարդ] առաքյալներ լինելու, ոմանց՝ [տղամարդ] մարգարեներ, ոմանց՝ [տղամարդ] ավետարանիչներ, ոմանց՝ [տղամարդ] հովիվներ ու վարդապետներ՝ կատարելագործելու սրբերին ծառայության գործում՝ Քրիստոսի մարմնի շինության համար» (Եփես. 4:11,12, Դիագլոտ): Վերոնշյալ «տղամարդ» բառը անգլերեն տեքստում հանդիպում է այնպես, ինչպես հունարենում է, և դա համապատասխանում է Տիրոջ և առաքյալների նշանակումներին: «Կնոջը թույլ չեմ տալիս, որ ուսուցանի [Եկեղեցում], ոչ էլ ամուսնուն իշխի»,- հստակ ասում է առաքյալը (Ա Տիմ. 2:12): Սա Քրիստոսի և Եկեղեցու ներկայիս հարաբերությունների օրինակն է, որը, ինչպես մենք հասկանում ենք, կավարտվի այս դարաշրջանի ավարտին, երբ հաղթողները կփառավորվեն և մեկ կլինեն Տիրոջ հետ՝ որպես «եղբայրներ»:

Սակայն սա չի նշանակում, որ Եկեղեցում քույրերը չեն կարող հավասարապես իրենց «մարմինները մատուցել կենդանի զոհ՝ սուրբ և աստվածահաճո» և կարևոր «ծառայության գործ» կատարել Եկեղեցում՝ որպես «Թագավորական քահանայության» անդամներ. նրանք նույնքան հաճելի են Տիրոջը, որքան եղբայրները, որովհետև իրոք սեռի, գույնի և վիճակի հետ կապված բոլոր տարբերություններն անտեսվում և դուրս են մնում Աստվածային ուշադրությունից այն պահից ի վեր, երբ դառնում ենք «նոր ստեղծված՝ Քրիստոս Հիսուսի մեջ» (Բ Կորնթ. 5:17, Գաղ. 3:28), սակայն նախատիպը, կերպարը, դասը պետք է շարունակվեն, և հետևաբար տարբերություններն

այդքան խստորեն են պահպանվում Քրիստոսի եկեղեցու ծառայության հատուկ և ավելի կարևոր մասերում։

ԳԼՈՒԽ VII

«Երինջների մոխիրը շաղ տալով՝ մաքրում են պղծվածների մարմինը»
Եբր. 9:13

Քավության օրվա զոհաբերություններից ոչ մեկը - ժողովրդի համար մատուցված հաջորդող զոհաբերություններից ոչ մեկը - այս զոհաբերությամբ ներկայացվող դասը - Պողոս առաքյալը՝ կրտսեր քահանան, որը վկայում է նախատիպի մասին - ժողովրդի մաքրության համար երինջների մոխիրը շաղ տալը տեղի կունենա Հազարամյա դարաշրջանում - ինչպես է իրականանալու մաքրագործումը:

Իսրայելի ծիսական օրենքի առանձնահատկություններից մեկը, որը նշված է Թվ. 19-ում, պահանջում էր մորթել կարմիր երինջ (կով)՝ անարատ երինջ, որի վրա երբեք ծառայության լուծ դրված չի եղել: Այն ընդգրկված չէր ո՛չ Քավության օրվա մեղքի զոհերի և ո՛չ էլ Քավության օրվանից հետո ժողովրդի համար մատուցվող զոհերի մեջ. իրականում դա ամենևին էլ «զոհ» չէր, քանի որ դրա ոչ մի մասը չէր մատուցվում Տիրոջ զոհասեղանի վրա կամ ուտվում քահանաների կողմից: Այն զոհաբերվում էր, բայց ոչ նույն իմաստով և ոչ նույն տեղում, ինչ այս զոհերը, որոնք մատուցվում էին Գավթում: Այն նույնիսկ չէր մորթվում քահանաներից մեկի կողմից, և դրա արյունը չէր տարվում Սուրբ տեղ և Սրբությունների սրբություն: Կարմիր երինջը տարվում էր Իսրայելի բանակատեղիից դուրս, որտեղ այն մորթվում և այրվում էր՝ մոխրանալով. միսը, ճարպը, մաշկը, արյունը և այլն, բացառությամբ

մի փոքր քանակությամբ արյան, որը քահանան վերցնում և յոթ անգամ շաղ էր տալիս ժողովի վրանի առջևում (Վերանայված տարբերակ և Leeser)։ Երինջի մոխիրը չէր բերվում Սուրբ տեղ, այլ մնում էր բանակատեղիից դուրս, հավաքվում էր կույտի մեջ և, ըստ երևույթին, հասանելի էր այն մարդկանց, ովքեր դրա կարիքն ունեին։ Օրենքի հրամանի համաձայն՝ մոխրի մի մասը պետք էր խառնել ջրի հետ անոթի մեջ, և այս խառնուրդի մեջ թաթախված զոպան պետք է օգտագործվեր օրենքով անմաքուր համարվող մարդկանց, հագուստը, վրանները և այլն ցողելու համար, դրանց մաքրագործման համար։

Հաշվի առնելով այն, ինչ մենք տեսանք Քավության օրվա զոհաբերությունների դեպքում, որոնք նախանշում էին Ավետարանի այս դարաշրջանի ավելի լավ զոհաբերությունները (մատուցված Թագավորական քահանայության, Քրիստոսի՝ Գլխի և Մարմինի կողմից)՝ այս երինջը ոչ մի իմաստով կապված չէր սրանց հետ և ակնհայտորեն չէր ներկայացնում այս ժամանակի զոհաբերություններից որևէ մեկը։ Այն նաև տարբերվում է այն զոհերից, որոնք ընդունվել են Իսրայելի ժողովրդի անունից՝ Քավության օրվանից հետո, և որոնք, ինչպես մենք հենց նոր ցույց տվեցինք, խորհրդանշում էին նրանց ապաշխարությունն ու վիշտն իրենց մեղքերի համար Հազարամյակի ընթացքում, ինչպես նաև նրանց ամբողջական նվիրումը Տիրոջը։ Երինջի այրումը կապված չէր այս զոհաբերություններից ոչ մեկի հետ, որոնք բոլորն էլ քահանաներն էին մատուցում Գավթում։ Մենք պետք է այլ տեղ փնտրենք այս կարմիր երինջի նախատիպը, որովհետև եթե այն ինչ-որ իմաստով ներկայացներ քահանաներին, ապա անպայման կմորթվեր նրանցից մեկի կողմից՝ վկայելով այս փաստի մասին։

Ուրեմն ի՞նչ էր նշանակում կարմիր երինջի այս զոհաբերությունը։ Ո՞ր դասակարգին կամ մարդկանց էր այն ներկայացնում՝ որպես «բանակատեղիից» դուրս տառապող, և ի՞նչ առումով էին նրանց տառապանքները կապված Աստծու ժողովրդի մաքրագործման հետ՝ ներառյալ նրանց, ովքեր դեռ պետք է դառնային Նրա ժողովուրդը Հազարամյա դարաշրջանում։

Մենք պատասխանում ենք, որ Աստծու ժողովրդի մի դասակարգ, որը չէր պատկանում «Թագավորական քահանայությանը», արդարության համար չարչարվել է «բանակատեղիից» դուրս։ Առաքյալը Եբր. 11-ում ներկայացնում է այս մարդկանց համառոտ

պատմությունը և այն սաստիկ փորձությունները, որոնք նրանք կրել են։ Հավատքի սխրանքների մասին պատմելուց հետո նրանց մասին ասում է. «Եվ էլ ի՞նչ ասեմ. ժամանակս բավական չէ, որպեսզի պատմեմ Գեդեոնի, Բարակի, Սամփսոնի, Հեփթայեի, Դավթի, Սամուելի և մյուս մարգարեների մասին, որոնք հավատով թագավորությունների հաղթեցին, արդարություն գործեցին, հասան խոստումների, առյուծների երախներ փակեցին, կրակի զորությունը հանգցրին, սրի բերանից ազատվեցին, տկարությունից զորացան, պատերազմի մեջ զորավոր եղան, օտարների բանակներ փախուստի մատնեցին, կանայք իրենց մեռելներին հարության միջոցով վերստացան, ուրիշներն էլ, ազատությունը չընդունելով, խիստ չարչարվեցին, որպեսզի լավագույն հարության հասնեն. մյուսներն էլ ենթարկվեցին նախատինքների ու գանահարությունների, կապանքների ու բանտի, քարկոծվեցին, սղոցվեցին, փորձանքի մեջ ընկան, սրով սպանվելով մեռան, շրջեցին ոչխարի ու այծի մորթիներով ծածկված. ապրեցին կարիքի, նեղության, չարչարանքների մեջ։ Աշխարհը նրանց արժանի չէր» (Եբր. 11.32-38)։

Այստեղ մենք ունենք կարմիր երինջի պատմությանը հարմար դասակարգ, որն իր կյանքը տվեց «բանակատեղիից» դուրս, դասակարգ՝ բոլոր առումներով պատկառելի, բայց դեռ ոչ քահանայական։ Այս դասակարգը, չլինելով Քահանայապետի մարմնի մաս, չէր կարող մաս կամ բաժին ունենալ Քավության օրվա մեղքի զոհերի մեջ և ոչ էլ կարող էր ընդունվել Սուրբ տեղով և Սրբությունների սրբությամբ խորհրդանշված հոգևոր պայմանների մեջ։ Ոմանց համար կարող է զարմանալի թվալ, որ մենք այսքան դրականորեն հայտարարում ենք, որ այս հին արժանավորները «Թագավորական քահանայության» անդամներ չեն եղել, մինչդեռ մենք նաև նույնքան դրականորեն հայտարարում ենք, որ Ավետարանի ներկայիս դարաշրջանում Աստծու՝ այլևս ոչ հավատարիմ ծառաներն այդ «Թագավորական քահանայության» անդամներ չեն։ Մեր դրականությունն այս հարցում Աստծու Խոսքի դրականությունն է, որը հենց այս հայրապետների հավատարմության մասին պատմվածքի համատեքստում այնքան պերճախոս հայտարարում է. «Եվ սրանք բոլորը հավատով վկայություն ստացան, բայց խոստումը չստացան [հիմնական օրհնությունը չստացան]։ Աստված մեզ համար ավելի լավ բաներ էր նախատեսել, որպեսզի դրանք առանց մեզ չկատարվեն» (Եբր. 11։39, 40)։

Մենք նաև չպետք է դժվարություն ունենանք հասկանալու, որ թեև

կարող էին լինել նախատիպային ղևտացիներ (գալիք քավության նկատմամբ հավատքով արդարացված) նախքան Տեր Հիսուսի աշխարհ գալը, սակայն չէին կարող լինել նախատիպային քահանաներ, քանի որ Նա էր Գլուխը կամ Քահանայապետը, և ամեն ինչում ուներ գերակայություն և քավություն էր արել իր «մարմնի» և «իր տան» բոլոր արատների համար նախքան որևէ մեկը կդառնար Իր եղբայրը և թագավորական քահանայության անդամը: Ինքը՝ մեր Տերը, շատ հստակ խոսեց այս մասին և հակիրճ սահմանագծեց Իրեն նախորդած հավատարիմների և Իրեն հաջորդող հավատարիմների միջև, որոնք գնալու էին Իր հետքերով և դառնալու էին Իր ժառանգակիցները: Հովհաննես Մկրտչի մասին նա ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ. կանանցից ծնվածների մեջ Հովհաննես Մկրտչից ավելի մեծը չի եղել, բայց երկնքի արքայության մեջ ամենափոքրը նրանից մեծ է» (Մատթ. 11:11): Հովհաննես Մկրտիչը պատկանում էր կարմիր երինջների այս դասին, որոնք նույնիսկ մինչև մահ տառապեցին «բանակատեղիից» դուրս, բայց նա ոչ մի կապ չուներ Քավության օրը մատուցված թագավորական քահանայության ավելի լավ զոհերի հետ, որոնց ճարպն ու կենսատու օրգանները մատուցվեցին Աստծու զոհասեղանի վրա՝ «Գավթում», և որոնց արյունը տարվեց «Սրբությունների սրբություն»՝ խորհրդանշելով նրանց, ովքեր դառնում են նոր արարածներ Քրիստոս Հիսուսով, նույնիսկ Նրա «Մարմնի»՝ Եկեղեցու անդամներ, Նրա ժառանգակիցներն ամեն ինչում:

Բայց թեև այս հին արժանավորները ոչ մի իմաստով մեղքի զոհի մաս չեն կազմում, այնուամենայնիվ նրանք կապված են մեղքից մաքրվելու հետ. նրանց մոխիրը (նրանց՝ մինչև մահ հավատարմության իմացությունն ու հիշողությունը)՝ խառնված ճշմարտության ջրի հետ և կիրառված մաքրող զոպայով, արժեքավոր է՝ մաքրելով, սրբագործելով բոլոր նրանց, ովքեր ցանկանում են լիարժեք ներդաշնակության մեջ լինել Աստծու հետ և «շաղ տալով՝ մաքրում են պղծվածների մարմինը»: Սակայն անցյալի հավատարմության այս դասերն ինքնին չէ, որ մեզ համար արժեքավոր են, այլ միայն Քավության օրվա մեղքի զոհերի շնորհիվ, միջոցով և առնչությամբ, որոնց մասին առաքյալը խոսում է նույն առիթով՝ «ցուլերի, նոխազների արյունը»: Եվ հին արժանավորների (խորհրդանշված կարմիր երինջի մոխրով) հավատարմության հիշողություններն ու դասերը մեզ համար այժմ ոչ միայն սրբագործող ուժ ունեն, այլև շատ ավելի լայն իմաստով դրանք

կիրառելի և օրհնություն կլինեն ընդհանրապես ողջ մարդկության համար Հազարամյա դարաշրջանում: Որովհետև, ինչպես արդեն տեսանք, աստվածային ծրագրով է, որ այս հին արժանավորները, որոնցից ամենամեծը երկնքի արքայության մեջ ավելի քիչ պատիվ ունի, քան ամենափոքրը, այնուամենայնիվ բարձր, պատվավոր և նշանավոր տեղ կզբաղեցնեն Աստծու այս արքայության մեջ՝ որպես նրա գործակիցներ և ներկայացուցիչներ: Որովհետև նրանք կլինեն «իշխաններ ողջ երկրի վրա», Արքայության դատաստաններն իրականացնողներ և նրա օրհնության ուղիներ «երկրի բոլոր ազգերի» համար: Այսպիսով, այս հին արժանավորների հավատարմությունը ներկայացված էր երինջի հավաքված մոխրի միջոցով՝ պահված հետագա օգտագործման համար, իբրև փորձառության, հավատքի, հնազանդության, վստահության և այլնի արժեքավոր դասեր, որոնք գալիք դարաշրջանում մաքրագործում փնտրող մարդկության աշխարհում կիրառվելիս՝ կսրբացնեին և կմաքրագործեին նրանց ո՛չ թե առանց Քավության օրվա զոհաբերությունների, այլ դրանց առնչությամբ և դրանց հիման վրա (Սաղմ. 45:16):

Երինջի այրումը վերահսկում էր քահանան, ով վերցնում էր եղևնու փայտ, զոպայի մի ճյուղ ու մուգ կարմիր մի շոր և գցում այրվող երինջի վրա: Զոպան խորհրդանշում էր մաքրագործումը, եղևնու փայտը կամ մշտադալար ծառը՝ հավերժական կյանքը, իսկ մուգ կարմիր շորը՝ Քրիստոսի արյունը: Այս երեքը կրակի մեջ նետելը նշանակում էր, որ անարգանքը, որն ընկել էր հին արժանավորների վրա, որոնց քարկոծեցին, կտոր-կտոր արեցին և այլն, և որոնց աշխարհին արժանի չէր, թույլ տվեց, որ թանկագին արյան արժանիքները, ճշմարտության մաքրագործումը և հավերժական կյանքի պարգևը նրանց վերագրվեն հավատքով, և որ իրենց մահից հետո նրանք համարվեն մաքրված, արդարացված, ընդունված: Կրտսեր քահանան (ոչ թե Ահարոնը, ով խորհրդանշում էր Տեր Հիսուսին), ով տեսնում, ճանաչում և հավանություն էր տալիս երինջի այրմանը և վերցնում էր դրա արյունն ու շաղ տալիս ժողովի վրանի դռան ուղղությամբ, կարծես թե խորհրդանշում էր մեծ կրտսեր քահանային՝ Պողոս առաքյալին, ով Աստծու օգնությամբ (Եղիազար անունը նշանակում է «Աստծու օգնությունն ունեցող», ոչ միայն մեզ համար սահմանեց Քավության օրվա մեղքի զոհերը, այլ նաև իր գրվածքներում մատնանշեց մեզ (Եբր. 11), ինչը մեզ հնարավորություն է տալիս բնորոշելու կարմիր երինջի

զոհաբերությունը՝ որպես հին արժանավորների նախատիպ։ Եվ այսպես նա շաղ է տալիս նրանց արյունը դեպի ժողովի վրանը՝ ցույց տալով, որ նրանց կյանքը լիովին և կատարելապես ներդաշնակ է ժողովի վրանի պայմաններին, թեև նրանք, չապրելով այդ բարձր կոչման օրերին, արտոնություն չունեին դառնալու մեծ Քահանայապետի Մարմնի, թագավորական քահանայության անդամներ։

Այն փաստը, որ կարմիր երինջի վրա երբեք լուծ չէր դրվել, ներկայացնում էր արդարացված մարդկանց դասը՝ ազատված Օրենքի ուխտից։ Թեև հին արժանավորների մեծ մասը ծնվել է Օրենքի ուխտի տակ և հետևաբար, ըստ օրենքի, ենթակա է դրա պայմաններին և դրա դատապարտությանը՝ մարմնի անկատարության միջոցով, այնուամենայնիվ մենք տեսնում ենք, որ Աստված արդարացրեց նրանց հավատքի միջոցով՝ որպես հավատարիմ Աբրահամի զավակներ։ Սա լիովին վկայում և հաստատում է առաքյալը, երբ ասում է. «Եվ սրանք բոլորը հավատով վկայություն ստացան». (ճիշտ կայացված) վճիռ, որը վկայում է այն մասին, որ նրանք գոհացրել են Աստծուն, և որ Նա նրանց օրհնություններ է շնորհել Իր խոստման համաձայն, թեև նրանք այդ օրհնությունները չէին կարող ստանալ այդ ժամանակ, բայց պետք է սպասեին և ստանային Աբրահամի հոգևոր Սերնդի՝ Քրիստոսի միջոցով։ Այն փաստը, որ այս զոհաբերությունը պետք է լիներ կով և ոչ թե ցուլ, տարբերակում էր այն Քավության օրվա մեծ զոհաբերությունից, որը պետք է միայն ցուլ լիներ։ Այն, որ դա պետք է լինի կարմիր կով, կարծես թե սովորեցնում է, որ այս հին արժանավորներն անմեղ չէին և հետևաբար ընդունված չէին Աստծու կողմից Քավության օրվա մեծ զոհաբերությունից առաջ, այլ որ նրանք «մեղավորներ էին, ինչպես մյուսները»։ Նրանց մաքրագործման կամ հավատքով արդարացման փաստն այլ կերպ է ցույց տրվել, ինչպես արդեն ասվել է վերևում։

Այն մաքրագործումները, որոնց համար նախատեսված էր կարմիր երինջի մոխիրը, հատուկ տեսակի էին, մասնավորապես նրանց պարագայում, ովքեր շփում էին ունեցել մահվան հետ։ Սա կարծես, թե ցույց է տալիս, որ երինջի մոխիրը նպատակ չուներ վերացնելու մարդու մեղքը. ոչ, նրա բարոյական մեղքը կարող էր մաքրվել միայն Քավության օրվա զոհաբերությունների արժանիքներով։ Մահացածների հետ շփման պատճառով պղծությունից մաքրումը կարծես սովորեցնում է, որ այս մաքրագործումը՝ հին արժանավորների փորձառությունից ազդված, հատուկ կկիրառվի մարդկության

աշխարհում Հազարամյա դարաշրջանում, մինչ նրանք փորձում են ազատվել ադամական մահվան ապականությունից՝ ձգտելով հասնել մարդկային կատարելության։ Անկյալ վիճակի բոլոր արատները կապված են մահվան հետ. բոլոր մարմնական տկարություններն ու ժառանգական արատները կապված են մահվան հետ, և կարմիր երինջի մոխիրը պետք է օգտագործվի՝ այդ բոլոր արատներից մաքրելու բոլոր նրանց, ովքեր կդառնան Աստծու ժողովուրդ։ Ինչպես կարմիր երինջի մոխիրը, որը դրված է մաքուր տեղում, այնպես էլ հին արժանավորների ցավալի փորձառությունների արդյունքները կլինեն օրինությունների, ցուցումների և օգնության պահեստ, որով նրանք, երբ դառնան Թագավորության ենթակա «իշխաններ», կաջակցեն վերականգնման գործին։ Յուրաքանչյուր ներված մեղավոր, ով ցանկանում է կատարելապես մաքրվել, ոչ միայն պետք է լվացվի ջրով (ճշմարտությամբ), այլ նաև պետք է իր նկատմամբ կիրառի այս «իշխանների» ցուցումները՝ խորհրդանշված երինջի մոխրի շաղ տալով, որը ներկայացնում է հավատքի և հնազանդության արժեքավոր դասեր՝ ուսուցանված այս դասի սեփական փորձով (Ելք 12:22, Ղևտ. 14:4,49, Սաղմ. 51:7, Եբր. 9:19)։

ԳԼՈՒԽ VIII

ԱՅԼ ԿԱՐԵՎՈՐ ՆԱԽԱՏԻՊԵՐ

Գավթի սյուները - Սպիտակ վարագույրները - Արծաթե կեռիկները - Սուրբ տեղի և Սրբություն սրբոցի դռան սյուները - Ոսկե սեղանը - Ոսկե աշտանակը - Խորհրդանշված քահանաները, որոնք խորը բաներ են տեսնում և դրանք չտեսնող ղևտացիները - Ոսկե զոհասեղանը - Ուխտի տապանակը Սրբություն սրբոցում - Դրա պարունակությունը և նշանակությունը - Քավությունը - Երկու քերովբեները – Անարատ քահանան - Այն խորհուրդը, որ ծածկված էր դարեր և սերունդներ շարունակ։

Նախորդ նկարագրության մեջ մենք դիտավորյալ բաց ենք թողել որոշ հետաքրքիր մանրամասների բացատրությունը, որն այժմ կարող են ավելի լավ հասկանալ նրանք, ովքեր ուշադիր ուսումնասիրության միջոցով պարզ պատկերացում են կազմել խորանի ընդհանուր հատակագծի, դրա ծառայությունների և նախատիպային նշանակության մասին։

Գավթում կանգնեցված և սպիտակ վարագույրները պահող սյուները ներկայացնում էին արդարացված հավատացյալներին. «Գավիթը», ինչպես արդեն տեսանք, ներկայացնում էր արդարացված վիճակը։ Սյուները փայտե էին՝ փչացող նյութից, այդպիսով ենթադրելով, որ խորհրդանշված դասը կատարյալ մարդիկ չէին։ Քանի որ մարդկային

կատարելությունը սովորաբար խորհրդանշվում էր պղնձով, այս սյուները պետք է կա՛մ պատրաստված լինեին պղնձից, կա՛մ ծածկված լինեին պղնձով՝ իսկապես խորհրդանշելու կատարյալ մարդկանց։ Բայց չնայած դրանք պատրաստված էին փայտից, սակայն տեղադրված էին պղնձե խարիսխների վրա, ինչը մեզ սովորեցնում է, որ չնայած նրանք իրականում անկատար են, սակայն ունեն կատարյալների դիրք։ Հավատքով արդարացումը հնարավոր չէ ավելի հստակ ներկայացնել։

Այս սյուների վրա հենված սպիտակ վարագույրը կազմում էր «Գավիթը»՝ լավ պատկերելով նույն արդարացումը կամ մաքրությունը։ Այսպիսով, արդարացվածները պետք է անընդհատ աշխարհին («բանակատեղիին») ցույց տային Քրիստոսի արդարությունը խորհրդանշող մաքուր կտավը՝ ներկայացնելով Քրիստոսի արդարությունը որպես իրենց ծածկոց։

Արծաթե կեռիկները, որոնցով սյուները պահում էին վարագույրը, խորհրդանշում էին ճշմարտությունը։ Արծաթը ճշմարտության ընդհանուր խորհրդանիշն է։ Այսպիսով, արդարացված հավատացյալները, որոնք ներկայացված են «Գավթի» սյուներով, կարող են իսկապես և ճշմարտացիորեն պնդել, որ Քրիստոսի արդարությունը ծածկում է իրենց բոլոր թերությունները (Ելք 27։11-17)։ Կրկին՝ միայն ճշմարտությամբ է, որ նրանք կարող են կառչել իրենց արդարացումից։

Խորանի մուտքի դռան սյուները՝ «Սուրբ տեղի» «դռան» մոտ, ծածկված էին առաջին «վարագույրով»։ Դրանք բոլորովին տարբերվում էին «Գավթի» սյուներից և խորհրդանշում էին «Քրիստոսով նոր արարածներին»՝ նվիրագործված սրբերին։ Դրանց և Գավթի սյուների միջև եղած տարբերությունը ներկայացնում է արդարացված և սրբագործված հավատացյալների վիճակների միջև եղած տարբերությունը։ Ինչպես տեսանք, արդարացված մարդու նվիրաբերումը մահվանը «Սուրբ տեղ» մտնելու ճանապարհն է՝ անցումը մարդկային կամքի, մարմնական մտքի մահվան միջով, առաջին վարագույրով։ Հետևաբար այս սյուները նախատեսված էին այս փոփոխությունը պատկերելու համար, ինչն էլ տեղի ունեցավ, քանզի դրանք ծածկված էին ոսկով՝ խորհրդանշելով աստվածային բնությունը։ Եվ այն փաստը, որ դրանք տեղադրված էին պղնձե խարիսխների մեջ, խորհրդանշում էր, որ «այս գանձն [աստվածային

բնությունը] ունենք կավե անոթներում» (Բ Կորնթ. 4:7), այսինքն՝ մեր նոր բնությունը դեռ հիմնված է և հենվում է մեր արդարացված մարդկային բնության վրա։ Պետք է հիշել, որ սա ճշգրտորեն համապատասխանում է «Սուրբ տեղի» խորհրդանշածին, այսինքն՝ մեր տեղին կամ դիրքին՝ որպես նոր, դեռևս ոչ կատարյալ արարածներ (Ելք 26:37)։

«Սրբություն սրբոցի» դռան սյուները գտնվում էին երկրորդ «վարագույրի» ներսում և խորհրդանշում էին նրանց, ովքեր ամբողջությամբ անցնում են մարմնից (վարագույրից) այն կողմ՝ հասնելով հոգևոր կատարելության։ Այս սյուները դասավորված էին այնպես, որ լիովին ցույց տային սա։ Պատված ոսկով, որը խորհրդանշում էր աստվածային բնությունը, բայց այլևս չդրված պղնձե խարիսխների վրա, այն է՝ անկախ մարդկային բոլոր պայմաններից, դրանք դրվում էին արծաթե խարիսխների վրա (իրականություն, ճշմարտություն, իրողություն)՝ կարծես մեզ ասելու համար. Երբ անցնեք այս վարագույրից ներս, կլինեք կատարյալ՝ իսկապես և ճշմարտապես նոր արարածներ (Ելք 26:32)։

Ոսկե սեղանը, որի վրա դրվում էին առաջավորության հացերը «Սուրբ տեղում», ներկայացնում էր Եկեղեցին՝ որպես ամբողջություն, ներառյալ Հիսուսին և առաքյալներին՝ բոլոր նրանց, ովքեր սրբագործվել են Քրիստոսով, ովքեր ծառայում են «կյանքի խոսքը պահելով» (Փիլիպ. 2:16)։ Այս դարաշրջանում ճշմարիտ Եկեղեցու մեծ գործը բոլոր նրանց կերակրելը, զորացնելն ու լուսավորելն է, ովքեր մտնում են ուխտի հոգևոր վիճակի մեջ։ Քրիստոսի Հարսը պետք է պատրաստի ինքն իրեն (Հայտն. 19:7)։ Այս դարաշրջանում աշխարհին վկայություն տալը երկրորդական է և կողմնակի։ Աշխարհի լիակատար օրհնությունը կգա Աստծու «ճիշտ ժամանակին», ավետարանական դարաշրջանի (խորհրդանշված Քավության օրը՝ մեղքի իր զոհերով) ավարտից հետո։

Ոսկե աշտանակը կամ կանթեղը, որը կանգնած էր ոսկե սեղանի դիմաց և լուսավորում էր «Սուրբ տեղում» գտնվող ամեն ինչ, պատրաստված էր ոսկուց՝ ամբողջը դրվագված մեկ կտորից։ Այն ուներ յոթ ճյուղ, որոնցից յուրաքանչյուրը կրում էր մեկ կանթեղ, ընդհանուր առմամբ՝ յոթ կանթեղ, որը կատարյալ կամ ամբողջական թիվ է։ Սա ներկայացնում էր ամբողջ Եկեղեցին՝ սկսած Գլխից՝ Հիսուսից, մինչև «փոքրիկ հոտի» վերջին անդամը, որին Նա մարդկանց միջից դուրս է բերում՝ աստվածային (ոսկե) բնության մասնակիցներ դարձնելու

համար։ Մեր Տերն ասում է. «յոթ ճրագակալները, որ տեսար, յոթ եկեղեցիներն են». մեկ Եկեղեցին, որի յոթ փուլերը կամ զարգացումները խորհրդանշվում էին Փոքր Ասիայի յոթ եկեղեցիներով (Հայտն. 1։11)։ Այո՛, այդ ճրագակալը ներկայացնում էր Անդրանիկների ողջ Եկեղեցին՝ ոչ թե անվանական, այլ ճշմարիտ Եկեղեցին, որոնց անունները գրված են երկնքում՝ ճշմարիտ լուսակիրների, «Թագավորական Քահանայության»։

Դրա պատրաստման ձևը գեղեցիկ էր՝ պտուղ և ծաղիկ, պտուղ և ծաղիկ, որոնք հաջորդում էին միմյանց՝ ներկայացնելով ճշմարիտ Եկեղեցին, որը գեղեցիկ և պտղաբեր էր սկզբից մինչև վերջ։ Յուրաքանչյուր ճյուղի գագաթին գտնվող կանթեղի մասը նշաձև էր, որի իմաստը կհասկանանք, երբ քննարկենք Ահարոնի գավազանի նշանակությունը։

Այս կանթեղի լույսն ապահովում էր «ճզմված» կամ զտված ձիթապտղի յուղը, իսկ կանթեղները միշտ վառ էին պահվում։ Այս յուղը խորհրդանշում էր Սուրբ Հոգուն, իսկ դրա լույսը՝ սուրբ լուսավորությունը, ճշմարտության ոգին։ Դրա լույսը նախատեսված էր միայն քահանաների համար, քանի որ ոչ ոքի թույլատրված չէր տեսնել այն կամ օգտվել դրա լույսից։ Այսպես էր ներկայացվում Աստծու հոգին կամ միտքը՝ տրված Եկեղեցու լուսավորության համար՝ Աստծու խորին խորհուրդների հարցում, որոնք ամբողջովին թաքնված են ոչ հոգևոր մարդուց (Ա Կորնթ. 2։14), նույնիսկ եթե նա հավատացյալ է՝ արդարացված մարդ (ղևտացի)։ Բացի իսկապես նվիրագործվածներից՝ «Թագավորական Քահանայությունից», ոչ ոքի թույլ չի տրված տեսնելու «Սուրբ տեղում» թաքնված այս խորը լույսը։ Քահանաները (Քրիստոսի նվիրագործված մարմինը) միշտ մուտք ունեն «Սուրբ տեղ». դա նրանց իրավունքն ու արտոնությունն է, դա նախատեսված էր նրանց համար (Եբր. 9։6)։ Ղևտական դասը չի կարող այն տեսնել մարդկային մտքերի վարագույրի պատճառով, որը կախված է նրանց և սուրբ բաների միջև, և այն դեն նետելու միակ ճանապարհը մարդկային կամքն ու բնությունը լիովին նվիրագործելն ու զոհաբերելն է։

Ամեն առավոտ և երեկո քահանայապետը՝ Ահարոնը և նրա որդիները, որոնք հաջորդեցին նրան այս պաշտոնում, պետք է մաքրեին և լցնեին ճրագները (Ելք 27։20, 21, 30։8)։ Այսպիսով, մեր

Քահանայապետն ամեն օր ավելի ու ավելի է լցնում մեզ Քրիստոսի մտքով և մաքրում հին բնության աղբից. այն պատրույգը, որի միջոցով գործում է Սուրբ Հոգին։

Խորհրդանշված քահանաներն ու ղևտացիները

Մենք երբեմն զարմանում ենք, թե ինչու որոշ կրոնական մարդիկ չեն կարողանում տեսնել բնական բաներից այն կողմ, չեն կարողանում տարբերակել Խոսքի ավելի խորը հոգևոր ճշմարտությունները, ինչո՞ւ են նրանք կարողանում հասկանալ ոչ հոգևոր մարդկանց հատուցումը, բայց չեն կարողանում հասկանալ աստվածային, երկնային կոչումը։ Խորանի մասին այս դասերը ցույց են տալիս, թե ինչու է դա այդպես։ Նրանք եղբայրներ են արդարացմամբ, «հավատի տնից», բայց եղբայրներ չեն Քրիստոսով. լիովին նվիրագործված չեն, զոհաբերողներ չեն։ Նրանք «Գավթի» ղևտացիներ են. նրանք երբեք չեն նվիրագործվել որպես քահանաներ՝ զոհաբերելու իրենց մարդկային իրավունքներն ու արտոնությունները, և ուստի չեն կարող մտնել «Սուրբ տեղ» և ոչ էլ տեսնել այն, ինչ պատրաստվել է միայն քահանաների դասի համար։ «Ինչ որ աչքը չտեսավ, ու ականջը չլսեց, և մարդու սիրտը չընկավ, այն Աստված պատրաստեց իրեն սիրողների համար»։ Բայց Աստված մեզ [ովքեր նվիրագործման միջոցով դարձել են «նոր արարածներ»՝ կոչված դառնալու «աստվածային բնության մասնակիցներ»] իր Հոգու միջոցով [կանթեղի լույսով] հայտնեց, որովհետև Հոգին քննում է [հայտնում է] ամեն ինչ, Աստծու խորքը [թաքնվածը] ևս» (Ա Կորնթ. 2:9-10)։

Անվանական եկեղեցին միշտ ներառել է թե՛ արդարացված և թե՛ սրբագործված դասերին՝ ղևտացիներին ու քահանաներին, ինչպես նաև կեղծավորներին։ Պողոս առաքյալի նամակներում որոշ հատվածներ ուղղված էին արդարացված դասին (ղևտացիներին), ովքեր լիովին չէին նվիրագործվել։ Ուստի նա գրում է գաղատացիներին. «Նրանք, ովքեր Քրիստոսինն են, իրենց մարմինը խաչը հանեցին կրքերով ու ցանկություններով հանդերձ» (Գաղ. 5:24)։ Այսպիսով նա կարծես ակնարկում է, որ նրանցից միայն մի քանիսն են իրականացրել զոհաբերելու ավետարանական կոչը, այն է՝ մարմնի խաչելությունը։

Նույն կերպ նա դիմեց հռոմեացիներին. «Արդ Աստծու ողորմածությամբ [դրսևորված Քրիստոսի միջոցով մեր արդարացմամբ]

աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր [հավատացյալներ՝ արդարացված Քրիստոսի հանդեպ հավատքով՝ ղևտացիներ], որ ձեր մարմինները մատուցեք կենդանի զոհ [որ դուք ամբողջությամբ նվիրագործվեք՝ այդպիսով դառնալով քահանաներ]՝ սուրբ և աստվածահաճո» (Հռոմ. 12:1)։ Բոլոր նրանք, որոնք իրենց սրտերում հրաժարվում են մեղքից և Քրիստոսով ընդունում Աստծու շնորհը, ձրիաբար արդարացվում են Հիսուսի հանդեպ հավատքով. Աստված նրանց ընդունում է որպես անմեղների կամ սրբերի, և Աստված հայտարարել է, որ պատրաստ է ընդունել այդպիսի զոհաբերողներին ու դրանց զոհաբերությունները Քրիստոսի միջոցով այս Քավության օրվա ընթացքում (ավետարանական դարաշրջան) և մինչև թագավորական քահանայության ընտրյալների լրիվ թիվը լրանա։ «Հիմա է ընդունելի ժամանակը»՝ այն ժամանակը, երբ նման զոհաբերություններն ընդունվելու են։ Ճիշտ է, որ ինչպես տեսանք, Աստված ընդունելու է այս աշխարհի զոհաբերությունները, և սա միշտ լինելու է միակ ճշմարիտ ճանապարհը բոլորի համար, այն է՝ իրենց փրկագնված էությունները Տիրոջը հանձնելը։ Սակայն այս դարաշրջանի ավարտից հետո ոչ ոքի թույլ չի տրվի զոհաբերություններ անել մահվան և տառապանքի գնով. նման զոհաբերություններն անհնար կլինեն նոր դարաշրջանի սկսվելուց և դրա կանոնների գործադրումից հետո։

Ակնհայտ է թվում, որ վաղ եկեղեցիների (հատկապես ժամանակակից աշխարհիկ խառնուրդի, որը մեր օրերի շփոթված «Բաբելոնն» է) մեծ մասը չէին նվիրաբերվում մահվան և հետևաբար չէին պատկանում խորհրդանշված «թագավորական քահանայությանը», այլ պարզապես ղևտացիներ էին, որոնք պաշտամունք էին մատուցում սրբարանում, բայց զոհեր չէին մատուցում։

Օրենքի նախատիպին անդրադառնալով՝ տեսնում ենք, որ 8580 ղևտացիներ էին նշանակված նախատիպային ծառայության համար, սակայն ընդամենը հինգ քահանա՝ նախատիպային զոհաբերության համար (Թվ. 4:46-48, Ելք 28:1)։ Հնարավոր է՝ սա, ինչպես «ստվերի» մյուս առանձնահատկությունները, նախատեսված էր ցույց տալու համար արդարացված հավատացյալների և անձնազոհ, նվիրագործված մարդկանց միջև եղած համամասնությունը։ Թեև անվանական Եկեղեցին ներկայումս միլիոնավոր անդամներ ունի, սակայն երբ հաշվում ենք կեղծավորներին, և երբ ենթադրում ենք, որ մնացած ամեն հազար յոթ հարյուրից միայն մեկը պետք է լինի կենդանի

զոհ (չնայած փոքր թվով, բայց նախատիպին համապատասխան ճիշտ համամասնությամբ), բավականին ակնհայտ է դառնում, որ Տիրոջ խոսքում անճշտություն չկար, երբ ասում էր, որ արքայությանն արժանացողները («թագավորական քահանայությունը») պետք է լինեն «փոքրիկ հոտ» (Ղուկ. 12:32)։ Եվ եթե հիշենք, որ հինգ քահանաներից երկուսը ոչնչացվեցին Տիրոջ կողմից՝ որպես անփույթ և անհավատարիմ քահանաների մահվան* նշան, ապա պարզվում է, որ 8580 ղևտացիներից 3 քահանաների հարաբերակցությունը կազմում է 2800-ից ընդամենը 1-ը։

---

* Որքան ավելի ու ավելի հստակ ենք գիտակցում, թե բնավորության որքան բարձր հատկանիշներ են պահանջվում բոլոր նրանցից, ովքեր երբևէ արժանանալու են հավերժական կյանքին ցանկացած հարթության վրա, և որքան քչերն են լրջորեն դավանում կամ փորձում իրագործել կատարյալ սերը՝ իբրև իրենց կյանքն ուղղորդող սկզբունք, զարմանում ենք, թե արդյո՞ք Ահարոնի երկու որդիները, որոնք ոչնչացվեցին Տիրոջ կողմից, նախատեսված չէին նախապատկերելու մեծաթիվ նվիրագործված և հոգուց ծնված մարդկանց, ովքեր չեն կարողացել հասնել սրտի՝ պահանջվող բարձր չափանիշին և հետևաբար չեն արժանանա որևէ կյանքի, այլ փոխարենը կընկղմվեն մոռացության, այն է՝ երկրորդ մահվան մեջ։

Այն փաստը, որ կան հավատացյալներ, որոնք փորձում են հեռացնել իրենց մեղքերը, ինքնին չի վկայում, որ նրանք «քահանաներ» են, քանի որ ղևտացիները, ինչպես նաև քահանաները պետք է կատարեն «սրտի թլփատություն»՝ «մարմնի կեղտը [մեղքերը] հեռացնելով»։ Այս ամենը խորհրդանշվում է «Գավթում» գտնվող ավազանով, որտեղ լվացվում էին թե՛ քահանաները, թե՛ ղևտացիները։ Ո՛չ էլ հեզության, մեղմության, բարեգործության և բարոյականության ոգին է անպայմանորեն ցույց տալիս Աստծուն նվիրվածությունը։ Այս հատկանիշները պատկանում են կատարյալ բնական մարդուն (Աստծու պատկերին), և երբեմն դրանք մասամբ պահպանվում են Անկման ավերից հետո։ Սակայն անվանական եկեղեցում նման նշանները հաճախ դիտվում են որպես լիակատար նվիրագործման ապացույց։

Նույնիսկ երբ մենք տեսնում ենք հավատացյալների, որոնք անձնուրացաբար բարի գործ են կատարում քաղաքական կամ բարոյական բարեփոխումների հարցում, սա Աստծուն նվիրվածության ապացույց չէ, այլ՝ գործին։ Աստծուն նվիրվածությունը ենթադրում է

ցանկացած աշխատանք ցանկացած վայրում. «Քո կամքը կատարել կամեցա, ո՛վ իմ Աստված»։ Թող Քո կամքը լինի Քո ճանապարհով։ Հետևաբար Աստծուն նվիրվածությունը երաշխավորում է Նրա խոսքով հայտնված Նրա ծրագրի փնտրտուք, որպեսզի կարողանանք սպառել և սպառվել Նրա համար և Նրա ծառայության մեջ՝ Նրա նախանշած և հայտնած ծրագրին համահունչ։

Մի՛ զարմացեք, ուրեմն, որ այդքան քչերն են տեսել խորանի փառահեղ գեղեցկությունները. միայն քահանաները կարող են տեսնել դրանք։ Ղևտացիները կարող են դրանց մասին իմանալ միայն դրանց նկարագրությունները լսելով։ Նրանք երբեք չեն տեսել թաքնված լույսն ու գեղեցկությունը, երբեք չեն կերել «առաջավորության հացը». երբեք անուշահոտ խունկ չեն մատուցել «ոսկե զոհասեղանի» վրա։ Ո՛չ. դրանք վայելելու համար նրանք պետք է անցնեն «Վարագույրով»՝ դեպի ամբողջական նվիրում Աստծուն, զոհաբերության միջոցով, Քավության օրվա ընթացքում։

«Սուրբ տեղի» ոսկե զոհասեղանը կարծես ներկայացնում է «փոքրիկ հոտը»՝ նվիրագործված Եկեղեցին իր ներկայիս զոհաբերական վիճակում։ Այս զոհասեղանից է բարձրանում Հիսուս Քրիստոսի միջոցով Աստծուն հաճելի անուշահոտ խունկը՝ քահանաների կամավոր ծառայությունը, նրանց գովաբանությունը, նրանց կամավոր հնազանդությունը. այն ամենն ինչ անում են, Աստծու փառքի համար է։ Նրանք, ովքեր այսպես Աստծուն հաճելի խունկ են մատուցում (Ա Պետ. 2:5), շատ են մոտենում իրենց Հորը՝ մոտենում «վարագույրին», որն առանձնացնում է «Սրբություն սրբոցը», և եթե նրանք խնդրանքներ ունեն, կարող են դրանք մատուցել խնկի հետ միասին՝ «շատ խունկ տրվեց, որպեսզի բոլոր սրբերին աղոթք մատուցի» (Հայտն. 8:3)։ Աստծու՝ այդպիսի քահանաների աղոթքներն արդյունավետ են։ Մեր Տեր Հիսուսն անընդհատ խունկ էր ծխում և կարող էր ասել. «Ես գիտեի, որ միշտ լսում ես ինձ» (Հովի. 11:42)։ Այսպիսով, կրտսեր քահանաները՝ «Նրա մարմնի անդամները», միշտ լսելի կլինեն, եթե անընդհատ Աստծուն հավատքի, սիրո և հնազանդության խունկ մատուցեն, և ոչ ոք չպետք է ակնկալի, որ իր խնդրանքները կլսվեն, եթե այսպես չպահի ուխտը. «Եթե ինձ հետ միավորված մնաք, իմ խոսքերն [ուսմունքներն] էլ ձեր մեջ մնան, ինչ որ կամենաք, խնդրեք, այն ձեզ կտրվի» (Հովի. 15:7)։ Քրիստոսի ուսմունքների հստակ ըմբռնման անհրաժեշտությունը՝ որպես մեր խնդրանքների և սպասումների

ուղեցույց, որպեսզի մենք «չար ձևով» և Աստծու ծրագրին հակառակ չխնդրենք, հստակորեն ցույց է տրված Սուրբ Գրքի այս հատվածում, բայց հազվադեպ է նկատվում։

Նախկինում քննարկված նախատիպերի միջոցով մենք որոշ բաներ սովորեցինք «Սրբություն սրբոցի» (կատարյալ, աստվածային վիճակի) փառքի մասին, որին մարդկանցից ոչ ոք չի կարող տեսնել (Ա Տիմոթ. 6։16), բայց որին «Քրիստոս Հիսուսով նոր արարածները», դառնալով Աստվածային բնության մասնակիցներ, ի վերջո կհասնեն, երբ Քրիստոսի ամբողջ Մարմնի՝ «Թագավորական Քահանայության» կողմից մատուցված խունկն ավարտվի, և անուշահոտության ամպը գնա նրանց առջևից՝ դեպի Եհովայի ներկայություն, որպեսզի նրանք ապրեն «վարագույրից» այն կողմ՝ ընդունելի լինելով Աստծուն Հիսուս Քրիստոսի՝ իրենց Տիրոջ միջոցով։

Սրբություն սրբոցի ներսում

Ուխտի տապանակը կամ «Վկայության տապանակը» Սրբություն սրբոցի միակ կահույքն էր (տե՛ս Եբր. 9։2-4 և Դիագլոտի ծանոթագրությունը)։ Դրա անունը ցույց է տալիս, որ այն պատկերում էր Եհովայի ծրագրի իրականացումը, որը Նա մտահղացել էր Իր մեջ նույնիսկ աստվածային արարչագործության սկզբից առաջ՝ նախքան Իր ծրագրի ամենափոքր մասի զարգացումը։ Այն ներկայացնում էր Աստծու հավերժական նպատակը՝ Քրիստոսի (Գլխի և Մարմնի) միջոցով մարդկության համար շնորհի հարստության նախասահմանումը Նրա կողմից՝ «թաքնված խորհուրդը»։* Հետևաբար այն ներկայացնում է Քրիստոս Հիսուսին և Նրա Հարսին՝ «փոքրիկ հոտին», որ աստվածային բնության մասնակիցները պետք է լինեն՝ լցված զորությամբ ու մեծ փառքով, որը մեր բարձր կոչման պարգևն է, մեր Տիրոջ և Նրա Մարմնի բոլոր անդամների առջև դրված ուրախությունը։

---

* Սուրբ Գրքի ուսումնասիրություններ, շարք 1, ուսումնասիրություն 5։

Ինչպես արդեն նշվեց, դա ոսկեպատ ուղղանկյուն տուփ էր, որը մարմնավորում էր փառավորված Եկեղեցուն շնորհված աստվածային բնությունը։ Այն պարունակում էր Օրենքի երկու տախտակները (Բ Օր.

31:26), Ահարոնի գավազանը, որը ծաղկեց (Թվ. 17:8) և մանանայի ոսկե սափորը (Ելք 16:32)։ Օրենքը ցույց էր տալիս, թե ինչպես է Քրիստոսը լիովին բավարարելու Աստծու կատարյալ օրենքի բոլոր պահանջները, ինչպես նաև այն, որ իրավական իշխանությունը տրվելու էր Նրան՝ որպես օրենքը կատարողի։

Օրենքի արդարությունն իրականում կատարվեց մեր Գլխի մեջ, և այն համարվում է կատարված նաև Քրիստոսով բոլոր նոր արարածների մեջ, «որ ոչ թե ըստ մարմնի ենք վարվում, այլ ըստ Հոգու», այսինքն՝ ովքեր քայլում են նոր մտքին հնազանդվելով (Հռոմ. 8:4)։ Հին բնության տկարությունները, որոնք մենք ամեն օր խաչում ենք մեր փրկագնով ծածկվելուց հետո, այլևս չեն վերագրվում մեզ որպես նոր արարածների, քանի դեռ մենք մնում ենք Քրիստոսի մեջ։

Երբ գրվում է, «որպեսզի օրենքի արդարությունը կատարվի մեր մեջ», նշանակում է, որ դա մեզ համար համարվում է մեր ընթացքի (կատարելագործման) ավարտը, քանի որ մենք հետևում ենք կամ գնում ենք դեպի այն իրական կատարելությունը, որը, երբ հասնենք դրան, կլինի Ուխտի տապանակով ներկայացված «Սրբություն սրբոցում» գտնվելու վիճակ։

Տապանակի պարունակությունը

«Ահարոնի ծաղկած գավազանը» ցույց էր տալիս Քրիստոսի ամբողջ Մարմնի ընտրյալ լինելը՝ որպես «թագավորական քահանայության» անդամներ։ Եթե կարդանք Թվ. 17-րդ գլուխը, կտեսնենք, որ ծաղկած գավազանի իմաստն այն էր, որ Եհովան ընդունեց Ահարոնին և նրա որդիներին՝ նախատիպային քահանաներին, Քրիստոսի և Եկեղեցու ներկայացուցիչներին, որպես միակներին, ովքեր կարող էին կատարել միջնորդի քահանայական պաշտոնը։ Ուստի այդ գավազանը ներկայացնում էր «թագավորական քահանայության»՝ Քրիստոսի՝ Գլխի և Մարմնի ընդունելիությունը։ Գավազանը ծաղկեց, և նուշ աճեցրեց։ Նշենու առանձնահատկությունն այն է, որ պտղի բողբոջները հայտնվում են տերևներից առաջ։ Այդպես է նաև «Թագավորական քահանայության» դեպքում. նրանք զոհաբերում են կամ սկսում են պտուղ տալ՝ նախքան գործերի տերևների հայտնվելը։

Մանանայի ոսկե սափորը խորհրդանշում էր անմահությունը՝

որպես Աստծու Քրիստոսի ունեցվածքներից մեկը։ Մեր Տեր Հիսուսն անկասկած սա նկատի ունի, երբ ասում է. «Հաղթողին թաքցված մանանայից կտամ՝ ուտի» (Հայտն. 2։17)։

Մանանան Իսրայելի կենսապահպան հացն էր, որը երկնքից իջավ։ Այն խորհրդանշում էր կենդանի հացը, որն Աստված Քրիստոսի միջոցով տվեց աշխարհին։ Բայց ինչպես իսրայելացիները պետք է ամեն օր մանանա հավաքեին, այլապես կարիքի մեջ կընկնեին և քաղցած կմնային, այնպես էլ աշխարհը ստիպված կլինի անընդհատ փնտրել կյանքի և շնորհի աղբյուրները, եթե ուզում է հավիտյան ապրել։

Սակայն նրանց, ովքեր դառնում են Քրիստոսի ժառանգակիցները, Օծյալ Մարմնի անդամները, Աստված առաջարկում է մանանայի մի յուրահատուկ տեսակ՝ նույնը, սակայն միևնույն ժամանակ տարբեր՝ ուրիշներին տրվողից. «թաքցված մանանան»։ Մանանայի այս սափորի առանձնահատկությունն այն էր, որ այն անապական էր, ուստի այն լավագույնս պատկերում է անմահ, անապական վիճակը, որը խոստացվել է «Սերնդի», այն է՝ Եկեղեցու բոլոր անդամներին։ Իսրայելացիների կերածմանանանկամկենսատուսնունդնանապական չէր, և ուստի պետք էր ամեն օր հավաքել։ Այդպես էլ մարդկանցից բոլոր հնազանդները, ովքեր ժամանակի ընթացքում կճանաչվեն որպես իսկական իսրայելացիներ, կստանան հավիտենական կյանք, բայց պայմանական, շնորհված և նորոգված, մինչդեռ «փոքրիկ հոտը», որը ներկայիս անբարենպաստ պայմաններում հավատարիմ «հաղթողներն» են, կստանա անապական բաժինը՝ անմահությունը* (Հայտն. 2։17)։

---

* Սուրբ Գրքի ուսումնասիրություններ, շարք 1, էջ 185։

Այստեղ ուրեմն ոսկե տապանակով ներկայացված էր այն փառքը, որը պետք է հայտնվեր աստվածային Քրիստոսի մեջ, ծաղկած գավազանով ներկայացված էր Աստծու կողմից ընտրված քահանայությունը, Օրենքի տախտակներով՝ արդար Դատավորը, ոսկե սափորի անապական մանանայով՝ անմահությունը, աստվածային բնությունը։ Տապանակի վերևում, իբրև դրա կափարիչ, գտնվում էր «Քավությունը»՝ մաքուր ոսկուց մի թիթեղ, որի երկու ծայրերին, նույն մետաղի կտորից, պատրաստված էին երկու քերովբեներ՝

բարձրացված թևերով, կարծես թռիչքի պատրաստ, իսկ նրանց դեմքերն ուղղված էին դեպի ներս՝ դեպի այն թիթեղի կենտրոնը, որի վրա կանգնած էին։ Քերովբեների միջև, Քավության վրա ընկած պայծառ լույսը խորհրդանշում էր Եհովայի ներկայությունը։

Ինչպես որ տապանակը ներկայացնում էր Քրիստոսին, այնպես էլ «Քավությունը», փառքի լույսը և քերովբեները միասին ներկայացնում էին Եհովա Աստծուն. «Քրիստոսի գլուխը՝ Աստված» (Ա Կորնթ. 11։3)։ Ինչպես Քրիստոսը, այնպես էլ Եհովան այստեղ ներկայացված է այնպիսի բաներով, որոնք արտացոլում են Նրա բնավորության գծերը։ «Շեքինայի փառք» կոչվող լույսը ներկայացնում էր հենց Եհովային՝ որպես տիեզերքի Լույս, քանի որ Քրիստոսն աշխարհի Լույսն է։ Սուրբ Գրքի բազմաթիվ հատվածներ առատորեն վկայում են դրա մասին. «փայլի՛ր դու, որ նստում ես քերովբեների վրա» (Սաղմ. 80։1, Ա Թագ. 4։4, Բ Թագ. 6։2; Ես. 37։16)։

Մարդկությունը չի կարող մտնել Եհովայի ներկայության մեջ, հետևաբար թագավորական քահանան՝ Գլուխն ու Մարմինը, որոնք ներկայացված են Ահարոնի կողմից, պետք է դառնան նոր արարածներ՝ «աստվածային բնության մասնակիցներ» (մարդկային բնությունը խաչած և թաղած), նախքան այդ գերագույն փառքի ներկայության մեջ հայտնվելը։

Ոսկե թիթեղը, որը կոչվում էր «Քավություն» (քանի որ դրա վրա քահանան մատուցում էր զոհերի արյունը, որը հաշտեցնում կամ բավարարում էր աստվածային արդարության պահանջները), ներկայացնում էր Եհովայի բնավորության հիմնարար սկզբունքը՝ արդարությունը։ Աստծու գահը հիմնված կամ հաստատված է Արդարության վրա։ «Արդարությունը և իրավունքը քո աթոռի հաստատությունն են» (Սաղմ. 89։14; Հոբ 36։17, 37։23, Ես. 56։1, Հայտն. 15։3)։

Պողոս առաքյալը, մեր Տեր Հիսուսի մասին խոսելիս, օգտագործում է Քավության հունարեն համարժեքը (hilasterion). «Աստված նրան նախապես սահմանեց քավություն* [Քավություն]…, որպեսզի ցույց տա իր արդարությունը…, որպեսզի ինքն արդար լինի և արդարացնի նրան, ով հավատում է Հիսուսին» (Հռոմ. 3։25, 26)։ Այս միտքը համահունչ է նախորդ մեկնաբանությանը։ Արդարությունը, Իմաստությունը, Սերը և Զորությունը պատկանում են Աստծուն, ինչպես նաև այն ծրագիրը, որով

դրանք բոլորը համագործակցում են մարդկանց փրկության գործում, բայց Աստված հաճեց, որ Իր սիրելի Որդու՝ մեր Տեր Հիսուսի մեջ Նրա ամբողջ լիությունը բնակվի և ներկայացվի մարդկությանը։ Ուստի նախատիպում Սրբություն սրբոցից դուրս եկող Քահանայապետը մարդկանց հանդեպ Եհովայի արդարության, իմաստության, սիրո և զորության կենդանի ներկայացուցիչն էր՝ աստվածային ողորմության, ներման և հաշտության կենդանի ներկայացուցիչը։ Թեև աստվածային էությունը ծածկված է, մարդու աչքերից թաքնված, սակայն Նրա աստվածային հատկանիշները պետք է հայտնվեն բոլոր մարդկանց մեր մեծ Քահանայապետի կողմից, որը որպես կենդանի Քավություն՝ մոտենալու է մարդկությանն այս դարաշրջանի վերջում և բոլորին ճանաչեցնի աստվածային շնորհի հարստությունը։

---

* Common Version Bible-ի թարգմանիչները hilasterion-ը սխալմամբ թարգմանել են որպես «քավություն». hilasmos բառը, որը նշանակում է բավարարվածություն, թարգմանվել է իբրև «քավություն» Ա Հովհաննես 2:2 և 4:10 համարներում։

Երկու քերովբեները խորհրդանշում էին Եհովայի բնավորության երկու այլ տարրեր՝ հայտնված Նրա Խոսքում, դրանք են. աստվածային Սերը և աստվածային Զորությունը։ Այս հատկանիշները՝ Արդարությունը՝ հիմնարար սկզբունքը, ինչպես նաև Սերն ու Զորությունը, որոնք ունեն նույն հատկանիշը կամ էությունը և բխում են դրանից, կատարյալ ներդաշնակության մեջ են։ Դրանք բոլորը պատրաստված են մեկ կտորից՝ դրանք լիովին մեկ են։ Ո՛չ Սերը, ո՛չ Զորությունը չեն կարող գործել, քանի դեռ Արդարությունը լիովին բավարարված չէ։ Հետո նրանք թռչում են՝ օգնելու, բարձրացնելու և օրհնելու։ Նրանք թռչելու վրա էին, պատրաստ էին, բայց սպասում էին՝ նայելով ներս՝ դեպի «Քավությունը», դեպի Արդարությունը, որպեսզի իմանային, թե երբ շարժվեն։

Քահանայապետը, երբ մոտենում էր քավության զոհերի արյունով, այն չէր դնում քերովբեների վրա. ո՛չ աստվածային Զորությունը, ո՛չ էլ աստվածային Սերն ինքնին զոհաբերություն չէին պահանջում, ուստի քահանայապետը կարիք չուներ քերովբեների վրա ցողելու։ Արդարությունն Աստծու այն որակը կամ հատկանիշն է, որը երբեք չի արդարացնի մեղավորին, քանի որ հենց Արդարությունն է ասել. «մեղքի հատուցումը մահն է»։ Հետևաբար, երբ Քահանայապետը

փրկագին տա մեղավորների համար, Նա պետք է այն վճարի հենց Արդարությանը։ Այստեղից էլ գալիս է «Քավությունը» արյունով ցողելու արարողության նպատակահարմարությունը։

Սերը փրկագնման ողջ ծրագրի հիմքն էր։ Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ ուղարկեց Իր միածին Որդուն այն փրկելու՝ փրկագինը վճարելով Արդարությանը։ Հետևաբար Սերը գործում է և նախապատրաստվում է փրկագործությանը մեղքի՝ աշխարհ մտնելուց ի վեր, այո՛, «նախքան աշխարհի ստեղծումը» (Ա Պետ. 1:20)։

«Սերը նախ միջոց հնարեց՝ փրկելու ապստամբ մարդուն»

Երբ Քավության օրվա զոհաբերությունները (զվարակը և նոխազը) ավարտվեն, Սերը կմնա՝ տեսնելու իր ծրագրի արդյունքները։ Երբ արյունը ցողվի, Արդարությունը կբղավի. «Բավական է, կատարված է»։ Ապա կգա այն պահը, երբ Սերն ու Զորությունը կարող են գործել, և արագ օդ բարձրանալ՝ օրհնելու փրկագնված ցեղին։ Երբ Արդարությունը բավարարվի, Զորությունը կսկսի իրականացնել իր առաքելությունը, որը համընկնում է Սիրո առաքելության հետ՝ օգտագործելով նույն միջոցը. Քրիստոսին՝ աստվածային օրհնությունների տապանակը կամ պահոցը։

Այս աստվածային ընտանիքի՝ Որդու և Նրա Հարսի, որոնք ներկայացված են Տապանակով, հարաբերությունն ու միասնությունը Կափարիչով ներկայացված Հոր հետ երևում էր այն փաստից, որ «Քավությունը» Տապանակի կափարիչն էր և հետևաբար դրա մի մասը՝ գլուխը։ Ինչպես Եկեղեցու գլուխը Քրիստոս Հիսուսն է, այնպես էլ ողջ Քրիստոսի գլուխն Աստված է (Ա Կոր. 11:3)։ Սա այն միասնությունն է, որի համար Հիսուսն աղոթեց, ասելով. «Ես նրանց համար եմ խնդրում և ոչ աշխարհի, նրանց համար, որոնց ինձ տվեցիր», «որպեսզի բոլորը մեկ լինեն, ինչպես դու, Հա՛յր, իմ մեջ, և ես՝ քո մեջ. որպեսզի նրանք էլ մեր մեջ լինեն, որպեսզի աշխարհը [այն ժամանակ] հավատա» (Հովհ. 17:9, 21)։

Անարատ քահանան

Կարևոր է նաև նշել, որ քահանայության ցանկացած անդամ, որն ուներ աչքի, ձեռքի, քթի, ոտքի կամ մարմնի որևէ մասի արատ, չէր կարող զբաղեցնել քահանայի (քահանայապետի) պաշտոնը, ինչպես նաև այն անձը, ով ուներ որևէ տեսակի ավելցուկ, օրինակ՝ ձեռքի կամ

ոտքի վրա լրացուցիչ մատ։

Սա սովորեցնում է, որ Քրիստոսի փառավորված Մարմնի յուրաքանչյուր անդամ պետք է լինի կատարյալ. ոչ մի թերություն չունենա, ինչպես նաև, որ այս «փոքրիկ հոտը» չպետք է լինի ո՛չ չափազանց շատ, ո՛չ էլ չափազանց քիչ, այլ հենց այն թվաքանակով, որը նախահայտ և նախասահմանված էր։ Երբ Քրիստոսի Մարմինն ամբողջանա, այլևս չի լինի որևէ լրացում՝ որևէ ավելորդություն։ Ուստի բոլոր նրանք, ովքեր «կոչվել» են այս «բարձր կոչմանը»՝ դառնալու Քրիստոսի Մարմնի հատուկ անդամներ, և ընդունել են այն, պետք է անկեղծորեն ձգտեն իրենց կոչումն ու ընտրությունը (որպես այս «փոքրիկ հոտի» անդամներ) դարձնել հաստատուն՝ այնպե՛ս վազելով, որ մրցանակի հասնեն։ Եթե նրանցից որևէ մեկն անփույթ լինի և բաց թողնի մրցանակը, նրա փոխարեն կհաղթի մեկ ուրիշը, քանզի Մարմինը պետք է լինի ամբողջական. ոչ մի անդամ չպետք է պակասի, ոչ մի անդամ չպետք է ավելորդ լինի։ Զգո՛ւյշ եղիր, «որպեսզի ոչ ոք քո պսակը չվերցնի» (Հայտն. 3:11)։

«Այն խորհուրդը, որ ծածկված էր դարեր և սերունդներ շարունակ»

—Կող. 1:26—

Ոմանք զարմանում են, որ խորանի փառքն ու գեղեցկությունը՝ դրա ոսկե պատերը, դրա ոսկե և գեղեցիկ փորագրված կահույքը, դրա նրբահյուս վարագույրները, պետք է լիովին ծածկված և թաքնված լինեին մարդկանց աչքերից։ Նույնիսկ դրսից եկող արևի լույսը բացառված էր. լույսի միակ աղբյուրը Սուրբ տեղի կանթեղն էր և Շեքինայի փառքը՝ Սրբություն սրբոցում։ Բայց սա կատարելապես համապատասխանում է այն դասերին, որ սովորել ենք դրա ծառայությունների մասին։ Ինչպես Աստված ծածկում էր նախատիպը և թաքցնում դրա գեղեցկությունը վարագույրների և կոպիտ, տգեղ մորթիների տակ, այնպես էլ հոգևոր բաների փառքն ու գեղեցկությունը տեսանելի են միայն նրանց համար, ովքեր մտնում են նվիրագործված վիճակի՝ «Թագավորական Քահանայության» մեջ։ Նրանք մտնում են մի թաքնված, բայց փառահեղ վիճակի մեջ, որն աշխարհը և բոլոր դրսում գտնվողները չեն կարող գնահատել։ Նրանց փառահեղ հույսերը, ինչպես նաև նրանց դիրքը որպես նոր արարածներ, թաքնված են շրջապատից։